

Ս. Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ

ԹԻՉՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ

ՆՐԱ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

“ Զ Ա Յ Ա Ս Տ Ա Ն ”

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ԹՈՋՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

A 32862



Գիրքը նվիրված է թռչնաբուծության ինտենսիվացման, մասնագիտացման և տեղաբաշխման հարցերին, մասնավորապես արդյունաբերական թռչնաբուծության զարգացման կոնկրետ խնդիրներին Հայաստանի պայմաններում:

Աշխատության մեջ ընդհանրացված է գիտության վերջին նվաճումները և առաջավոր արտադրական փորձն արդյունաբերական թռչնաբուծության կազմակերպման, էկոնոմիկայի ու կենսաբանական հիմունքների բնագավառում:

Այն գրված է անասնաբուծության, հատկապես թռչնաբուծության բնագավառում աշխատող արտադրական կադրերի, մասնագետների և ղեկավար աշխատողների համար:

Карапетян Саак Карапетович
ПРОМЫШЛЕННОЕ ПТИЦЕВОДСТВО И
ПУТИ ЕГО РАЗВИТИЯ

(На армянском языке)

Издательство "Айастан"

Ереван, 1966

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տասնամյակներում թռչնաբուծությունը, որպես գյուղատնտեսական արտադրության ինքնուրույն ճյուղ, զարգացման մեծ ճանապարհ է անցել թե՛ արտասահմանյան առաջավոր երկրներում և թե՛ մեզ մոտ՝ Սովետական Միությունում: Եվ դա պատահական չէ: Բանն այն է, որ գյուղատնտեսական թռչունները, շնորհիվ իրենց մի շարք արժեքավոր տնտեսա-բիոլոգիական առանձնահատկությունների, շատ արդյունավետ են և շահութաբեր: Ընտանի թռչունները բոլոր գյուղատնտեսական կենդանիներից առավել վաղահաս են, ունեն բարձր պտղատվություն և լավ հատուցում են կերը: Ձվատու ուղղության ցեղերի հավերը ձվարկումն սկսում են դեռ 5—5,5 ամսական հասակում և հենց ճտահանման տարում տալիս են մինչև 100 և ավելի ձու: Նրանք ունեն բազմացման շատ բարձր գործակից՝ մեկ ածան հավը տարվա ընթացքում կարող է արտադրել մինչև 100—150 սերունդ, իսկ իր սերնդի հետ միասին՝ մինչև 1000 և ավելի մատղաշ: Կապիտալ ներդրումները թռչնաբուծության մեջ երկու-երեք անգամ ավելի, արագ են հտ գնվում, քան անասնաբուծության մյուս ճյուղերում: Թռչնաբուծությունից ստացվող մթերքները աչքի են ընկնում բարձր սննդարարությամբ, կենսաբանական լիարժեքությամբ և դիետիկ հատկություններով: Բնակչության պահանջն այդ մթերքների նկատմամբ մշտական է և գնալով աճում է:

Դրանով էլ հենց բացատրվում է թռչնաբուծական մթերքների արտադրության ծավալի անընդհատ մեծացումը:

Ահա մի քանի թվեր: Եթե 1955 թ. ձվի համաշխարհային արտադրանքը կազմում էր 180 միլիարդ հատ, ապա 1961 թ. այն հասավ 248,9 միլիարդի: Թռչնաբուծական մթերքների արտադրությունը առանձնապես մեծ ծավալ ունի այն երկրներում, որտեղ գյուղատնտեսության այդ ճյուղը վարվում է ինտենսիվ եղանակներով և խորը մասնագիտացված է: Այդ տեսակետից առանձնապես աչքի են ընկնում Ամերիկայի Միացյալ Նահանգները, Ճապոնիան և Հոլանդիան: Դեռ 1955 թ. ԱՄՆ-ում արտադրվում էր 68,5 միլիարդ ձու, կամ համաշխարհային արտադրանքի 37,4 տոկոսը, 1952 թ. այդ երկրում արտադրվեց 886 միլիոն հատ մսացու ճտեր (բրոյլերներ) միջինը մոտ 1,5 կիլոգրամ կենդանի քաշով, իսկ 1961 թ. բրոյլերների արտադրությունը հասավ 2 միլիարդի: Էլ ավելի բնորոշ է Հոլանդիայի օրինակը: Այդ երկիրը իր տերիտորիայով աշխարհի ամենափոքր, բայց շատ խիտ բնակեցված երկրներից մեկն է (ունի ընդամենը 34 հազար քառակուսի կիլոմետր տարածություն, իսկ բնակչության թիվը հասնում է մոտ 12 միլիոնի):

1962 թ. այդ երկրում արտադրվեց 6 միլիարդ ձու, կամ երկու անգամ ավելի, քան արտադրվել էր 1954 թվականին: Ուշադրության արժանի է նաև այն փաստը, որ ձվի համաշխարհային արտահանման մեջ Հոլանդիան առաջին տեղն է գրավում. նրա տեսակարար կշիռը կազմում է մոտ 50 տոկոս: Այսպիսի ցուցանիշների հասնելը, իհարկե, անհնար կլիներ առանց տնտեսության այդ ճյուղի հետևողական մասնագիտացման՝ արդյունաբերական հիմքի վրա:

Սովետական Միությունում արդյունաբերական տիպի առանձին թռչնաբուծական տնտեսություններ ստեղծվեցին Մոսկվայի շրջակայքում դեռ 1930-ական թվականներին, բայց երկար տարիներ նրանց փորձը լայն տարածում չէր ստանում: Միայն 1950-ական թվականներից երկրում սկսեցին կառուցվել զգալի թվով խոշոր մասնագիտացված տնտեսություններ՝ թռչնաբուծական ֆաբրիկաներ, սովխոզներ: Ներկայումս միայն թռչնաբուծական ֆաբրիկաների թիվը 100-ից անցնում է:

Պետք է ասել, որ մեր ռեսպուբլիկան առաջիններից մեկն էր, որ սկսեց ներդնել թռչնաբուծության ինտենսիվ եղանակ-

ները: Առաջին թռչնաբուծական ֆաբրիկան (էջմիածին) ստեղծվեց 1955 թ.: 1957 թ. Լենինականի ոչ մեծ թռչնաբուծական սովխոզը նույնպես վերածվեց ֆաբրիկայի: Երկու տարի անց կառուցվեց և շահագործման հանձնվեց Երևանի թռչնաբուծական ֆաբրիկան և կազմակերպվեց Գետամիջի սովխոզը, միաժամանակ ձեռնարկվեց Շահումյանի միջկուլտրնտեսային և Լուսաղբյուրի պետական թռչնաբուծական ֆաբրիկաների կառուցումը: Սրանք արդյունաբերական թռչնաբուծության առաջին օջախներն էին, որոնց աշխատանքի փորձը պետք է հիմք հանդիսանար այդ առաջավոր եղանակի լայն տարածման համար: Սակայն պետք է ասել, որ թռչնաբուծության ինտենսիվացումը մեր երկրում մինչև վերջին տարիները շատ դանդաղ էր ընթանում և արտադրանքի ծավալը խիստ ետ էր մնում ժողովրդական տնտեսության պահանջներից: Ներկայումս, երբ գյուղատնտեսության վերելքի գլխավոր ուղղությունը, նրա արտադրական ուժերի զարգացման մայրուղին դարձել է գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացումը և մասնագիտացումը, թռչնաբուծության զարգացումը պետք է ընթանա խոշոր ֆաբրիկաների, թռչնաբուծական սովխոզների և կոլտնտեսային ֆերմաների ցանցի ընդլայնման ուղիով: Հատուկ ուշադրության է արժանի թռչնաբուծական մթերքների արտադրությունը արդյունաբերական հիմունքներով: Խոշոր մասնագիտացված թռչնաբուծական ֆաբրիկաների և սովխոզների ստեղծումը և թռչնաբուծությունը վարելու ինտենսիվ եղանակների օգտագործումը հնարավորություն կտա մոտակա տարիներում կերերի և աշխատանքի համեմատաբար քիչ ծախսումով մեծ չափերով ավելացնել այնպիսի կարևոր սննդամթերքների արտադրությունը, ինչպիսիք են ձուն և թռչունի միսը: Թռչնաբուծության կարևորագույն խընդիրն այն է, որպեսզի ամեն կերպ բարձրանա թռչունների մթերատվությունը և մաքսիմալ քանակի մթերք ստացվի կերերի և աշխատանքի խնայողաբար ծախսումով:

ՍՄԿՊ Կենտրոնական կոմիտեն և Սովետական Միության կառավարությունը վերջին տարիներս բացառիկ մեծ ուշադրություն են նվիրում այդ պրոբլեմի գործնական լուծմանը: 1964 թ. սեպտեմբերի 3-ին ընդունված որոշումով ՍՄԿՊ

Կենտրոնը և ՍՍՌ Միենիստրներին սովետը կոնկրետ միջոցա-
ռումներ մշակեցին առաջիկա 5—7 տարում արդյունաբերա-
կան թռչնաբուծության հզոր բազա ստեղծելու և թռչնաբուծա-
կան մթերքների արտադրությունը արագ տեմպերով ընդլայ-
նելու համար: Բավական է ասել, որ 1970 թ. թռչնաբուծական
ֆաբրիկաները և մասնագիտացված սովխոզները կարտադրեն
15,4 միլիարդ ձու և մինչև 811 հազար տոննա թռչունի միս: Այդ
նպատակով երկրում կկառուցվեն և կընդլայնվեն 788 խոշոր
ֆաբրիկաներ, որոնցից շատերը տարեկան կարտադրեն 100
միլիոն և ավելի ձու: 1970 թ. միայն թռչնաբուծական ֆաբ-
րիկաները, մասնագիտացված սովխոզները և կոլտնտեսային
ու չմասնագիտացված սովխոզների ֆերմաները կարտադրեն
30 միլիարդ ձու, որի մոտ 95—96 տոկոսը կօգտագործվի
բնակչության պահանջը բավարարելու համար: Այդ թվի մա-
սին պարզ պատկերացում ունենալու համար բավական է հի-
շել, որ 1963 թ. ՍՍՌՄ-ում տնտեսությունների բոլոր կատե-
գորիաներում միասին վերցրած (այսինքն ֆաբրիկաներում,
սովխոզներում, կոլտնտեսություններում և կոլտնտեսականնե-
րի, բանվորների ու ծառայողների անձնական տնտեսությու-
ններում) արտադրվել էր 30,1 միլիարդ ձու, այդ թվում ֆաբ-
րիկաներում և սովխոզներում՝ 3,3 միլիարդ: Այդ քանակից
պետության կողմից մթերվել էր ընդամենը 8,7 միլիարդ ձու:

Ներկայումս ծավալված շինարարության տեմպերը խոսում
են ընդունված ծրագրի ռեալության մասին: Արդեն ընթացիկ
տարվա վերջին շահագործման կհանձնվեն 82 նոր խոշոր
թռչնաբուծական ֆաբրիկաներ և դրանց ընդհանուր քանակը
կհասնի 190-ի, այն ժամանակ, երբ անցած 33—34 տարինե-
րի ընթացքում երկրում կառուցվել էր ընդամենը մոտ 100
ֆաբրիկա:

Առաջիկա 5—6 տարում Հայաստանում նույնպես ուժեղ
թափով կզարգանա արդյունաբերական թռչնաբուծությունը:
1965—1970 թթ. ընթացքում ռեսպուբլիկայում կկառուցվեն
10 նոր խոշոր թռչնաբուծական ֆաբրիկաներ, զգալիորեն ընդ-
լայնվելու են գոյություն ունեցող ֆաբրիկաները: Միաժամա-
նակ արագ տեմպերով զարգանալու է համակցված կերային
արդյունաբերությունը, մաքսիմալ շափով կմեքենայացվեն

տեխնոլոգիական բոլոր պրոցեսները: 1964 թ. համեմատությամբ 1970 թ. ձվի արտադրությունը միայն ֆաբրիկաներում կաճի 6 անգամ՝ հասնելով 90 միլիոնի, իսկ թռչունի մսի արտադրողականությունը՝ ավելի քան 13 անգամ՝ 400՝ տոննայից հասնելով 5.500 տոննայի:

Նոր ֆաբրիկաների կառուցումը և գոյություն ունեցող համեմատաբար ոչ մեծ ֆաբրիկաների ընդլայնումը կատարում են խոշոր շինարարական կազմակերպությունները:

Արդյունաբերական հիմունքներով ձվի և թռչունի մսի արտադրության օրինակելիորեն կազմակերպելու կարևոր պայմաններից մեկը թռչնաբուծական տնտեսությունների մատակարարումն է լիարժեք համակցված կերով: Կենտրոնական Կոմիտեի և ՍՍՌՄ Միներալների սովետի վերը նշված որոշման համաձայն ֆաբրիկաների և մասնագիտացված սովխոզների կառուցմանը զուգընթաց ստեղծվում է համակցված կերային հզոր արդյունաբերություն, որը պետք է լիովին ապահովի այդ տնտեսությունների պահանջը բարձրորակ, ըստ սննդարար նյութերի բաղանսավորված համակցված կերերով: Միաժամանակ գործնական միջոցառումներ են մշակվել խոշոր թռչնաբուծական տնտեսություններում աշխատատար պրոցեսները մեքենայացնելու ուղղությամբ: Ստեղծվում են մեքենաների ամբողջական կոմպլեկտներ, որոնք կարող են տեղադրվել և շահագործվել ընդամենը մի քանի օրում: Համապատասխան գիտական հիմնարկների առջև խնդիր է դրված թռչնաբուծական տնտեսությունները լրիվ ավտոմատացնելու և ստեղծելու մեխանիզմների այնպիսի կոմպլեքսներ, որոնք մարդու հսկողության ներքո կամ, առանց նրա մասնակցության, ավտոմատորեն կատարեն բոլոր տեխնոլոգիական պրոցեսները: Կայն արտադրական փորձերով հաստատված է, որ միայն կերեր բաժանող սարքերի ավտոմատացումը 3—5 անգամ բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը և զգալիորեն կրճատում է կերերի կորուստը:

Գիտնականների առջև խնդիր է դրված մշակելու տոհմային-սելեկցիոն աշխատանքի առավել կատարելագործված եղանակներ՝ համեմատաբար կարճ ժամանակամիջոցում թռչունների բարձր մթերատու գծեր ստեղծելու և եղածները կա-

տարեկա գործելու ուղղութեամբ, հմտորեն օգտագործելով ժամանակակից գեներտիկայի նվաճումները:

Գործունեութեան լայն ասպարեզ է բացվում գիտականորեն հիմնավորված կերային նորմաների մշակման, կերային սպիտակուցների, բարձր արդյունավետ խթանիչների և այլ հարստացուցիչների արդյունաբերական արտադրութեան կազմակերպելու ուղղութեամբ ոչ սննդային հումքից: Այդ տեսակետից բացառիկ կարևոր նշանակութիւն է ձեռք բերում անփոխարինելի ամինաթթուների, մասնավորապես լիզինի և մետիոնինի արտադրութիւնը՝ արդյունաբերական միկրոբիոլոգիական սինթեզի եղանակով: Դեռ չլուծված մի շարք հարցեր կան կապված թռչունների պահվածքի ինտենսիվ եղանակների կիրառման հետ: Վանդակային պահվածքի եղանակը, որը գերազանցապես կիրառվում է թռչնաբուծական ֆաբրիկաներում, պահանջում է անպայման հաշվի առնել թռչունի բիոլոգիան: Գյուղատնտեսական թռչունների բիոլոգիական առանձնահատկութիւնների և արտաքին միջավայրի պայմանների նկատմամբ (լույսային օրվա երկարութիւնը, թռչնանոցի ջերմաստիճանը և խոնավութիւնը, օդի մաքրութիւնը և այլն) նրանց պահանջի հաշվառումը և բավարարումը հնարավորութիւն կտա մաքսիմալ չափերով օգտագործելու նրանց ֆիզիոլոգիական ունակութիւնները և ստանալու բարձր մթերատվութիւն: Զպետք է մոռանալ, օրինակ, որ ձուն և միսը բուլորովին տարբեր մթերքներ են, դրանց գոյացման ֆիզիոլոգիան արմատապես տարբերվում է միմյանցից: Հետևաբար, ձվի և մսի արտադրութիւնը պահանջում է հատուկ կազմակերպում և սպեցիֆիկ տեխնոլոգիա: Այս հարցերի գիտականորեն մշակումը և արտադրութեան մեջ ներդրումը մեծ խթան կհանդիսանա արդյունաբերական թռչնաբուծութեան զոռտեխնիկական և տնտեսական արդյունավետութիւնը բարձրացնելու գործում:

ՍՄԿՊ մարտյան (1965 թ.) պլենումը կոնկրետ և անհետաձգելի միջոցառումներ մշակեց գյուղատնտեսութեան արագ վերելքի համար՝ լայն էկոնոմիկական բազայի վրա: Կոլտրնտեսային և սովխոզային արտադրութեան արագ զարգացման համար ստեղծվել են նյութական շահագրգռման ունակ խթան:

նիշներ, գործի են դրվել գյուղատնտեսական արտադրութեան էկոնոմիկական օրենքները, որոնք անցյալում անհիմն կերպով անտեսվում էին: Մեծ հնարավորութիւններ են ստեղծվում թռչնաբուծական մթերքների արտադրութեան արագ աճի համար: Այս խնդրի հաջող լուծման գործում վճռական դեր է խաղալու թռչնաբուծութեան ինտենսիվացումը և ձվի ու մսի արտադրութիւնը արդյունաբերական հիմքի վրա: Թռչնաբուծութեան ինտենսիվ եղանակներով վարելը գյուղատնտեսական արտադրութեան այդ ճյուղը ըստ էութեան վեր է ածում արդյունաբերական արտադրութեան մի առանձնահատուկ տարբերատեսակի, որի շնորհիվ վերանում է թռչնաբուծական մթերքների արտադրութեան սեզոնային բնույթը, որը գյուղատնտեսական արտադրութեան պատուհասն է: Միանգամայն տրամաբանական է, որ արդյունաբերական տիպի թռչնաբուծական ձեռնարկութիւնները հենց ֆաբրիկաներ են կոչվում: Անվիճելիորեն ապացուցված է, որ առավել բարձր տնտեսական արդյունավետութիւն և շահութաբերութիւն ունեն այնպիսի խոշոր մասնագիտացված թռչնաբուծական տնտեսութիւնները, որտեղ միայն ածանցների գլխաքանակը հասնում է 100—250 հազարի, անգամ մինչև 500 հազարի և մեկ միլիոնի: Տնտեսագետների հաշվարկումները և մի շարք ձեռնարկութիւնների աշխատանքի փորձը հաստատում են, օրինակ, որ 250 հազար ածան ունեցող ֆաբրիկան արտադրում է տարեկան 50 միլիոն ձու և 700 տոննա թռչունի միս՝ 7 միլիոն 200 հազար ռուբլի ընդհանուր արժեքով և 3 միլիոն 400 հազար ռուբլի ինքնարժեքով: Այլ կերպ ասած, այդպիսի ձեռնարկութիւնը տարեկան տալիս է 3 միլիոն 800 հազար ռուբլու շահույթ, կամ ֆաբրիկայի կառուցման և սարքավորման վրա ծախսված ամբողջ գումարի (5 միլիոն ռուբլի) մոտ 70 տոկոս:

Այդպիսի ձեռնարկութիւնը իր բավականին բարդ տեխնոլոգիական պրոցեսներով ղեկավարելու համար պահանջվում են խոր գիտելիքներ, ընդ որում ոչ միայն գործնական, այլ ոչ պակաս շափով նաև տեսական:

Ցավոք սրտի թռչնաբուծութեան ինտենսիվացման, նրա կազմակերպման և էկոնոմիկայի, արդյունաբերական թռչնաբուծութեան առանձնահատկութիւնների, ինչպես նաև ինտեն-

սիվ եղանակներով պահվող թռչունների կերակրման և խնամ-
քի, տոհմային գործի կազմակերպման և մի շարք այլ հար-
ցերի վերաբերյալ մայրենի լեզվով շատ քիչ գրականություն
կա, եղածն էլ արդեն բավականին հնացել է:

Ներկայացնելով այս գրքույկը հրատարակության, մենք
նպատակ ենք ունեցել հնարավորին չափ լրացնել այդ բացը:
Նշելով մեր ռեսպուբլիկայի բնատնտեսական պայմաննե-
րից, ինչպես նաև գիտության նվաճումներից ու առաջավոր
տնտեսությունների փորձից, աշխատել ենք լուսաբանել թռչ-
նաբուծության ինտենսիվացման հետ կապված հիմնական
հարցերը և արդյունաբերական թռչնաբուծության զարգացման
ուղիները Հայաստանում:

Գրքույկը բաղկացած է 8 գլուխներից, որտեղ լուսաբան-
վում են թռչնաբուծության ինտենսիվացման ժողովրդատնտե-
սական նշանակությունը, թռչնաբուծության մասնագիտացման
և տեղաբաշխման հարցերը Հայկական ՍՍՌ-ում, արդյունա-
բերական թռչնաբուծության կազմակերպման և էկոնոմիկայի
հարցերը, թռչունների պահվածքի ինտենսիվ եղանակները Հա-
յաստանի պայմաններում, տոհմային աշխատանքի նշանա-
կությունը և կազմակերպումը արդյունաբերական թռչնաբու-
ծության մեջ, թռչունների լիարժեք կերակրումը և կերի բազայի
ամբապնդման ուղիները, աշխատանքի կազմակերպման և
վարձատրության հարցերը արդյունաբերական տիպի թռչնա-
բուծական տնտեսություններում և, վերջապես, գյուղատնտե-
սական թռչունների գլխաքանակի աճի ու մթերքների ար-
տադրության ծավալի ավելացման ուղիները հեռանկարային
շրջանում:

**ԹՌՉՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՆՍԻՎԱՑՄԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Գյուղատնտեսության հետևողական ինտենսիվացումը, որպես հիմնական արտադրամիջոց և հասարակության կյանքի կարևոր աղբյուրներից մեկը, ելնում է հողի ուրույն առանձնահատկություններից: Հողի դերը առանձնապես մեծ է գյուղատնտեսության մեջ, որտեղ նա ոչ միայն արտադրության հիմնական միջոց է հանդիսանում, այլև վճռական ազդեցություն է գործում արդյունաբերության զարգացման ողջ ընթացքի վրա:

Վ. Ի. Լենինն իր «Կապիտալիզմի զարգացումն Ռուսաստանում» աշխատության մեջ գրում է. «Հողագործության բուն իսկ բնույթի համաձայն նրա ապրանքային արտադրություն դառնալը կատարվում է ուրույն ճանապարհով, որը նման չէ ինդուստրիայի մեջ կատարվող համապատասխան պրոցեսին: Մշակող արդյունաբերությունը բաժանվում է առանձին, միանգամայն ինքնուրույն ճյուղերի, որոնք բացառապես նվիրված են մեկ պրոդուկտի, կամ նրա մեկ մասի արտադրությանը: Իսկ հողագործության արդյունաբերությունը չի բաժանվում միանգամայն առանձին ճյուղերի, այլ միայն մասնագիտացվում է, մի դեպքում շուկայական մեկ պրոդուկտի, մյուս դեպքում՝ շուկայական մի այլ պրոդուկտի արտադրության մեջ, ընդ որում գյուղատնտեսության մնացած կողմերը

հարմարվում են այդ գլխավոր (այսինքն շուկայական) պրո-
դուկտին»¹։

Արդյունաբերական ձեռնարկության յուրաքանչյուր ճյու-
ղում արտադրանքի ծավալը կարելի է ավելացնել՝ սակավար-
դյուն մեքենաները և հաստոցները փոխարինելով բարձր ար-
տադրողականության ունեցողներով։ Գյուղատնտեսության մեջ
արտադրանքի ծավալը կարելի է ավելացնել կամ ցանքատա-
րածությանն ենթարկելով (տնտեսության էքստենսիվ
ձևը), կամ հողի բերրիությունը բարձրացնելով և ավելի նպա-
տակահարմար ու արդյունավետ օգտագործելով, այլ խոսքով՝
արտադրության ինտենսիվացման ճանապարհով։ Վերջին
ուղին ամենից ավելի առաջադիմականն է, տնտեսական տե-
սակետից շահավետ և, այդ պատճառով էլ, ավելի հեռանկա-
րային, քանի որ հողային տարածությունները անվերջ ընդլայ-
նել հնարավոր չէ։ Այս դրույթը առանձնապես վերաբերում է
սակավահող շրջաններին։

Գյուղատնտեսության ինտենսիվացման գլխավոր խնդիրը
նրա ճյուղերի խորը մասնագիտացումն է, արտադրության
կենտրոնացումը և մթերքների արտադրության առավելագույն
ավելացումը՝ աշխատանքի ու միջոցների նվազագույն ծախ-
սումով։

Նույնիսկ մասնավոր-կապիտալիստական արտադրության
պայմաններում, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, գյուղատնտե-
սության ինտենսիվացման շնորհիվ բարելավվեց «...անա-
սունների խնամքը և հողի մշակությունը, բարձրացան բերքե-
րը, խիստ զարգացավ հողագործության մասնագիտացումը,
աշխատանքի բաժանումը առանձին տնտեսությունների միջև։
Մինչև կապիտալիստական միակերպությանը հաջորդեց գնա-
լով ավելի ու ավելի ուժեղացող բազմազանություն, որին
ուղեկցեց գյուղատնտեսական բոլոր ճյուղերի տեխնիկական
առաջադիմությունը»²։

¹ Վ. Ի. Լենին, հատ. 3, էջ 286—287։

² Վ. Ի. Լենին, հատ. 4, էջ 133—134։

Սոցիալիստական էկոնոմիկայի պայմաններում երկրի գյուղատնտեսական արտադրութեան ինտենսիվացումը հեն-վում է տնտեսութեան պլանաշափ զարգացման վրա, որը պայ-մանավորում է արտադրութեան առանձին ճյուղերի փոխադարձ կապը և համաձայնվածութիւնը:

Գյուղատնտեսութեան արտադրութեան ինտենսիվացման լինինյան դրույթները սոցիալիստական էկոնոմիկայի զար-գացման տվյալ փուլում իրենց արտացոլումը գտան բանջա-րեղենի, կարտոֆիլի, ձվի, թռչունի և խոզի մսի արտադրու-թեան համար պետական խոշոր մասնագիտացված տնտեսու-թիւններ կազմակերպելու մեջ:

Մասնագիտացումն իր հերթին բերում է արտադրութեան համակենտրոնացում՝ իր բոլոր առավելութիւններով:

Սոցիալիստական գյուղատնտեսական խոշոր ձեռնարկու-թիւնների աշխատանքի փորձն ակնհայտորեն ցույց տվեց, որ միայն խոշոր մասնագիտացրած արտադրութիւնը կարող է տնտեսական տեսակետից առավել արդյունավետ լինել: Այդ բացատրվում է նրանով, որ արտադրութեան կենտրոնացման և մասնագիտացման հիման վրա ստեղծվում են նպաստավոր պայմաններ աշխատանքի իսկական բարձր արտադրողակա-նութեան հասնելու, առավելագույն չափով արտադրանք ստա-նալու՝ աշխատանքի և միջոցների նվազագույն ծախսու-մով:

Այդ դրույթը հաստատվում է նաև երկրի զանազան շրջան-ներում գտնվող խոշոր մասնագիտացված թռչնաբուծական ֆաբրիկաների և սովխոզների աշխատանքի փորձով: Անհրա-ժեշտ է սակայն հաշվի առնել, որ այս կամ այն արտադրու-թեան ճյուղի լոկ խոշորացումն ինքնըստինքյան դեռ չի որո-շում այն բոլոր հարցերը, որոնք կապված են արտադրանքի ծավալի ավելացման և տնտեսութեան էկոնոմիկայի արդյու-նավետութեան հետ: Խոշորացման հետ միասին չափազանց մեծ նշանակութիւն ունի տնտեսութիւնը վարելու գիտակա-նորեն հիմնավորված եղանակների մշակումը և կիրառումը արտադրութեան մեջ, հաշվի առնելով ոչ միայն յուրաքանչյուր շրջանի, գյուղատնտեսական գոտու, այլև տվյալ կոնկրետ

տնտեսութեան լընատնտեսական պայմանները և այլ առանձնահատկությունները:

Գյուղատնտեսությունը վարելու գիտականորեն հիմնավորված եղանակների կիրառումը արտադրութեան մեջ պետք է դիտել որպես պետական կարևորություն ունեցող խոշոր գործ: Այդպիսի յուրաքանչյուր եղանակ նախատեսում է կազմակերպչական-տնտեսական և ագրոգոտեխնիկական միջոցառումների մի ամբողջական կոմպլեքս՝ մշակված գիտութեան վերջին նվաճումների և առաջավոր փորձի հիման վրա:

Այդ միջոցառումները պետք է ապահովեն յուրաքանչյուր տնտեսութեան հողային ռեսուրսների ամենաարդյունավետ օգտագործումը այն հաշվով, որպեսզի մեկ միավոր գյուղատնտեսական տարածությունից աշխատանքի և միջոցների ամենասակավ ծախսումով հասնել արտադրանքի ստացման ամենաբարձր մակարդակի: Իր հերթին, ռացիոնալ գյուղատնտեսությունը վարելու եղանակի հիմքում ընկած են արտադրութեան մասնագիտացման, արտադրական պրոցեսների լայն մեքենայացման ու համակենտրոնացման սկզբունքները: Մասնագիտացման նպատակն է սահմանել այնպիսի մթերքների արտադրություն, որոնք կարելի է ստանալ տվյալ կոնկրետ բնական-տնտեսական պայմաններում ամենացածր ինքնարժեքով:

«Հողագործութեան ինտենսիֆիկացիան,— գրել է Վ. Ի. Լենինը,— ոչ թե պատահական, ոչ թե տեղական, ոչ թե էպիզոդիկ, այլ ընդհանուր երևույթ է բոլոր քաղաքակիրթ երկրների համար»¹: Բայց որպես պատմական, առաջադիմական երևույթ, ինտենսիվացումը առավել հատուկ է սոցիալիստական տնտեսաձևին:

Արտադրութեան միջոցների նկատմամբ մասնավոր սեփականութեան վերացումը գյուղատնտեսութեան մեջ թույլ է տալիս իրականացնել տնտեսութեան այդ ճյուղի ինտենսիվացումն ամբողջ երկրի մասշտաբով և միևնույն ժամանակ հաշվի առ-

¹ Վ. Ի. Լենին, հատ. 22, էջ 48:

նել յուրաքանչյուր շրջանի, նույնիսկ առանձին տնտեսության ուրույն առանձնահատկությունները:

Բազմամյա փորձով ապացուցված է, որ միևնույն բնական և կլիմայական պայմաններում մեկ միավոր հողային տարածությունից անհամեմատ ավելի շատ ըուսաբուծական և անասնաբուծական մթերքներ են ստանում այն տնտեսությունները, որտեղ արտադրության պրոցեսը ինտենսիվացված է:

ԹՈՋՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՆՍԻՎԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Չնայած որ գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման հիմնական սկզբունքներն ընդհանուր են նրա բոլոր ճյուղերի համար, այնուամենայնիվ, յուրաքանչյուր ճյուղն ունի իր բնորոշ առանձնահատկությունները: Այդ վերաբերվում է նաև անասնաբուծությանը, մասնավորապես թռչնաբուծությանը: Թռչնաբուծության ինտենսիվացման կարևոր առանձնահատկությունն արտադրության ինդուստրիալ եղանակների օգտագործումն է, որի շնորհիվ արտադրության այդ ճյուղը ինտենսիվացման և խորը մասնագիտացման մեծ հեռանկարներ ունի: Թռչնաբուծության ինտենսիվացման հիմքը ամենից առաջ կազմում է հոտի վերարտադրության արդյունաբերական եղանակի՝ արհեստական ինկուբացիայի (ճտահանության) լայն կիրառումը, որը հնարավորություն է տալիս վերացնելու ճտահանության և մատղաշների աճեցնելու սեզոնայնությունը, ապահովել հոտի վերարտադրությունը և մթերքների հավասարաչափ թողարկումը տարվա բոլոր եղանակներին, առանց սեզոնային նկատելի տատանումների:

Թռչնաբուծության ինտենսիվացման մյուս կարևոր պայմանը թռչունների պահվածքի եղանակների կատարելագործումն է, ամբողջ տարվա ընթացքում հոտի անընդմեջ համալրման ու աշխատատար պրոցեսների կոմպլեքսային մեքենայացման հիման վրա: Այս տեսակետից մեծ հեռանկարներ ունի վանդակային պահվածքի եղանակը:

Թռչնաբուծության ինտենսիվացման արդյունավետությունը մեծ չափով պայմանավորված է նաև տնտեսության շափի ճիշտ որոշումով, նրա խոր մասնագիտացումով և արտադրության տեխնոլոգիական պրոցեսների հստակ կազմակերպումով:

Լայն արտադրական փորձը ցույց է տալիս, որ միայն օպտիմալ խոշոր և խորը մասնագիտացրած թռչնաբուծական տնտեսությունը կարող է առավել շահութաբեր լինել: Այդ ապացուցվում է մասնավորապես մեր երկրի խոշոր տնտեսությունների՝ թռչնաբուծական ֆաբրիկաների և սովխոզների աշխատանքի փորձով:


Թռչնաբուծական տնտեսությունների մասնագիտացման կարևոր տարրերից մեկը բուծվող թռչունի տեսակի և ցեղի ճիշտ ընտրությունն է: Ինտենսիվացման արդյունավետության վճռական պայմաններից մեկը զարգացած համակցված կերային արդյունաբերության առկայությունն է:

Վերջապես, թռչնաբուծական տնտեսություններում ինտենսիվացման արդյունավետությունը մեծ չափով պայմանավորված է տեխնոլոգիական պրոցեսների ճիշտ կազմակերպումով, աշխատանքի ռիթմականությամբ և արտադրանքի հիմնական տեսակների համաչափ արտադրությամբ: Այդ միջոցառումները պետք է կիրառվեն՝ ելնելով գիտատեխնիկական առաջադիմության արդի մակարդակից ու առաջավոր փորձից:

Թված գործոններից յուրաքանչյուրն անգամ առանձին վերցրած ունի շատ կարևոր նշանակություն, բայց քանի որ նրանք փոխադարձաբար սերտ կապի մեջ են գտնվում, ապա ամենաբարձր արդյունավետությունը ստացվում է նրանց համատեղ՝ կոմպլեքսային կիրառման դեպքում: Այդ գործոններից որևէ մեկի թերազնահատումը կամ անտեսումն անմիջապես անդրադառնում է ինտենսիվացման արդյունավետության վրա: Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ արտադրության ինտենսիվացման էլեմենտները իրենց հերթին անընդհատ կատարելագործման կարիք են զգում՝ գիտության նվաճումների և առաջավոր փորձի կուտակմանը համընթաց:

ԱՐԴՅՈՒՆԱՐԵՐԱԿԱՆ ԹՌՉՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՀԱՐՑԵՐԸ

Թռչնաբուծության հետագա զարգացումը՝ նրա ինտենսիվացման և ճյուղային մասնագիտացման հիման վրա, պահանջում է հատուկ ուշադրություն արտադրության այդ ճյուղի էկոնոմիկայի, կազմակերպման ու կառավարման սխեման հարցերին: Թռչնաբուծության ինտենսիվացման կարևոր առանձնահատկություններից մեկը արտադրության համակենտրոնացումն է: Խոշոր մասնագիտացված թռչնաբուծական տնտեսությունների բավականին բարդ տեխնոլոգիայի պրոցեսները ճիշտ ղեկավարելու համար անհրաժեշտորեն պահանջվում է ստեղծել արտադրական և տեխնոլոգիական պրոցեսների ղեկավարման հատուկ և միաժամանակ ճկուն սխեմա: Սոցիալիստական էկոնոմիկայի պայմաններում արտադրության կազմակերպիչներին՝ տնտեսության դիրեկտորին, տեխնիկական ղեկավարին և մյուս գլխավոր մասնագետներին շատ կարևոր տեղ է հատկացվում արտադրությունը կազմակերպելու և ղեկավարելու, ձեռնարկության առջև կանգնած խնդիրներից մասնավորապես պետական առաջադրանքները ժամանակին կատարելու գործում: Արտադրության կազմակերպիչների դերը խոշոր է և անվիճելի, բայց առավել անվիճելի է այն, որ առանց ջանադիր մշակված, գիտականորեն հիմնավորված կառավարման սխեման անհնար է ապահովել բազմաթիվ ընթացիկ-գործնական հարցերի ժամանակին լուծումը: Այդ հարցերը պետք է լուծվեն կառավարման անխափան գործող սխեմանով, քանի որ կազմակերպման հանձարներն անգամ այդ ի վիճակի չեն փոխարինելու կառավարման սխեմանին: Թռչնաբուծական տնտեսության գործունեության արդյունավետությունը մեծ չափով պայմանավորված է նրա կազմակերպական ձևով, մասնագիտացման ուղղությամբ և կառուցվածքի հստակությամբ: Հանրահայտ է, որ, որպես կանոն, թռչնաբուծական փոքր տնտեսությունները շահութաբեր չեն լինում, քանի որ այդպիսի տնտեսություններում ամենից



առաջ խախտվում է այսպես կոչված վարչակառավարչական՝ վերադիր ծախսերի և ուղղակի՝ արտադրական ծախսերի նորմալ հարաբերությունը, թույլ են մեքենայացվում արտադրական պրոցեսները, ցածր է լինում աշխատանքի արտադրողականությունը և այս բոլորի հետևանքով շատ բարձր է լինում մթերքների ինքնարժեքը:

Մյուս կողմից էլ բաղմամբիվ օրինակներով հաստատված է, որ չափից ավելի խոշոր տնտեսությունները դժվար կառավարելի են դառնում, որի բացասական հետևանքները անխուսափելիորեն անդրադառնում են արտադրական ցուցանիշների վրա:

Պետք է նկատի ունենալ, որ ի տարբերություն սովորական արդյունաբերական ձեռնարկությունների, որոնք գործունեն անկենդան նյութի վերամշակման կամ այդպիսի նյութերից զանազան սարքեր, մեքենաներ և կահույք արտադրելու հետ, թռչնաբուծական ֆաբրիկաները, սովխոզները կամ այլ տիպի տնտեսությունները գործունեն կենդանի օրգանիզմների հետ, որոնք էլ հենց հանդիսանում են արտադրական օբյեկտները: Ասածներս լուսաբանենք այսպիսի օրինակով. եթե ի՞նչ-ի՞նչ պատճառներով սովորական գործարանը կամ ֆաբրիկան հումք չեն ստացել, ապա անխուսափելիորեն կառաջանա մեքենաների և բանվորական ուժի պարապուրդ, կհետաձգվի այս կամ այն արտադրանքի թողարկումը, որը հետագայում կարելի է լրացնել, քանի որ հումքը առանց կորուստի կարելի է պահել բավականին երկար ժամանակ (եթե նկատի չունենանք բացառությունները՝ արագ փշացող հումքը): Իսկ եթե որևէ պատճառով ժամանակին կերերը չհասցվեն և 500 հազար ածանցեր թեկուզ մեկ օր զրկվեն կերից, ապա դա անվերադառնալի ծանր հետևանքներ կթողնի՝ մի քանի օրվա ընթացքում խիստ (մինչև 50—60%—ով) կընկնի ձվատվությունը, եթե անգամ մյուս օրը վերականգնվի նորմալ կերակրումը: Գրանում մենք համոզվել ենք մեր սեփական փորձով: Իսկ ի՞նչ է նշանակում թեկուզ 4—5 օրվա ընթացքում թռչունից ստանալ կիսով չափ պակաս մթերատվություն: 500 հազար ածան ունեցող տնտեսությունում դա կկազմի 500—600 հազար ձու, կամ մոտ 45—54 հազար ռուբլու կորուստ: Հետևա-


բար, ավելի նպատակահարմար է կազմակերպել օպտիմալ խոշոր տնտեսություններ, հաշվի առնելով տվյալ վայրի բնակլիմայական և տնտեսական պայմանները և կերպահոգովածության աստիճանը:

ԹՌՉՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Սովետական Միությունում թռչնաբուծությունը զարգանում է կազմակերպական մի քանի ձևերով: Դրանք են՝ թռչնաբուծական ֆաբրիկաները, մասնագիտացված սովխոզները, միջկոլտնտեսային, կոլտնտեսային և չմասնագիտացված սովխոզների թռչնաբուծական ֆերմաներ: Տնտեսության այդ ձևերը էականորեն միմյանցից տարբերվում են ինչպես արտադրության կազմակերպման և տեխնոլոգիայի, այնպես էլ տնտեսության շափերով, թռչունի պահվածքի եղանակով, կերակրման մակարդակով, աշխատատար պրոցեսների մեքենայացման ու ներտնտեսային մասնագիտացման աստիճանով:

Արդյունաբերական տիպի տնտեսության առավել կատարելագործված ձևը թռչնաբուծական ֆաբրիկան է: Թռչնաբուծական ֆաբրիկաները դրանք խոշոր մասնագիտացված տնտեսություններ են ձվի և թռչունի մսի արտադրության ուղղությամբ, ունեն ավարտված արտադրական ցիկլ-ծրաշրջան, որն ապահովում է թռչնադլխաքանակի վերարտադրությունն ինդուստրիալ եղանակով (արհեստական ինկուբացիա) և ձվի ու մսի արտադրությունն ու իրացումը ամբողջ տարվա ընթացքում հավասարաչափ: Դրանց տարողությունը հասնում է 100, 250, 500 հազար ածանի:

Այդ տիպի տնտեսություններում հավերի արդյունաբերական հոտերը պահվում են մարտկոցային վանդակներում, որոնք տեղավորվում են շենքերի մեծ կորպուսներում: Դահնարավորություն է տալիս բարձր արդյունավետությամբ օգտագործել արտադրական տարածությունները, և զգալիորեն համակենտրոնացնել արտադրությունը:



Նկ. 1. Երևանի թռչնաբուծական ֆաբրիկայի տեխնոլոգիական պրոցեսի սխեման:

Մի շարք ֆաբրիկաներում, գլխավորապես հարավային գոտիներում, աժանները պահվում են լայն գարարիտային, մեքենայացված թռչնանոցներում, խորը շփոփոխվող ցամաքի վրա, օգտագործելով այդ նպատակի համար թեթև տիպի ավելի էժան թռչնանոցներ:

Թռչնաբուծական ֆաբրիկաները, որպես կանոն, տեղադրվում են մերձքաղաքային գոտիներում, սովորաբար խոշոր արդյունաբերական կենտրոններին մոտ: Նրանց խնդիրն է

առևտրական ցանցի միջոցով բնակչությանը մատակարարել
թարմ դիետիկ ձու և թռչունի միս: Այդ տնտեսությունները
ապահովվում են ներմուծվող խտացրած կերերով պետական
ֆոնդերի հաշվին:

Շնորհիվ այդ բուրի, թռչնաբուծական ֆաբրիկաները հան-
դիսանում են բարձր ապրանքային և շահութաբեր արդյունա-
բերական տիպի ձեռնարկություններ:

Մասնագիտացված թռչնաբուծական սովխոզները նույնպես
խոշոր տնտեսություններ են հանդիսանում: Նրանք հիմնակա-
նում գտնվում են մերձքաղաքային գոտուց դուրս, ունենում են
բավականաչափ մշակվող հողային տարածություններ, որը
հնարավորություն է տալիս, ի տարբերություն ֆաբրիկաների,
ձվի և մսի արտադրությունը ապահովել հիմնականում սեփա-
կան կերի բազայի հաշվին:

Մասնագիտացված սովխոզների կառուցվածքը և արտա-
դրական պրոցեսների կազմակերպումը նույնպես տարբերվում
է ֆաբրիկաներից: Որոշ մասնագիտացված սովխոզներ, շնոր-
հիվ վարելահողերի, արոտատեղերի ու մարգագետինների մեծ
տարածությունների առկայության, ձվի և թռչունի մսի ար-
տադրությունը հաջողությամբ զուգակցում են անասնաբուծա-
կան այլ մթերքների (կաթ, յուղ, միս) արտադրության հետ:
Այդպիսի զուգակցումը՝ ներտնտեսային մասնագիտացման
հիման վրա, հնարավորություն է տալիս ռացիոնալ կերպով
համակցել տնտեսության տարբեր ճյուղերը, բարձրացնել
նրա շահութաբերությունը և որ գլխավորն է՝ ապահովել առա-
ջատար ճյուղի՝ թռչնաբուծության բարձր ապրանքայնու-
թյունը:

Կուտնտեսային և շմասնագիտացված սովխոզների թռչ-
նաբուծական տնտեսությունները համեմատաբար ավելի փոքր
են լինում: Նրանք չեն ունենում ավարտված արտադրական
ցիկլ, քանի որ թռչունի վերարտադրությունը կատարվում է
ինկուբատորային-թռչնաբուծական կայաններից գնված մեկ
օրական ճտերի աճեցման հաշվին:

Այս տիպի տնտեսություններում գերազանցապես կիրառ-
վում է թռչունի պահվածքի զբոսաբակային եղանակը: Վեր-
ջին տարիներս շատ տնտեսություններ անցել են թռչուններին

խորը շփոփոխվող ցամքարի վրա պահելու հղանակին՝ լայն գարարիտային, ժեքենայացված թռչնանոցներում՝ յուրաքանչյուրը 6—8 հազար հասակավոր թռչունի տարողությամբ։ Առաջավոր տնտեսությունները կիրառում են նաև մատղաշի աճեցման կոմբինացված հղանակը, երբ ճտերը մինչև 45—60 օրական հասակը աճեցվում են վանդակներում, իսկ այնուհետև փոխադրվում են զբոսարակային պահվածքի։ Համեմատաբար խոշոր ֆերմաներ ունեցող կոլտնտեսությունները, սովխոզները և, իհարկե, միջկոլտնտեսային ֆերմաներն ունենում են նաև սեփական ինկուբատորներ, որը հնարավորություն է տալիս անցնելու արտադրության ավարտած ցիկլի։ Թե ինչպիսի արդյունավետություն է ունենում արտադրության կենտրոնացումը թռչնաբուծության մեջ, կարելի է տեսնել 1-ին աղյուսակից։

Աղյուսակ 1

Տարբեր տիպի բուհաբուծական տնտեսությունների արտադրական և էկոնոմիկական ցուցանիշները

Տնտեսության տիպը	(սլաշ) յուրաքանչյուր տոննայի կեր մեկ -տոննայի համար գլխի վրա	(տոն. հայ) միջոցառում զմբ համար գլխի վրա	(տոն.) միջոցառում -տոննայի համար գլխի վրա	1000 ձի կիլոգր. պ. շաբաթ
Թռչնաբուծական ֆարրիկաներ	50890	7989,7	157	71,2
Մասնագիտացված թռչնաբուծական սովխոզներ	20,913	2551,3	122	79,8
Սովխոզային ֆերմաներ	5620	629,4	112	82,5
Կոլտնտեսային ֆերմաներ	1075	90,3	84	79,1

Ինչպես տեսնում ենք, թռչնաբուծական ֆարրիկաներում ածան հավերի գլխաքանակը 50 անգամ ավելի է, քան կոլտնտեսային ֆերմաներում, ձվի համախառն արտադրանքը ֆարրիկաներում գերազանցում է կոլտնտեսային ֆերմայի արտադրանքին ավելի քան 88 անգամ, ածան հավերի միջին ձվատվությունը՝ մոտ երկու անգամ։ Միաժամանակ ֆարրիկաների արտադրանքի ինքնարժեքը 10%-ով ավելի ցածր է,

քան կոլտնտեսային ֆերմաներում: Անգամ մասնագիտացված սովխոզների համեմատությամբ ֆաբրիկաների արտադրական ցուցանիշները անհամեմատ ավելի բարձր են լինում:

Է՛լ ավելի ցայտուն են դառնում խոշոր արդյունաբերական տիպի ձեռնարկությունների առավելությունները, երբ համեմատում ենք տարբեր արտադրական հզորություն ունեցող տնտեսությունների ցուցանիշները (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Ձվատու ուղղություն ունեցող բոշնարուծական ֆաբրիկաների տնտեսական արդյունավետությունը, կապված նրանց չափերի հետ


Թռչնարուծական ֆաբրիկաների խմբերը ըստ ածան հավերի գլխաքանակի (հազար գլուխ)	Մեկ ֆաբրիկայի թվով զբաղվող արտադրողների թիվը (հազար գլուխ)	Մեկ տնտեսությանը ընկնող ածանցանքի տարեկան միջին արտադրանքը (հազար գլուխ)	Մեկ ֆաբրիկայի ընդհանուր զբաղվողների թիվը (հազար)	Մեկ ֆաբրիկայի ընդհանուր արտադրանքը (հազար գլուխ)	1000 ձվի ինքնարժեքը (դրամ)	Մեկ ածանցանքի շահույթը (+) կամ վնասը (-) (պրոց.)
10—30	30	18,2	117	1675	86,07	—6,0
30—50	21	39,7	136	4807	74,67	—2,5
50—100	16	69,3	133	8400	89,10	—1,7
100—150	7	125,8	149	17672	75,16	+2,4
150—200	1	163,3	158	24299	65,06	+7,0
300—400	1	316,8	170	63734	60,12	+8,4
400—500	1	471,8	175	79217	58,80	+9,9

Աղյուսակի տվյալներից պարզ երևում է, որ ավելի բարձր արդյունավետություն ունեն այն տնտեսությունները, որոնք 150 հազար և ավելի ածանցանք ունեն: Օրինակ, 400 հազարից 500 հազար ածան ունեցող ֆաբրիկաները պետությանն են հանձնում տարեկան ավելի քան 79 միլիոն ձու, հավերի միջին ձվատվությունը կազմում է 175 ձու, 1000 ձվի ինքնարժեքը լինում է 58 դ. 80 կ., մեկ ածանցանքից ստացվող շահույթը 9,9 ռուբլի:

Ուսումնասիրությունները և արտադրական փորձը հաս-

տատել է, որ ավելի բարձր տնտեսական արդյունավետություն ունի թռչունի պահվածքի վանդակային եղանակը: Դրանում կարելի է համոզվել 3-րդ արդյունակում բերած տվյալներից:

Բերված թվերը ցույց են տալիս, որ քառակուսի մետր տարածությունից ստացվող ձվերի քանակը պահվածքի բոլոր եղանակների դեպքում էլ ավելանում է այն ժամանակ, երբ բարձրանում է թռչունի տեղավորման խտությունը. առավել արդյունավետ են օգտագործվում թռչնանոցների օգտակար տարածությունները վանդակային պահվածքի դեպքում: Մեկ քառակուսի մետր հատակի հաշվով պահվածքի այս եղանակի դեպքում 2,7 անգամ ավելի շատ ձու է ստացվում, քան խորը չփոփոխվող ցամքարի վրա պահելու դեպքում: Ինչ վերաբերվում է կապիտալ ներդրումների արդյունավետ օգտագործմանը, ապա այս դեպքում առավելությունը ցանցապատ հատակ ունեցող թռչնանոցների կողմն է: Պահվածքի այս եղանակի դեպքում ցածր է լինում նաև ձվի ինքնարժեքը (10 ձվի ինքնարժեքը կազմում է 46 կոպեկ, այն ժամանակ, երբ վանդակային պահվածքի դեպքում այն կազմում է 64 կոպեկ): Թռչնաբուծության ինտենսիվացումը առավել բարձրարդյունք է լինում այն ժամանակ, երբ թռչունի պահվածքի առաջստեղծ եղանակները կիրառվում են՝ ելնելով տվյալ վայրի էկոնոմիկական պայմաններից:



Նկ. 2. 250 հազար ածան հավի տարողությամբ թռչնաբուծական ֆարրիկայի նախագիծը:

Թոշնանոցների օգտագործման արդյունավետությունը պահվածքի տարբեր
եղանակների կիրառման դեպքում

Հավերի պահվածքի եղանակը	Թոշնանոցների օգտակար տարածությունը (մ²)	Կապիտալ ներդրումների գումարը թոշնապահոց- ների շինարար. և կահավ. (միլիոն հազար.)	Թոշնանոցների տեղադրման խտությունը մ² հատակին (շվ.)	Զրկանքային արժեք (հազ. հատ.)	Ստացված է ձու.	
					Յի-մի 1 մ²-ին	Երկուսին 100 մ²-ին
Խորը չփոփոխվող ցամաքային վրա . . .	557	17,6	4	305,2	548	1734
Ցանցապատ հա- տակի վրա . . .	545	22,3	7,5	682,5	1252	3060
Վանդակներում . . .	1006	51,8	11	1482,8	1474	2862

Տվյալները ցույց են տալիս վոլյերային պահվածքի որոշ
առավելությունները մյուս եղանակների նկատմամբ: Բայց
կերերի մթերքով հատուցելու տեսակետից ավելի բարձր ար-
դյունավետություն ունի վանդակային պահվածքի եղանակը
(աղյուսակ 4):

Ա Ղ Յ Ո Ւ Ս Ա Կ 4

Կերերի ծախսը ձվի արտադրության վրա տարբեր պահվածքի պայմաններում
(Համամիութենական թոշնաբուծական գիտա-հետազոտական ինստիտուտի
տվյալներով)

Պահվածքի եղանակը	Պահանջվում է կերի միավոր 10 ձվի արտադրության համար տարբեր ձվատվություն դեպքում	
	120 ձու	150 ձու
Վանդակային	3,40	2,70
Ցանցապատ հատակի վրա	3,82	3,60
Խոր ցամաքային վրա	4,04	3,74
Զրոսաբակային	4,25	3,87

Կատարած մի շարք դիտումները ցույց են տվել, որ պահվածքի տարբեր եղանակների դեպքում աշխատանքի ծախսումը նույնը չէ (աղյուսակ 5):

Աղյուսակ 5

Աշխատանքի ծախսումը բոշումների պահվածքի տարբեր եղանակների դեպքում

Պահվածքի եղանակը	Ծախսված է մարդ-ժամ 100 հավի հաշվով		
	Ջադորուկի թռչնա- բուծա- կան սով- խող	«Գորկու 2-րդ» սովխող	Աղլերի թռչնա- բուծա- կան ֆար- րիկայի
Խորը չփոփոխվող ցամքարի վրա	2,30	2,20	2,60
Փոփոխվող ցամքարի վրա	2,78	3,10	3,36
Ցանցապատ հատակի վրա	2,20	—	—
Վոլյերներում	—	—	1,50

Այսպիսով, երկարամյա փորձի ընդհանրացումը հիմք է տալիս թռչունի պահվածքի տարբեր եղանակների կիրառման հարցում հանգելու որոշակի կոնկրետ եզրակացությունների:

Վանդակային պահվածքն առավել արդյունավետ է խոշոր քաղաքների և արդյունաբերական կենտրոնների շրջակայքում տեղադրված ֆաբրիկաներում: Խորը չփոփոխվող ցամքարի վրա պահելու եղանակը նպատակահարմար է կիրառել տոհմային տնտեսություններում, մասնագիտացված սովխողներում, կոլտնտեսային և շմասնագիտացված սովխողների ֆերմաներում, իսկ զբոսաբակային եղանակը՝ գերազանցապես հարավային գոտիներում: Պահվածքի եղանակի արդյունավետության չափանիշը պետք է լինի թռչունների մթերատվության բարձրացումը, կերերի և աշխատանքի միևնույն ծախսումը և կապիտալ ներդրումների չափը մեկ միավոր արտադրանքի հաշվով: Այս հարցին մենք նորից կանդրադառնանք գրքույկի համապատասխան գլխում՝ կապված թռչնաբուծության ինտենսիվացման հետ Հայաստանի պայմաններում:

**ԹՈՉՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ
ՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-ՈՒՄ**

Թռչնաբուծությունը Հայաստանում մինչև վերջին տարիները դյուղատնտեսության արտադրության ամենահետամնաց ճյուղերից մեկն էր, որը նրա թերագնահատման ուղղակի հետևանքն էր հանդիսանում: Դրանով կարելի է բացատրել, որ կոլտնտեսային թռչնաբուծական ֆերմաները գերակշռող մեծամասնությամբ դեռ այսօր էլ շատ փոքր են: Զգալի թվով կոլտնտեսություններ բոլորովին ֆերմաներ չունեն, ցածր է թռչունի մթերատվությունը, դանդաղ է աճում արտադրանքի ծավալը: 1963 թվականի վերջում յուրաքանչյուր կոլտնտեսային թռչնաբուծական ֆերմային միջին հաշվով ընկնում էր 700 գլուխ հասուն թռչուն: Մինչև 1955 թվականը ռեսպուբլիկայում կար ընդամենը մեկ ոչ մեծ թռչնաբուծական սովխոզ (Լենինականում), իսկ գործող թռչնաբուծական ֆաբրիկա դեռ չկար:

Արտասահմանյան առաջավոր երկրների և Սովետական Միության մի շարք տնտեսությունների ավելի քան 30 տարվա փորձը ցույց տվեց թռչնաբուծական տնտեսությունների մասնագիտացման բարձր արդյունավետությունը: Սկսած 1930 թվից Մոսկվայի շրջակայքում ստեղծված խոշոր թռչնաբուծական ֆաբրիկաները (Բրատցկյան, Տոմիլինյան, Գլեբովյան, Կունցևյան) և մասնագիտացված սովխոզները (Կուլինյան, Գորկի 2, Կրասնի կուտ և այլն) շատ մեծ դեր խաղացին և ներկայումս էլ շարունակում են խաղալ մայրաքաղաքի բազմամիլիոն բնակչությանը դիետիկ ձու և թռչունի միս մատակարարելու գործում: Վերջին տարիներում նույն տիպի տրնտեսություններ ստեղծվեցին Լենինգրադի, Կիևի, Մինսկի, Բաքվի, Կույբիշևի, Սվերդլովսկի, Թբիլիսիի, Տաշքենդի, Երևանի և շատ ուրիշ խոշոր արդյունաբերական կենտրոնների շրջակայքում: Ներկայումս բացառիկ մեծ նշանակություն է տրվում արդյունաբերական թռչնաբուծության ինտենսիվ ձևերի հետևողական զարգացմանը և նրա խոր մասնագիտաց-

մանը: ՍՄԿՊ Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների սովետի 1964 թ. սեպտեմբերի 3-ի որոշմամբ հատուկ միջոցառումներ են մշակվել 1965—1970 թթ. ընթացքում խոշոր քաղաքների և արդյունաբերական կենտրոնների շուրջը ստեղծելու մի շարք նոր մասնագիտացված թռչնաբուծական տնտեսություններ, միաժամանակ ընդլայնելով գործող տնտեսությունները: Այդ որոշման հիման վրա Հայաստանի կոմպարտիայի Կենտկոմը և Մինիստրների սովետը 1964 թ. հոկտեմբերի 6-ին հատուկ որոշում ընդունեցին ռեսպուբլիկայում արդյունաբերական թռչնաբուծության հետագա զարգացման մասին: Մշակված միջոցառումների համաձայն 1965—1970 թթ. ընթացքում Հայաստանում նախատեսված է կառուցել 10 նոր ֆաբրիկաներ, որոնցից 4-ը ունենալու են ձվի արտադրության մասնագիտացված ուղղություն, իսկ 6-ը՝ մսացու ճտերի (բրոյլերների) արտադրության մասնագիտացված ուղղություն: Բացի այդ, ընդլայնվելու են նաև ներկայումս գործող Նրևանի, Լենինականի և Էջմիածնի թռչնաբուծական ֆաբրիկաները, որոնց յուրաքանչյուրի հզորությունը 35—40 հազար ածանի տարողությունից հասցվելու է 100 հազարի, իսկ ձվի արտադրությունը 7—8 միլիոնից կհասնի 20 միլիոնի: Այդ աշխատանքները նախատեսված է ավարտել 1965—1966 թվերին: Ներկայումս գործող և նոր կառուցվող ֆաբրիկաները 1970 թ. արտադրելու են 90 միլիոն ձու և 5,5 միլիոն մսացու ճուտ կամ 17 հազար տոննա թռչունի միս: Այսպիսով՝ Հայաստանում նոր թափ կստանա արդյունաբերական թռչնաբուծությունը, որի սկիզբը դրվեց 1955—56 թթ. Էջմիածնի անդրանիկ ֆաբրիկայի կառուցումով: Նշված ծրագրի կենսագործումից հետո խոշոր մասնագիտացված թռչնաբուծական տնտեսությունների թիվը կհասնի 15-ի, որոնք կարտադրեն մոտ 3 անգամ ավելի ձու և 7 անգամ ավելի թռչունի միս, քան 1963 թվին արտադրել են ռեսպուբլիկայի բոլոր 628 կոլտնտեսությունները միասին վերցրած:

Մասնագիտացման ուղղությունը: Թռչնաբուծության մասնագիտացումը Հայաստանում պատմականորեն կազմավորվել է գլխավորապես ձվի արտադրության ուղղությամբ: Փաստական տվյալների վերլուծումը ցույց է տալիս, որ թռչնաբուծու-

թյան արտադրանքի ընդհանուր արժեքից ձվի բաժինը կազմում է 80—85 տոկոս և ավելին: Թռչունի մսի արտադրությանը առհասարակ շատ քիչ ուշադրություն է դարձվել: Ինչ վերաբերում է թռչնաբուծության տեսակային մասնագիտացմանը, ապա առաջատար տեղը պատկանել ու պատկանում է հավաբուծությանը, որի տեսակարար կշիռը ընդհանուր թռչնագլխաքանակի մեջ (ներառյալ ջրլող թռչունները և հնդկահավերը) 90%-ից անցնում է: Անհրաժեշտ է նշել, որ թռչունի մսի արտադրությունն ավելացնելու փորձերը, միևնույն արտադրական տերիտորիայում՝ զանազան տեսակի թռչուններ բուծելու միջոցով, դրական արդյունք չտվեցին: Այսպես, օրինակ, Լենինականի թռչնաբուծական ֆաբրիկան 1954—1955 թթ. հիմնական արտադրական տեղամասում հավերի հետ միասին բուծում էր նաև բադեր, բայց այդ պրակտիկան իրեն չարդարացրեց:

Էջմիածնի թռչնաբուծական ֆաբրիկան որոշ շրջանում զուգակցում էր հավերի և հնդկահավերի համատեղ բուծումը, որը նույնպես իրեն չարդարացրեց: Նույնը տեղի ունեցավ նաև Արարատյան հարթավայրի մի շարք կոլտնտեսություններում:

Ակնհայտ դարձավ, որ անհրաժեշտ է կազմակերպել ինքնուրույն սովխոզներ, ֆաբրիկաներ կամ ֆերմաներ ըստ թռչունների առանձին տեսակների և տնտեսությունը մասնագիտացնել ոչ թե ընդհանրապես, այլ նրա յուրաքանչյուր ճյուղը առանձին, այսինքն կատարել ճյուղային խորը մասնագիտացում:

Թռչնաբուծությունը պետք է մասնագիտացնել՝ հաշվի առնելով առանձին գյուղատնտեսական գոտիների, շրջանների և տնտեսությունների բնա-տնտեսական և կլիմայական պայմանները: Այն կոլտնտեսություններում ու սովխոզներում, որտեղ հատիկային կերերի արտադրությունը սահմանափակ է, բայց կան մերձգյուղական արոտներ, (օրինակ, Լոռի-Փամբակի, Զանգեզուրի, Հյուսիս-արևելյան գոտիները), սազը կարող է լինել տնտեսապես ավելի շահավետ թռչուն: Այն գոտիներում, որտեղ կան բնական բուսական ու կենդանական կերերով հարուստ ջրամբարներ (Սևանի ավազանի և կենտրոնական գոտիները), նպատակահարմար է բուծել բադեր, իսկ

այնպիսի արժեքավոր մաստու թռչունը, ինչպիսին հնդկահավն է, կարող է հաջողությամբ բուծվել այն գոտիների տնտեսություններում, որտեղ բնական արոտների կողքին զարգացած է նաև հացահատիկային տնտեսությունը (Հյուսիս-արևելյան, Շիրակ, Զանգեզուր, Կենտրոնական գոտի, Դարալագյաղ)։

Իհարկե, առաջիկայում էլ ինչպես և ներկայումս ու անցյալում, Հայաստանում թռչնաբուծության հիմքը կկազմի հավաբուծությունը, սակայն շատ դեպքերում այն կարող է հաջողությամբ զուգակցվել թռչնաբուծության մյուս ճյուղերի, հատկապես հնդկահավաբուծության և սագաբուծության հետ՝ նայած տնտեսության կոնկրետ պայմաններին։

Հայկական ՍՍՌ-ում թռչնաբուծությունը հեռանկարային շրջանում նույնպես պետք է մասնագիտանա ամենից առաջ ձվի արտադրության ուղղությամբ և ապա նոր մսի։ Սակայն արդյունաբերական կենտրոններին մոտ գտնվող շրջաններում որոշ տնտեսություններ, ինչպես նաև առանձին հեռավոր շրջանների տնտեսություններ, պետք է մասնագիտացվեն նաև թռչունի մսի (բրոյլերների) արտադրության ուղղությամբ։

Մասնագիտացումը անքակտելիորեն կապված է արտադրության համակենտրոնացման ու աշխատատար պրոցեսների լայն մեքենայացման հետ։ Միայն խոշոր թռչնաբուծական տնտեսությունները, որտեղ հնարավոր է կոմպլեքսային մեքենայացման լայն կիրառում և արտադրության կենտրոնացում, կարող են տալ առավելագույն արդյունք թե՛ արտադրության ծավալը մեծացնելու, և թե՛ արտադրանքի ինքնարժեքը իջեցնելու տեսակետից։

Ներկայումս անվիճելի է դարձել այն ճշմարտությունը, որ անհամեմատ ավելի բարձր արդյունավետություն են ունենում այն տնտեսությունները, որտեղ անց է կացվել ներտեսակային խորը մասնագիտացում՝ ըստ մթերատվության ուղղության։

Նշելով տարբեր տեսակի թռչունների համատեղ բուծման աննպատակահարմարությունը՝ կոլտնտեսային թռչնաբուծական ֆերմայում, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ լեռնային և նախալեռնային շրջանների այն կոլտնտեսություններն ու սովխոզները, որոնք իրենց տրամադրության տակ ունեն բնա-

կան մարգագետիններ և գյուղամերձ արտատեղեր, կարող են հաջողութեամբ զուգակցել մեկ տնտեսութեան մեջ 2—3 տեսակի թռչունների բուծումը, բայց իհարկե ինքնուրույն ֆերմաներ կամ արտադրական բրիգադաներ կազմակերպելու պայմանով:

Նպատակահարմար է մի շարք գյուղատնտեսական գոտիների կոլտնտեսութեաններում և սովխոզներում (Հոռի-Փամբակի, Կենտրոնական, Շիրակի և Հյուսիս-արևելյան գոտիների մի մասը, Սևանի ավազանի գոտի) հավերի հետ միաժամանակ բուծել սագեր, այսինքն՝ ունենալ երկուական, թռչնաբուծական ֆերմա, իսկ այն կոլտնտեսութեաններում ու սովխոզներում, որոնք իրենց տրամադրութեան տակ ունեն ջրամբարներ՝ հարուստ բուսական և կենդանական կերով, նպատակահարմար է ստեղծել բադաբուծական ֆերմաներ:

Թվարկած գոտիներում խտացված կերի նվազագույն ծախսումով կարելի է տարեկան աճեցնել ու բտել մսի համար հարյուր հազարավոր գլուխ սագեր, հնդկահավեր և բադեր: Մսի արտադրութեան այդ լուրջ ռեզերվը անհրաժեշտ է առավելագույն չափով օգտագործել:

Մասնագիտացման հետ սերտ կապված է թռչնաբուծական տնտեսությունների նիշտ տեղաբաշխումը ըստ գյուղատնտեսական գոտիների:

Մերձքաղաքային գոտիներում պետք է տեղադրվեն այնպիսի տնտեսութեաններ, (թռչնաբուծական ֆաբրիկաներ, սովխոզներ, միջկոլտնտեսային խոշոր ֆերմաներ, որոնք մասնագիտացված են դիետիկ ձու արտադրելու համար): Այդ տնտեսութեանները կարտադրեն նաև թռչունի միս, բայց արդեն որպես օժանդակ արտադրանք: Ինչպես ցույց տվեց էջմիածնի, Լենինականի և Երևանի թռչնաբուծական ֆաբրիկաների փորձը, դիետիկ ձվի արտադրութեան ուղղութեամբ մասնագիտացված այդ տնտեսութեաններում թռչունի մսի արտադրութեանը թանկ է նստում: Ավելի նպաստակահարմար է կազմակերպել մասնագիտացված տնտեսութեաններ, մասնավորապես ֆաբրիկաներ, մսատու ճտեր՝ բրոյլերների աճեցնելու նպատակով:

Թռչնաբուծական տնտեսութեանները տոհմային ձվով և

մատղաշով ապահովելու նպատակով ռեսպուբլիկայում պետք է ստեղծվի 5—6 մասնագիտացված տոհմային սովխոզներ՝ տոհմաբուծարաններ: Հեռավոր շրջաններում, որտեղ տնտեսություններն ապահովված են կերի սեփական բազայով, նպատակահարմար է թռչնաբուծության մասնագիտացումը տանել գլխավորապես թռչնի մսի արտադրության գծով: Այդ տնտեսությունների առանձին ֆերմաներում մսի համար պետք է աճեցնել ոչ միայն հավեր, այլև սագեր, հնդկահավեր և բադեր: Խորքային շրջանների կոլտնտեսություններում և սովխոզներում նպատակահարմար է աճեցնել ոչ պակաս երկու տեսակի թռչուն: Այդ տնտեսություններում հավաբուծության արտադրանքի ընդհանուր բալանսում միսը կգերակշռի մյուս տեսակի թռչունների հաշվին:

Թռչնաբուծության մասնագիտացման գլխավոր ուղղությունը որոշելիս, չպետք է թերազնահատել, այսպես կոչված, կողմնակի, երկրորդական արտադրանքը, ինչպես, օրինակ, թռչունի մսի արտադրությունը այն տնտեսություններում, որոնք մասնագիտացած են ապրանքային կամ ցեղային ձու արտադրելու: Նույնը վերաբերում է ապրանքային ձվի արտադրությանը՝ բրոյլերային ուղղություն ունեցող տնտեսություններում:

Բուծվող ցեղերի ընտրությունը: Նորից ենք անհրաժեշտ համարում ընդգծել, որ թռչնաբուծության խոր մասնագիտացման համար շատ կարևոր պայման է հանդիսանում բուծվող ցեղերի ճիշտ ընտրությունը: Հայաստանում պետք է բուծվեն մթերատվության տարբեր ուղղություն ունեցող առնվազն երեք ցեղի հավեր՝ ձվատու, մսատու և մսատու-ձվատու, հաշվի առնելով տնտեսության կոնկրետ պայմանները և մասնագիտացման խնդիրները:

Մսա-ձվատու կամ հանրօգտագործելի ցեղերը հիմնականում կբուծվեն կոլտնտեսային և շմասնագիտացված սովխոզների թռչնաբուծական ֆերմաներում ու կոլտնտեսականների, բանվորների և ծառայողների՝ անձնական տնտեսություններում: Այդ ցեղերի առավելությունն այն է, որ նրանք ունենում են մեծ կենդանի քաշ (հավերը կշռում են 2,5—3 կգ, աքաղաղները 3,5—4 կգ), աչքի են ընկնում մսային վաղահասու-

Թյամբ, մսի լավ որակով և միաժամանակ ունենում են բավա-
կանաչափ բարձր ձվատվություն՝ 150—180 ձու տարեկան:
Բացի այդ, մսաձվատու ցեղերն օգտագործվում են միջցեղա-
յին տրամախաչման մեջ բրոյլերային արտադրության համար
վաղահաս գծերու հիբրիդներ ստանալու համար:

Հայաստանում ներկայումս բուծվում են հավերի երկու
ցեղեր. ձվատու ուղղության՝ ռուսական սպիտակ ցեղը և մսա-
ձվատու ուղղության՝ երևանյան ցեղախումբը, որն արդեն բա-
վականին լայն տարածում է ստացել, և բոլոր հիմքերը կան
հուսալու, որ մոտակա տարիներում նա կվերածվի ինքնու-
րույն ցեղի:

Նպատակահարմար է, բացի թվածներից, ներմուծել ռու-
սուբլիկա հավերի ևս 2—3 բուծարանային ցեղ՝ մսատու, ձվա-
տու և մսաձվատու ուղղության, ինչպես նաև բարձր սելեկ-
ցիայի հիբրիդային գծեր: Երկար տարիների ուսումնասիրու-
թյունները ցույց տվին, որ Հայաստանի պայմաններին համե-
մատաբար ավելի լավ են օդընտելանում ավստրալորպերը,
Նյու-հեմպշիրները, իսկ հայրենական ցեղային խմբերից՝ Մոս-
կովյան հավերը: Այդ ցեղերը և ցեղային խմբերը կարող են
ծառայել որպես արժեքավոր բաղադրիչներ արդյունաբերա-
կան տրամախաչման ու հատկապես մսային ճտեր աճեցնելու
համար: Այդ նույն նպատակի համար անհրաժեշտ է ներմուծել
նաև Սպիտակ Կորնիշ և Սպիտակ Պլիմուտրոկ ցեղերը:

Որպես սագերի պլանային ցեղ, Հայաստանի պայմաննե-
րում բուծվելու համար հեռանկարային կարող են լինել խոլ-
մոգորյան և խոշոր գորշ ցեղերը: Միաժամանակ անհրաժեշտ
է աշխատանք տանել լեռնային տիպի սեփական ցեղ ստեղ-
ծելու՝ տեղական սագերին տրամախաչելով խոլմոգորյան և
խոշոր գորշ ցեղի սագերի հետ: Հաշվի առնելով տեղա-
կան սագերի մի շարք արժեքավոր կենսաբանական ու տնտե-
սական հատկությունները, կարելի է վստահ լինել, որ տոհ-
մային աշխատանքի ճիշտ կազմակերպման դեպքում կհա-
ջողվի համեմատաբար կարճ ժամանակամիջոցում ստեղծել
բարձր մթերատու և տեղական պայմաններին լավ հարմար-
ված սագերի նոր ցեղ:

Տեղական բադերից բացի, որոնք բուծվում են գլխավորա-

պես կոլտնտեսականների, բանվորների և ծառայողների անձնական տնտեսություններում, կոլտնտեսություններում ու առանձին սովխոզներում բուծվում են նաև պեկինյան ցեղի բադեր, որոնք ցուցաբերել են լավ հարմարվածություն ուսպուբլիկայի բնա-կլիմայական տարբեր գոտիների պայմաններին՝ սկսած Արարատյան հարթավայրից մինչև Սևանի ավազանը։ Այդ ցեղը Հայաստանում ընդունված է որպես միակ պլանային ցեղ և իրեն լիովին արդարացնում է։

Հնդկահավերից, որպես պլանային ցեղ, ընդունված է հյուսիսկովկասյան ցեղը, որը լավ հարմարվում է տեղական պայմաններին։ Լայնակուրծք բրոնզագույն հնդկահավերը Հայաստանում դժվար էին կլիմայավարժվում։ Տեղական հրնդկահավերը, թեպետև լավ են ընտելացած մեր պայմաններին, բայց սակավարդյուն են, փոքր կշիռ ունեն (հասունացած հնդկահավը կշռում է մոտ 5—5,5 կգ) և համեմատաբար ուշ են հասունանում։ Ճիշտ կլիներ տոհմային աշխատանք սկսել նաև հնդկահավերի նոր ցեղ ստեղծելու ուղղությամբ՝ տեղական հնդկահավերին հյուսիսկովկասյան և բրոնզագույն ցեղերի հետ տրամախաչելու ճանապարհով։ Հայաստանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտում այդ ուղղությամբ որոշ աշխատանք արդեն տարվում է։ Գյուղատնտեսական թռչունների գոյություն ունեցող ցեղերի կատարելագործման և նորերի ստեղծման համար անհրաժեշտ է կազմակերպել ոչ պակաս 5—6 տոհմաբուծարաններ։ Ներկայումս ուսպուբլիկայում կազմակերպված է ընդամենը մեկ տոհմաբուծական սովխոզ (Գետամեջի սովխոզը) երևանյան ցեղախմբի հավերի կատարելագործման և բազմացման նպատակով։ Տոհմային տնտեսությունները նպատակահարմար է տեղադրել գյուղատնտեսական գոտիների մի քանի խմբերում։ Այդ տնտեսություններում նույնպես անհրաժեշտ է խորը մասնագիտացում անցկացնել՝ նրանք պետք է դառնան ինկուբատորային կայանների հիմնական մատակարարողները տոհմային ձևով և միաժամանակ կոլտնտեսություններին ու սովխոզներին ապահովեն բարձրորակ տոհմային մատղաշով։

Ինկուբատորային-թռչնաբուծական կայաններին կից տոհմային տնտեսություն ստեղծելու փորձը տալիս է դրական ար-

դյունք: Անհրաժեշտ է այդպիսի տնտեսություններ ստեղծել
ռեսպուբլիկայի յուրաքանչյուր ինկուբատորային-թռչնաբու-
ծական կայանին կից և դրանցից ամեն մեկում պահել 6—8
հազար ածան հավեր: Նրանք պետք է մասնագիտացվեն տոհ-
մային ձվեր արտադրելու, առաջին հերթին իրենց՝ ինկուբա-
տորային-թռչնաբուծական կայանների պահանջները տոհմա-
յին ձվի նկատմամբ ապահովելու համար:

Այդ ֆերմաները միաժամանակ պետք է հանդիսանան
գոտեխնիկական կուլտուրայի և առաջավոր փորձի տարած-
ման օջախներ ի՞նչ կողմից սպասարկվող կուլտեստեսություն-
ների համար: Տոհմային ֆերմաների առկայությունը միաժա-
մանակ հնարավորություն կտա ի՞նչ մասնագետներին մաս-
նակցելու տոհմային-սելեկցիոն աշխատանքներին և բարձ-
րացնել իրենց մասնագիտական որակավորումը:

Հոռի-Փամբակի, Սևանի ավազանի և Կենտրոնական գո-
տիններում անհրաժեշտ է կազմակերպել սագաբուծական և բա-
ղաբուծական տոհմային տնտեսություններ, իսկ Արարատյան
հարթավայրի, Հյուսիս-արևելյան և Դարալագյազի գոտինե-
րում՝ հնդկահավաբուծական տոհմային սովխոզներ:

Այս միջոցառումների կենսագործումը կարևոր դեր կխաղա
ռեսպուբլիկայում բուծվող գյուղատնտեսական թռչունների
որակական կազմի բարելավման և նրանց մթերատվությունը
բարձրացնելու գործում:

Հոռի վերադասակարգումը և կառուցվածք: Հոռի ընդ-
լայնված վերադասակարգումն ապահովելու համար անհրա-
ժեշտ է ընդարձակել ինկուբատորային-թռչնաբուծական կա-
յանների թիվը և սովխոզների, թռչնաբուծական ֆաբրիկանե-
րի ու կուլտեստեսությունների ինկուբատորիաները: Առաջիկա
5 տարում մեկ օրական ճտերի թողարկումը պետք է հասնի
20—25 միլիոնի: Դրա համար անհրաժեշտ է ինկուբատորային
թռչնաբուծական կայանների թիվը հասցնել մինչև 25, իսկ
սովխոզների և թռչնաբուծական ֆաբրիկաների ինկուբա-
տորիաների թիվը՝ մինչև 15-ի՝ ապահովելով միջին հաշվով
8—10 շրջանառություն ինկուբատորային կայաններում, ֆաբ-
րիկաներում և սովխոզներում, և ոչ պակաս 5—6 շրջանառու-
թյուն կուլտեստեսային ինկուբատորիաներում: Չպետք է մոռա-

նալ, որ 1970 թ. մեր ռեսպուբլիկայում միայն մսային ուղղութ-
յան թռչնաբուծական ֆաբրիկաները պետք է աճեցնեն 5,5
միլիոն հատ մսատու ճտեր: Չվատու ուղղության ֆաբրիկա-
ները պետք է ունենան 1 միլիոն ածանցներ, դրա համար
կապահանջվի աճեցման ընդունել ոչ պակաս 3 միլիոն հատ մեկ
օրական ճուտ: Կոլտնտեսությունները ոչ մասնագիտացված
սովխոզների ֆերմաները աճեցման կընդունեն 3—4 միլիոն
ճուտ, իսկ կոլտնտեսականների, բանվորների և ծառայողների
անձնական տնտեսությունների պահանջը կհասնի ոչ պակաս
4—5 միլիոն հատի:

Այդպիսի մեծաքանակ մեկ օրական ճտերի թողարկումը
հնարավորություն կտա աճեցնել նորոգող մատղաշների հար-
կավոր քանակ, կատարել ածան հավերի հոտի ամենամսյա
համալրում՝ վանդակային պահվածքի դեպքում և տարվա ըն-
թացքում երկու-երեք համալրում՝ սովխոզներում և կոլտնտե-
սային ֆերմաներում՝ զրոսաբակային պահվածքի դեպքում:

Ասլրանքային ֆերմաներում վառեկների տեսակադար կշի-
ռը հոտում անհրաժեշտ է հասցնել 70—75 տոկոսի: Հոտի
այդպիսի կառուցվածքը կօժանդակի հավերի ձվատվության
զգալի բարձրացմանը և համախառն արտադրանքի ավելաց-
մանը:

Նորոգման մատղաշի բավարար քանակի առկայությունը
հնարավորություն կտա խիստ ընտրություն կատարել և հոտը
համալրել միայն լավ զարգացած մատղաշով, համարձակորեն
խոտանելով վատ զարգացած, սակավարդյուն թռչուններին:

Առանձին մասնագետների կողմից արվող առաջարկն այն
մասին, որ նպատակահարմար է զրոսաբակային պահվածքի
պայմաններում սահմանափակվել ածան հավերի հոտի միայն
մեկ անգամվա համալրումով, չի կարելի ճիշտ համարել, քանի
որ հավերը հասակի հետ նկատելի չափով իջեցնում են ձվա-
տվությունը, ուստի ցածր մթերատու թռչունների պարբերական
խոտանումը և նրանց փոխարինումը լավ զարգացած վառեկ-
ներով, անշուշտ, կօժանդակի մթերատվության զգալի բարձ-
րացմանը: Այդ հաստատվում է նաև Հայաստանի առաջավոր
կոլտնտեսությունների և թռչնաբուծական ֆաբրիկաների փոր-
ձերով:

Որպես կանոն, հերվնեկ (երկրորդ տարվա ձվատվության) հավերի տարեկան ձվատվությունը վառեկների ձվատվության 80—85 տոկոսից չի անցնում: Բացի այդ, վառեկների բարձր տեսակարար կշիռը հոտում մեղմացնում է ձվատվության մակարդակի սեզոնային տատանումները և պահվում է ձվի արտադրության համաշափությունը տարվա գրեթե բոլոր ամիսներին:

ԹՈՋՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓԻ ՃԻՇՏ ԸՆՏՐԵԼՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թռչնաբուծության մասնագիտացման ու նրա արդյունավետության բարձրացման կարևոր պայմաններից մեկը տնտեսության առավել նպատակահարմար շափի ճիշտ սահմանումն է, ելնելով տվյալ վայրի կոնկրետ պայմաններից:

Մեր երկրի շատ մարզերի և ռեսպուբլիկաների, այդ թվում նաև Հայկական ՍՍՌ-ի փորձով ապացուցված է, որ մանր թռչնաբուծական ֆերմաները, որտեղ ածանների գլխաքանակը 3000-ից պակաս է, իրենց տնտեսական տեսակետից չեն արդարացնում: Այդպիսի տնտեսություններում, որպես կանոն, շատ ցածր է լինում աշխատանքի արտադրողականությունը: Մեկ միավոր հատիկային կուլտուրաների տարածության հաշվով արտադրվում է աննշան քանակի ձու և միս, բացի այդ, շատ ցածր է լինում արտադրանքի ապրանքային մասի տեսակարար կշիռը:

Հայկական ՍՍՌ-ի դյուղատնտեսության միևիստրության դյուղատնտեսության էկոնոմիկայի և կազմակերպման ինստիտուտի տվյալներով մեր ռեսպուբլիկայի պայմաններում կուլտնտեսային թռչնաբուծական ֆերմաները ածանների նույնիսկ 1500 գլխաքանակով շահութաբեր չեն: 100 հեկտար հատիկային ցանքերի հաշվով այդպիսի ֆերմաները արտադրում են ընդամենը 9 հազար ձու, շատ բարձր է լինում արտադրանքի ինքնարժեքը և շատ ցածր՝ աշխատանքի արտադրողականությունը:

Այսպես, օրինակ, 101-ից մինչև 200 հավ ունեցող ֆերմա-

ներում 100 հեկտար հատիկային ցանքի հաշվով արտադրվում է ընդամենը 2200 ձու, 1000 ձվի արտադրության վրա ծախսված աշխատանքը կազմում է 71,4 աշխօր, իսկ մի տասնյակի ձվի ինքնարժեքը՝ 1 ո. 90 կ.:

Երբ ածանների գլխաքանակը հասնում է մինչև 700-ի, ձվի արտադրությունը, 100 հեկտար հացահատիկային ցանքի հաշվով, ավելանում է մոտ երեք անգամ, հասնելով 6200: 100 ձվի արտադրության վրա ծախսված աշխատանքը իջնում է կիսով չափ, մոտավորապես այդքանով էլ իջնում է ձվի ինքնարժեքը, բայց, այնուամենայնիվ, տնտեսությունը շարունակում է մնալ անշահավետ:

Անգամ 1500 գլուխ հասուն թռչուն ունեցող ֆերմաները դեռ շահութաբեր չեն լինում, շնայած որ նրանց արտադրական ցուցանիշները համեմատաբար լավանում են:

Երբ ածանների գլխաքանակը 2000-ից անցնում է, ֆերմաներն իրենց արտադրական ցուցանիշներով արդեն մոտենում են շահավետ տնտեսությունների մակարդակին: Այդպիսի ֆերմաները 100 հեկտար հացահատիկային ցանքի հաշվով արտադրում են 17,4 հազար ձու, 1000 ձվի արտադրության վրա ծախսվում է 11 աշխօր, իսկ ձվի մեկ տասնյակի արժեքը իջնում է մինչև 65—70 կոպեկի: Միայն 3000-ից ավել թռչնագլխաքանակ ունեցող ֆերմաներն են դառնում կայուն շահութաբեր:

Երևանի մերձքաղաքային զոնայի թռչնաբուծական տնտեսությունների ցուցանիշների ուսումնասիրությունը, որը կատարվել է նույն ինստիտուտի կողմից 1964 թ. սկզբներին, նորից են հաստատում, որ շահութաբեր են լինում միայն այն ֆերմաները, որտեղ հասակավոր թռչունների գլխաքանակը 3000-ից ավել է (աղյուսակ 6):

Այս տվյալները ցույց են տալիս, որ կոլտնտեսային թռչնաբուծական ֆերմաների գործունեության շահավետությունը ապահովելու համար պետք է հավերի գլխաքանակը հասցնել առնվազն 3 հազարի, իսկ ամենանպատակահարմար, ավելի ռացիոնալ կոլտնտեսային թռչնաբուծական ֆերմայի չափը Հայաստանի պայմաններում պետք է համարել 5—6 հազար գլուխ հավ:

Թռչնաբուծական ֆերմայի շափի և նրա շահութաբերության փոխադարձ կապը (Հայկ. ՍՍՌ գ/տ էկոնոմիկայի և կազմակերպման ինստիտուտի տվյալները)

Ֆերմաների շափը ըստ թռչունի գլխաքանակի	Ֆերմաների թիվը	Ֆերմայի միջին շափը (գլխաքանակը)	Միջին ձվատու թիվը (հաս)	Միջին ձվատու մեկ զույգի վրա զարգացած ձվերի քանակը	(ձվաբերության միջին ցուցանիշը)	Միջին ձվաբերության տարբերությունը
Մինչև 400	36	245	68	33,4	114,7	—58,2
401-800	59	578	71	20,7	115,3	—43,2
801-1200	47	1039	75	19,5	108,9	—43,0
1201-1600	34	1323	83	14,9	93,8	—29,8
1601-2000	23	1817	89	14,4	74,9	—15,5
2001-3000	17	2299	94	11,5	70,2	—10,2
3000-ից ավելի	9	6478	114	9,5	64,7	+ 5,1

Նույն օրինաչափությունը հաստատվում է նաև Միության տարբեր բնակլիմայական պայմաններում գտնվող կոլտնտեսային թռչնաբուծական ֆերմաների տվյալներով (աղյուսակ 7)։

Ինչպես ցույց են տալիս բերված տվյալները, առավել բարձր արտադրական ցուցանիշներ ունեն այն ֆերմաները, որտեղ հասակավոր թռչունի գլխաքանակը 3000-ից ավելի է։

ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՎԱԾՔԻ ԻՆՏԵՆՍԻՎ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԵՎ ՏԵՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ

Բազմաթիվ հետազոտություններով հաստատված է, որ թռչնաբուծության բարձր արտադրողականության համար կարևոր նշանակություն ունի նաև թռչունի պահվածքի եղանակը։

Հայտնի է, որ յուրաքանչյուր ընտանի կենդանու նորմալ, առավել ևս բարձր արտադրողականության առաջին և գլխավոր պայմանը նրա օրգանիզմի նորմալ կենսագործունեությունն է, որն ապահովվում է պահվածքի այնպիսի պայմանների ստեղծումով, որոնք համապատասխանում են նրա կենսաբանական բնությանը:

Գյուղատնտեսական թռչունների համար, մասնավորապես, այդ պայմանները գոյանում են մի շարք արտաքին գործոններից, ինչպիսիք են ջերմաստիճանը, օդափոխումը, հարաբերական խոնավությունը, լույսը (բնական ինսուլացիա և արհեստական լուսավորություն), ցամաքը, շենքի միկրոկլիման, պահվածքի եղանակը, նստեցման խտությունը և այլն: Պահվածքի պայմանների հետ անքակտելիորեն կապված է թռչունի կերակրումը և խնամքը:

Հատուկ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բոլոր գործոնները փոխադարձաբար սերտ կապի մեջ են գտնվում և, այդ պատճառով, ավելի բարձր արդյունք է ստացվում այն դեպքում, երբ նրանք ներգործում են զուգորդված, համատեղ: Թռչունի պահվածքի եղանակները մեծ չափով պայմանավորված են տվյալ շրջանի կլիմայական պայմաններով: Մինչև վերջին 10—15 տարիները պահվածքի ամենատարածված եղանակը Հայաստանում էքստենսիվ՝ ազատ զբոսաբակային պահվածքի եղանակն էր:

Այդ դեպքում թռչունն օգտվում է պրակտիկորեն գրեթե անսահմանափակ զբոսաբակերով և մերձգյուղային արոտավայրերով: Վերջին ժամանակներս կոլտնտեսություններում և սովխոզներում, տիպային թռչնանոցների մասսայական կառուցման շնորհիվ, սկսեց գերակշռել պահվածքի այսպես կոչված կիսաինտենսիվ եղանակը: Այս դեպքում թռչունն օգտվում է սահմանափակ զբոսաբակերով, որն զբաղեցնում է սովորաբար փոքր տարածություն, մոտավորապես 2—3 քմ մեկ հասուն թռչունի համար:

Հայաստանի շրջանների մեծ մասում շոր, ցամաքային կլիմայի պայմաններում այդպիսի զբոսաբակերում բուսականու-

Կոլտնտեսային թոշնաբուծական ֆերմայի շափի (մեծության) կապը նրա գործունեության արդյունավետության հետ (ըստ Լ. Տ. Բաբիյի)

Ցուցանիշները	Կոլտնտեսային ֆերմաների խմբերը ըստ հասակավոր թռչունի քանակի (գլուխ)			
	մինչև 1000	1000— 3000	3000— 5000	5000— 10000 և ավելին
Ֆերմաների թիվը %	35,0	47,6	11,7	5,7
Առանձին խումբ ֆերմաների տեսակարար կշիռը				
Ձվի համախառն արտադրան- քի մեջ	9,1	38,8	20,0	32,1
Թռչունի մսի համախառն ար- տադրանքի մեջ	6,1	28,5	24,0	41,4
Պետղնումների մեջ.				
Ձվի	9,0	38,9	20,8	31,3
Թռչունի մսի	4,9	33,5	21,8	39,8
Հավերի տարեկան միջին ձվա- տրվությունը (հատ)	72	78	86	100
Ինքնարժեքը (ռուբ.)				
1000 ձվի	152,3	98,8	83,6	72,7
1 ց թռչունի մսի	170,9	121,8	101,9	93,8

Թյունը սովորաբար երկար չի մնում, կարճ ժամանակաշրջա-
նում արմատախիլ է արվում թռչունների կողմից: Արդեն հու-
լիսի սկզբին կամ կեսերին այդպիսի զբոսաբակերը զրկվում
են բուսականությունից: Այդ պատճառով նրանք թռչունների
համար ծառայում են ավելի շուտ որպես զբոսատեղ մաքուր
օդում, քան կանաչ կերի աղբյուր: Ուստի սահմանափակ զբո-
սաբակի պայմաններում թռչունին պետք է տրվի թարմ հնձած
և մանրացրած կանաչ:

**ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՎԱԾՔԻ ԻՆՏԵՆՍԻՎ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Թռչնաբուծության մեջ օգտագործվում է ինտենսիվ պահ-
վածքի երկու հիմնական եղանակ. վանդակային և խորը շփոխ-
վող ցամաքարի վրա պահվածք:

Հայաստանի պայմաններում այդ երկու եղանակները մեր
կողմից առաջին անգամ փորձարկվեցին 1956 թ. էջմիածնի
թռչնաբուծական ֆաբրիկայում:

Ներկայումս արդեն կուտակված են բավականաչափ փաս-
տական տվյալներ, որոնք թույլ են տալիս դատել Հայաստա-
նի պայմաններում թռչունի պահվածքի այս կամ այն եղա-
նակի առավելությունների և պակասությունների մասին:

Այդ տվյալներն ամենից առաջ ցույց են տալիս, որ հենց
պահվածքի այդ առաջադեմ՝ ինտենսիվ եղանակների կիրառ-
ման շնորհիվ էր, որ մեր ռեսպուբլիկայում ստեղծվեցին խո-
շոր արդյունաբերական տիպի թռչնաբուծական տնտեսու-
թյուններ:

**ՊԱՀՎԱԾՔԻ ՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԵՂԱՆԱԿԸ
ԹՈՉՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՖԱԲՐԻԿԱՆԵՐՈՒՄ**

Թեպետ այդ ձեռնարկությունները դեռ երիտասարդ են և
չունեն նույնիսկ լրիվ ավարտված տեխնոլոգիական ցիկլ,
այնուամենայնիվ, դրանք արդեն դարձել են թռչնաբուծական
մթերքների արտադրության լուրջ օջախներ: Այդ մասին են
խոսում, մասնավորապես, հետևյալ փաստերը:

Դեռ 1959 թ. ձվի արտադրության տեսակարար կշիռը մի-
այն նորաստեղծ երեք թռչնաբուծական ֆաբրիկաներում՝ էջ-
միածնի, Լենինականի և Նրեանի, կազմում էր ամբողջ հան-
րային սեկտորի համախառն արտադրանքի 33,6 տոկոսը, իսկ
թռչունի մսի արտադրության տեսակարար կշիռը հասավ 38,4
տոկոսի:

Նշված ֆաբրիկաները նույն թվականին տվեցին կոլտըն-տեսային սեկտորի ձվի համախառն արտադրանքի 53,4 տոկոսը, իսկ մսի արտադրանքի՝ 42 տոկոսը: Ֆաբրիկաներում հավերի միջին ձվատվությունը հասավ 150 հատի կամ երկու անգամ բարձր էր, քան կոլտնտեսային թռչնաբուծական ֆերմաներում: Միևնույն ժամանակ այդ ֆաբրիկաները մեծ դեր խաղացին թռչնաբուծության առաջավոր եղանակները կոլտնտեսություններում արմատավորելու գործում: Ամեն տարի նրանք ինկուբատորային-թռչնաբուծական կայաններին բաց են թողնում 100 հազարավոր տոհմային ձվեր և կոլտնտեսություններին, կոլտնտեսականներին, բանվորներին և ծառայողներին վաճառում են մեծ քանակությամբ մեկ օրական ճտեր: Երկարամյա արտադրական փորձը ցույց տվեց, որ մատղաշ աճեցնելու վանդակային եղանակի առավելությունները Հայաստանի պայմաններում միանգամայն անվիճելի են: Այդ եղանակի օգտագործման դեպքում մեկ օրականից մինչև երկու ամսական հասակը նրանք աճեցվում են մարտկոցային վանդակներում, իսկ հետո տեղափոխվում ճամբարային տնակները. որտեղ պահվում են մինչև 4,5—5 ամսական դառնալը, այսինքն՝ մինչև նրանց տեղափոխելը ածանցների վանդակային ցեխը կամ մայրական հոտը: Այդպիսի կոմբինացված եղանակով աճեցնելու դեպքում մատղաշի պահպանումը հասնում է 93—95 տոկոսի: Ռեսպուբլիկայի թռչնաբուծական ֆաբրիկաների փորձը ցույց տվեց, որ ճտերին երկու ամսից ավելի վանդակներում թողնելը (մանավանդ ամառվա շոգ ամիսներին), նկատելիորեն դանդաղեցնում է նրանց աճն ու զարգացումը և բարձրացնում է անկումների տոկոսը:

Մատղաշի աճեցման վանդակային (կոմբինացված) եղանակը վերջին ժամանակներս սկսվեց կիրառվել նաև մի շարք կոլտնտեսային թռչնաբուծական ֆերմաներում: Այդ եղանակը հաջողությամբ օգտագործում է Շահումյանի շրջանի միջկոլտնտեսային թռչնաբուծական ֆաբրիկան: Ճտերի աճեցման վանդակային եղանակի կարևոր առավելություններից մեկը արտադրական տարածության ռացիոնալ օգտագործումն է: Այն հնարավորություն է տալիս մեկ միավոր տարածության վրա պահել 3—4 ավելի մատղաշ, քան զբոսաբակային եղա-

նակով. միաժամանակ ապահովում է մատղաշի պահպանման բարձր տոկոս: Այսպես, օրինակ, կոմունալ ճտանոցներում, կամ ստացիոնար տնակներում յուրաքանչյուր քառակուսի մետր տարածության վրա տեղավորվում է 16—20 գլուխ 1—60 օրական ճուտ, իսկ նույնքան տարածություն ունեցող վանդակի մեկ բաժնում տեղավորվում է 50—60 ճուտ, եթե կերամանները ամրացված են վանդակի միայն մի կողմից, կամ 70—80 ճուտ, եթե կերամանները ամրացված են երկու կողմից: Բայց քանի որ վանդակն ունի հինգ այդպիսի բաժին, ապա նրա տարողությունը կազմում է 250—300, կամ 350—400 գլուխ: Ճտերի աճեցման ու հավերի պահվածքի վանդակային եղանակի հետ միասին մեր ռեսպուբլիկայի կոլտնտեսային թռչնաբուծական ֆերմաներում, սովխոզներում և թռչնաբուծական ֆաբրիկաների մայրական ցեխերում վերջերս տարածում է ստանում նաև մյուս ինտենսիվ եղանակը՝ ճտերի աճեցումը և հավերի պահվածքը խորը, երկար ժամանակ շփոխվող ցամքարի վրա:

Այս եղանակի տարածմանը նկատելիորեն օժանդակում է կոլտնտեսություններում և սովխոզներում լայն գաբարիտային թռչնանոցների կառուցումը, որոնց տարողությունը կազմում է 6—8 հազար գլուխ հասուն թռչուն:

Պահվածքի այդ երկու եղանակների զուգահեռ տարածումն անհրաժեշտություն առաջացրեց ուսումնասիրելու նրանց համեմատական արդյունավետությունը Հայաստանի պայմաններում: Երեք տարվա ընթացքում կատարված արտադրական փորձերը ցույց տվեցին, որ հավերին խորը շփոխվող ցամքարի վրա պահելու դեպքում (կերակրման և խնամքի նույնանման պայմաններում) նրանց տարեկան միջին ձվատվությունը կազմում է 150—151 հատ, որը ոչ միայն չի գիջում վանդակային ածանների ձվատվությանը, այլ որոշ չափով անգամ գերազանցում է (աղյուսակ 8):

Դիտողությունները միաժամանակ ցույց տվին, որ վանդակային ածանները շատ զգայուն են կերակրման ռեժիմի խախտման, կերաբաժնի փոփոխության և օդի ջերմաստիճանի տատանումների նկատմամբ: Այս գործոններով է հիմնականում բացատրվում վանդակային ածանների ձվատվության

էջմիածնի բռնաբուծական ֆարիկայում բուծվող ուսական սպիտակ ցեղի հավերի միջին ձվատվությունը վանդակներում և խոր շփոփոխվող ցամաքի վրա պահելու դեպքում

Ամիսները	Փորձի առաջին տարում		Փորձի երկրորդ տարում		Փորձի երրորդ տարում		Միջին 3 տարում	
	ա- միջնակարգ միջին	ա- միջնակարգ միջին	ա- միջնակարգ միջին	ա- միջնակարգ միջին	ա- միջնակարգ միջին	ա- միջնակարգ միջին	ա- միջնակարգ միջին	ա- միջնակարգ միջին
Հունիս	10,2	9,3	12,4	9,5	9,1	10,7	10,5	9,8
Փետրվար	12,8	15,7	12,1	10,6	10,6	10,2	11,8	12,2
Մարտ	9,7	14,0	12,0	11,1	12,8	11,8	11,5	12,5
Ապրիլ	12,0	13,6	10,7	11,6	8,3	12,8	10,3	12,7
Մայիս	15,2	16,5	14,7	14,9	6,4	15,1	12,1	15,5
Հունիս	9,4	9,8	14,4	16,4	9,1	14,4	10,9	13,5
Հուլիս	8,0	11,8	14,1	15,0	10,9	11,7	11,0	12,8
Օգոստոս	3,5	16,3	15,0	12,8	10,9	15,2	6,8	14,7
Սեպտեմբեր	4,0	9,4	13,3	9,7	11,4	12,2	9,5	10,4
Հոկտեմբեր	8,3	12,6	13,0	12,4	11,9	13,2	11,7	12,6
Նոյեմբեր	10,2	10,2	9,6	13,6	10,7	13,0	10,1	12,2
Դեկտեմբեր	9,8	11,2	11,2	12,4	9,7	12,2	10,2	11,9
Ընդամենը	113,1	150,3	152,5	150,6	121,8	152,5	129,0	151,0

նկատելի տատանումները ըստ ամիսների: Փորձերի տվյալները միաժամանակ ցույց են տալիս, որ երբ վանդակային ածանցների համար ստեղծվում են կերակրման և պահվածքի նորմալ պայմաններ, ապա նրանք ձվատվությամբ ոչ միայն չեն զիջում խոր ցամաքի վրա պահվող ածանցներին, այլ նույնիսկ գերազանցում են նրանց: Այդ մասին ռենխոսում փորձի երկրորդ տարվա տվյալները, երբ վանդակային ածանցների միջին ձվատվությունը հասավ 152,5 հատի և գերազանցեց խոր ցամաքի վրա պահվող ածանցների ձվատվությանը: Լիարժեք կերակրման, լավ խնամքի և թռչունի ճիշտ ընտրության դեպքում վանդակային ածանցներից կարելի է ստանալ շատ քարձր ձվատվություն: Այդ հաստատված է երկարամյա ար-

տադրական փորձերով թե մեզ մոտ, թե արտասահմանյան երկրներում: Այսպես, օրինակ, Մոսկվայի մարզի Տոմիլինյան թռչնաբուծական ֆաբրիկայում 6—11 ամսական վանդակային հավերի տարեկան ձվատվությունը կազմել է 204 ձու, իսկ զբոսաբակային պայմաններում գտնվող ածաններինը՝ 190 ձու: Ադլերի թռչնաբուծական ֆաբրիկայում վանդակային ածանների տարեկան ձվատվությունը կազմել է 190 ձու, իսկ խորը ցամքարի վրա պահվող ածաններինը՝ 191 ձու:

10 տարվա միջին տվյալներով ԱՄՆ-ի մի խումբ տնտեսություններում հավերի միջին ձվատվությունը վանդակային պահվածքի պայմաններում կազմել է 197,9 ձու, իսկ զբոսաբակային պահվածքի պայմաններում՝ հատակի վրա 180,7: Բերած տվյալները համոզիչ կերպով ցույց են տալիս, որ հավերից բարձր ձվատվություն կարելի է ստանալ ինչպես զբոսաբակային, այնպես էլ վանդակային պահվածքի պայմաններում, բայց վանդակային ածանները ավելի զգայուն և պահանջկոտ են ինչպես կերերի, այնպես էլ շենքի միկրոկլիմայի փոփոխումների նկատմամբ:

Այլ կերպ ասած, պահվածքի վանդակային եղանակի կիրառումը պահանջում է սպասարկման ավելի բարձր կուլտուրա: Այս եղանակի կիրառման դեպքում շատ կարևոր նշանակություն ունի նաև վանդակի յուրաքանչյուր բաժնում տեղադրվող թռչունների քանակը: Այդ գործոնը նկատելի ազդեցություն է թողնում ածանների ձվատվության և կենսունակության վրա:

Արարատյան հարթավայրի պայմաններում վանդակային պահվածքի դեպքում հավերի տեղադրման խտության օպտիմալ նորմաները որոշելու նպատակով էջմիածնի թռչնաբուծական ֆաբրիկայում հատուկ գիտա-արտադրական փորձեր դրվեցին: Փորձի համար առանձնացվեցին 704 վառեկներ (մեկ աշխատանքային տեղամասում), որոնք տեղադրվեցին մարտկոցային վանդակներում՝ 140—145 օրական հասակից, այսինքն՝ ձվարկումից 15—20 օր առաջ: Վառեկները ըստ տեղադրման խտության բաժանվել էին 4 խմբի: Առաջին խմբում տեղավորվել էին շուրսական, երկրորդ խմբում՝ հինգական, եր-

րորդ խմբում՝ վեցական և չորրորդ խմբում՝ յոթական գլուխ՝ վանդակի յուրաքանչյուր բաժնում:

Կերակրման և խնամքի պայմանները բոլոր խմբերի համար միատեսակ էին: Փորձը տևեց 6 ամիս՝ հունվարի 1-ից մինչև հուլիսի 1-ը: Այդ ընթացքում հաշվի էին առնվում յուրաքանչյուր խմբի միջին ձվատվությունը և գլխաքանակի պահպանումը: Փորձի ընթացքում թռչունի խոտանում չէր կատարվում: Ուսումնասիրությունը տվեց հետևյալ արդյունքը:

Առաջին խմբում մեկ ածանի միջին ձվատվությունը 6 ամսում կազմեց 63,8 ձու: Երկրորդ խմբում՝ 57,9, երրորդ խմբում՝ 51,0, չորրորդ խմբում՝ 48,8 ձու:

Հավերի անկումը կազմեց. առաջին խմբում 8 գլուխ, երկրորդում՝ 11, երրորդում՝ 25, չորրորդում՝ 35: Պետք է նշել, որ ամեն անգամ փորձնական խմբերի հավերի անկման դեպքում խումբը լրացվում էր նույն հասակի թռչուններով:

Ինչպես երևում է բերված տվյալներից, տեղավորման խտության ավելացման դեպքում (վանդակի մեկ բաժնում 4-ից ավելի) հավերի ձվատվությունն օրինաչափորեն ընկնում է, իսկ անկումների տոկոսը՝ համեմատաբար ավելանում: Հետաքրքրական է նշել, որ այդ երևույթը նկատվում էր բոլոր ամիսների փորձերի ընթացքում՝ անկախ օդի ջերմաստիճանի փոփոխությունից:

Այդ տվյալների հիման վրա վանդակային ածանների տեղավորման խտության օպտիմալ նորման Արարատյան հարթավայրի պայմաններում պետք է համարել 4—5 ածան մարտկոցային վանդակի ամեն մի բաժնում և լրացուցիչ, դեռ ձվարկումը չսկսած, մեկ վառեկ: Այլ կերպ ասած, յուրաքանչյուր բաժնում 5—6 թռչուն:

ՀԱՎԵՐԻՆ ԽՈՐԸ, ԵՐԿԱՐ ԺԱՄԱՆԱԿ ԶՓՈԽՎՈՂ ՑԱՄՔԱՐԻ ՎՐԱ ՊԱՀԵԼՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին տարիներս թե՛ արտասահմանում, և թե՛ Սովետական Միությունում լայն տարածում է ստացել հավերին խորը ցամաքարի վրա պահվածքի եղանակը: Ուսումնասիրությունները

ցույց են տալիս, որ խորը շերտով փռած և երկար ժամանակ չփոխվող (փոխվում է տարվա մեջ մեկ անգամ) ցամքարի օգտագործումը կանխում է վնասակար գազերի և ավելորդ խոնավության կուտակումը թռչնանոցներում և ստեղծում է բարենպաստ միկրոկլիմա: Ցամքարի ստորին շերտերում տեղի է ունենում ինտենսիվ միկրոբիոլոգիական պրոցես, որի շնորհիվ սինթեզվում է բիոլոգիական մի շատ ակտիվ նյութ՝ B₁₂ վիտամինը, որը շատ կարևոր դեր է խաղում թռչունի օրգանիզմում տեղի ունեցող նյութափոխանակության և հատկապես կերի պարունակած բուսական ծագում ունեցող սպիտակուցների յուրացման պրոցեսներում:

Նույն միկրոբիոլոգիական պրոցեսների հետևանքով ցամքարի խորը շերտերում առաջանում է կենսաբանական տաքություն, որը ձմեռվա ամիսներին բարձրացնում է շենքի ջերմաստիճանը 3—5° և հասնում է 9—10° ըստ Ցելսիուսի: Թվարկած գործոնների բարերար ազդեցության շնորհիվ բարձրանում է թռչունի կենսունակությունը և մթերատվությունը:

Հայաստանի սլայմաններում խորը ցամքարի գործադրման արդյունավետությունը ուսումնասիրելու նպատակով էջմիածնի թռչնաբուծական ֆաբրիկայում դրվեց հետևյալ գիտա-արտադրական փորձը: Մայրական հոտի թռչնանոցներից, որտեղ 6080 գլուխ ռուսական սպիտակ ցեղի միլենույն հասակի հավեր պահվում էին սովորական զբոսաբակային եղանակով, այսինքն՝ ամեն օր փոխվող ցամքարի վրա, երկուսում (2 և 5) դեկտեմբերի 20-ից՝ կիրառվեց խորը ցամքարի վրա պահելու եղանակը, իսկ 1 թռչնանոց թողնվեց որպես ստուգիչ, այսինքն՝ ցամքարը փոխվում էր ամեն օր: Մինչև փորձի սկսվելը (դեկտեմբերի 1-ից 20-ը) հավերի միջին ձվատվությունը կազմում էր. 1 թռչնանոցում 26 տոկոս (միջին գլխաքանակը 2211 հավ), 2 թռչնանոցում 23 տոկոս (միջին գլխաքանակը 2507 հավ) և 5 թռչնանոցում՝ 22 տոկոս (միջին գլխաքանակը 2169 հավ):

Այդպիսի ցածր ձվատվության պատճառը դրսի օդի ջերմաստիճանի սուր իջեցումն էր, սկսած դեկտեմբերի 9-ից, քանի որ դեկտեմբերի սկզբին 1 թռչնանոցում միջին ձվատվու-

թյունը կազմում է 45 տոկոս, 2 թռչնանոցում՝ 43,2 տոկոս և 5 թռչնանոցում՝ 45,5 տոկոս:

Փորձի սկզբնական-նախապատրաստական շրջանում՝ դեկտեմբերի 20-ից մինչև 31-ը, ածանցների քանակը թռչնանոցներում մոտավորապես հավասարեցվեց. 1 թռչնանոցում այն կազմում էր 2125 գլուխ, 2 թռչնանոցում՝ 2102 և 5 թռչնանոցում՝ 2000 գլուխ: Հավերի կենդանի քաշը կազմում էր՝ առաջին թռչնանոցում 1,65 կգ, երկրորդ և հինգերորդ թռչնանոցներում՝ 1,70 կգ: Տեղավորման խտությունը բոլոր թռչնանոցներում նույնն էր՝ 5 գլուխ 1 քմ հատակի վրա: Փորձնական թռչնանոցների հատակը խնամքով մաքրելուց և ախտահանելուց հետո, ծածկվեց շոր մարած կրի շերտով՝ մեկ քառակուսի մետրի վրա 1 կգ հաշվով, որից հետո փռվեց շոր ցամքար (աշնանացան ցորենի ծղոտից) 12 սմ հաստությամբ: Տասնորյակը մեկ ցամքարի երեսը ծածկվում էր շոր մարած կրի բարակ շերտով՝ 0,5 կգ 2 քառակուսի մետրին, իսկ նրա վրայից ավելացվում էր ցամքարի նոր շերտ՝ 10—11 սմ հաստությամբ, մինչև որ շերտավորվող ցամքարի հաստությունը հասավ 30—35 սմ: Ցամքարի վերին շերտում կեղևակալումը կանխելու համար այն պարբերաբար եղանով խառնվում էր: Շենքի անընդմեջ օդափոխումը թռչնանոցում ապահովում էր նորմալ հաբաբերական խոնավությունը (50—55 տոկոսի սահմաններում), որով և կանխվում էր ցամքարի խոնավացումը:

Բոլոր երեք թռչնանոցներում էլ թռչունը կերակրվում էր նույն կերաբաժնով, այն հաշվով, որ ստացվի բավականաչափ բարձր՝ ոչ պակաս 50% ձվատվություն, կամ յուրաքանչյուր ածանցից ամսական ոչ պակաս 15 ձու: Խնամքի և պահվածքի մյուս պայմանները բոլոր թռչնանոցներում նույնպես հավասար էին:

Փորձը տևեց 6 ամիս՝ հունվարի 1-ից մինչև հուլիսի մեկը (աղյուսակ 9):

Ստացված փաստական տվյալների համաձայն խորը չփոփոխվող ցամքարի վրա պահվող հավերի ձվատվությունը 2 թռչնանոցում կազմեց 67,6 հատ, 5 թռչնանոցում՝ 69,6 հատ, իսկ 1 թռչնանոցում, որտեղ հավերը պահվում էին

ամեն օր փոխվող ցամքարի վրա, նույն ժամանակամիջոցում՝ 53,6 հատ, կամ միջին հաշվով 15 ձվով, կամ 28% -ով պակաս, քան փորձնական թռչնանոցներում: Ձվերի կշռի մեջ փորձնական և ստուգիչի խմբերում տարբերություն չեղավ, այն տատանվում էր 55—56 գրամի սահմաններում:

Նկատելի տարբերություն չնկատվեց նաև թռչունների կենդանի քաշի մեջ: Փորձի վերջում հավերի քաշը ստուգիչ թռչնանոցներում, համեմատած փորձի սկզբում ունեցած քաշի 15,1 տոկոս: Անկումը կազմեց՝ փորձնական թռչնանոցներում 40—60 գ: Խորը ցամքարի վրա պահված թռչունները ցուցաբերեցին ավելի բարձր կենսունակություն, քան սովորական, ամեն օր փոխվող ցամքարի վրա պահվողները: Փորձի ընթացքում 2-րդ և 5-րդ թռչնանոցներում, միասին վերցրած, խոտանվեց 423 գլուխ թռչուն կամ սկզբնական գլխաքանակի 10,6 տոկոսը, իսկ ստուգիչ թռչնանոցում՝ 315 գլուխ, կամ 15,1 տոկոս: Անկումը կազմեց փորձնական թռչնանոցներում՝ 45 գլուխ կամ 1,1 տոկոս, իսկ ստուգիչ թռչնանոցում՝ 62 գլուխ կամ 3,1 տոկոս:

Դրսի օդի մինուս 25—27° ջերմաստիճանի (հունվարի և փետրվարի առաջին կեսին) ժամանակ 1 թռչնանոցում ջերմաստիճանը տատանվում էր մինուս 3—4° Յ սահմաններում, իսկ 2 և 5 թռչնանոցներում, այն կազմում էր պլյուս 2—4 աստիճան:

Երկարամյա դիտումները ցույց են տվել, որ Հայաստանի պայմաններում, երբ թռչնանոցի ջերմաստիճանը 4—5° իջնում է նկատելիորեն, պակասում է հավերի ձվատվությունը, իսկ մինուսային ջերմաստիճանը (մայնավանդ 3—4° և ավել) առաջացնում է ձվատվության խիստ անկում: Այդ երևում է նույն աղյուսակի տվյալներից: 1 թռչնանոցում, որտեղ հունվարին ջերմաստիճանը զերոյից ցածր էր (—2—4° Յ) մեկ ածանի ձվատվությունը կազմեց 5,8 հատ, իսկ 2 թռչնանոցում, որտեղ միջին ջերմաստիճանը տատանվում էր պլյուս 3—4° Յ սահմաններում, այն կազմեց 9 ձու, կամ 55 տոկոսով ավել: 5 թռչնանոցում, որտեղ ջերմաստիճանը պահանվում էր պլյուս 2—4° Յ սահմաններում, հավերի ձվատվությունը ստուգիչ խմբի համեմատությամբ 40 տոկոսով

ավել էր: Միջին հաշվով դրական ջերմաստիճան ունեցող թըռչ-
նանոցների հավերի ձվատվությունը հունվար ամսում 46 տո-
կոսով բարձր էր, քան բացասական ջերմաստիճան ունեցող
ստուգիչ խմբի հավերիներ:

Միաժամանակ պետք է նշել, որ ջերմային գործոնը միակ
խթանիչը չէ խորը ցամքար օգտագործելու ժամանակ: Այս-
պես, օրինակ, ապրիլին, երբ ջերմաստիճանը բոլոր թռչնա-
նոցներում մոտավորապես նույն մակարդակի վրա էր և տա-
տանվում էր $14-20^{\circ}$ Ց սահմաններում, խորը ցամքարի վրա
պահվող թռչունների ձվատվությունը կազմեց $14-14,8$ ձու,
իսկ ստուգիչ թռչնանոցում՝ $12,5$ ձու, կամ մոտ 15 տոկոսով
պակաս: Այստեղ դրսևորվում է նաև B_{12} վիտամինի խթանիչ
դերը, որը գոյանում է խորը ցամքարի ստորին շերտերում՝
միկրոօրգանիզմների կենսագործունեության հետևանքով և
կերերի հետ թափանցում է թռչունի օրգանիզմը:

Խորը, երկար ժամանակ չփոփոխվող ցամքարի օգտագոր-
ծումը նկատելիորեն բարձրացնում է նաև աշխատանքի ար-
տադրողականությունը և իջեցնում մթերքների ինքնարժեքը:
Խորը ցամքարի օգտագործման շնորհիվ՝ յուրաքանչյուր թըռչ-
նանոցի սպասարկման համար աշխատանքի ծախսումը կիսով
չափ կրճատվեց: Եթե մինչև նոր եղանակի ներդրումը էջ-
միածնի թռչնաբուծական ֆաբրիկայի մայրական ցեխի յու-
րաքանչյուր տիպային թռչնանոց, $1500-1800$ ամանի տարո-
ղությամբ, սպասարկում էին 2 թռչնապահներ և մեկ սայլա-
պան, (որն ամեն օր տեղափոխում էր հավաքած աղբը), ապա
ներա ներդրումից հետո նույնպիսի թռչնանոցը սպասարկում էր
միայն մեկ թռչնապահ, ընդ որում թե՛ սպասարկման որակը, և
թե՛ շենքի ու զբոսաբակի սանիտարական վիճակը նկատելիորեն
լավացան, իսկ թռչնապահները ազատվեցին ամենաժանր աշ-
խատանքից՝ թռչնանոցների ամենօրյա մաքրումից և աղբի
հեռացումից:

Խորը չփոփոխվող ցամքարի վրա հավերի պահելու եղա-
նակը ներդրվեց ռեսպուբլիկայի նաև մյուս թռչնաբուծական
ֆաբրիկաների մայրական ցեխերի թռչնանոցներում: Այդ եղա-
նակի արդյունավետությունը հաստատվել է նաև կոլտնտե-

սովորելների փորձով: Էջմիածնի շրջանի Աղավնատուն գյուղի «Պայքար» կոլտնտեսության թռչնաբուծական ֆերմայում հավերի պահվածքը խորը ցամքարի վրա ապահովեց յուրաքանչյուր ածանից (մոտ 3000 գլխաքանակից) 160 ձվի ստացում, ընդ որում շատ ցածր ինքնարժեքով: Թռչուններին խորը ցամքարի վրա պահելու բարձր արդյունավետության մասին բազմաթիվ տվյալներ են հաղորդվում երկրի զանազան մարզերից, երկրամասերից և ռեսպուբլիկաներից, ինչպես նաև արտասահմանյան երկրներից:

ԶՎԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ՍՆՆԴԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԵՐԻ ՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԵՎ ԶԲՈՍԱԲԱԿԱՅԻՆ ՊԱՀՎԱԾՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Շատ հաճախ կարելի է լսել այսպիսի հարց. հավերին արհեստական պայմաններում՝ մարտկոցային վանդակներում պահելու դեպքում ձվերը արդյոք չեն կորցնում իրենց սննդարար հատկություններն ու լիարժեքությունը: Այդ կասկածանքը կարծեք թե զուրկ չէ տրամաբանական հիմքից: Սակայն, ինչպես ցույց տվեցին մի շարք հեղինակների հետազոտությունները (Ս. Ի. Սմենտե, 1944 թ. Բերեզովսկի և ուրիշներ, 1954 թ., Ն. Վ. Պիգարև, 1955 թ. Վ. Պ. Բլաունտ, 1957 թ. և ուրիշներ), թռչունի լիարժեք կերակրման դեպքում վանդակային ածանների ձվերը իրենց ֆիզիկո-քիմիական հատկություններով չեն տարբերվում սովորական, զբոսարակային պայմաններում գտնվող հավերի ձվերից (աղյուսակ 10):

Մինչև վերջին տարիները գրականության մեջ տվյալներ չկային այն մասին, թե հավերի վանդակային պահվածքը ինչպիսի ազդեցություն է գործում ձվի սպիտակուցի ամինաթթվային բաղադրության վրա, իսկ սպիտակուցների ամինաթթվային բաղադրությունը նրանց բիոլոգիական լիարժեքության առավել օբյեկտիվ ցուցանիշն է:

Այդ հարցը պարզելու նպատակով համապատասխան հետազոտություններ կատարվեցին մեր կողմից Հայկական ՍՍՌ

վանդակային և զբոսաբակային հավերի ձվի սպիտակուցի և դեղնուցի
ֆիմիական բաղադրությունը (տոկոսներով օղային շոք նյութի մեջ):

Ցուցանիշները	Սպիտակուց		Դեղնուց	
	վանդակային ածաններ	զբոսաբակա- յին ածաններ	վանդակային ածաններ	զբոսաբակա- յին ածաններ
Ա Ղ Ո Ս	12,3	12,5	5,1	5,2
Պրոտեին	76,9	77,8	32,0	32,4
Մ Ո Խ Ի Ր	5,1	5,3	3,9	3,7
Ճ ա Ր ա	1,4	1,1	52,1	53,4
CaO	0,06	0,09	0,39	0,44
P ₂ O ₅	0,49	0,47	3,01	3,00

ԳԱ Ֆիզիոլոգիայի ինստիտուտում խրամոտոգրաֆիայի մեթո-
դով (աղյուսակ 11 և 12):

Ինչպես երևում է այդ աղյուսակների տվյալներից, վան-
դակներում և զբոսաբակային պայմաններում ամբողջ տարին
պահված հավերի ձվերի սպիտակուցի ամինաթթվային բա-
ղադրության մեջ որևէ տարբերություն չկա: Վանդակային
հավերի ձվի սպիտակուցները պարունակում են նույն 20
ամինաթթուները, ինչ որ սովորական զբոսաբակային պայ-
մաններում գտնվող հավերի ձուն (աղյուսակ 11):

Ձվի դեղնուցի սպիտակուցների ամինաթթվային կազմը
վանդակային պահվածքի պայմաններում նույնպես չի փոխ-
վում: Երկու դեպքում էլ սպիտակուցները պարունակում են 18
ամինաթթուներ (աղյուսակ 12):

Բերված փաստական տվյալներով ապացուցված պետք է
համարել, որ հավերի պահվածքը վանդակներում կերակր-
ման միատեսակ պայմաններում ոչ մի բացասական ազդե-
ցություն չի թողնում ոչ միայն ձվի պարունակած սննդարար
նյութերի բաղադրության, այլև սպիտակուցների միկրոկա-
ռուցվածքի՝ ամինաթթվային կազմի վրա: Վանդակային հա-
վերից ստացված ձվերը ունեն կենսաբանական բարձր լիար-

Ձվի սպիտակուցների ամինաթթվային բաղադրությունը հավերի վանդակային
և գրոսարակային պահվածքի դեպքում

Ամինաթթուներ	Ամինաթթուների պոլտերի թվանշանային գնահատումը	
	ձ վ ի ս ղ ի տ ա կ ու ջ ը	
	վանդակային հավեր	գրոսարակային հավեր
Ցիստին	+++	+++
Ցիստեին	++	++
Լիզին	++	++
Արգինին	+++	++
Հիստիդին	+++	+++
?	+++	+++
Ծներեկաթթու	+++	+++
Գլիցին	+++	+++
Տրեոնին	++	++
Գլյուտամինաթթու	++++	++++
?	++	++
Ալանին	+++	+++
Պրոլին	÷+	++
Տիրոզին	++	++
(համապատասխանում է տրիպտոֆանի գտնվելու տեղում)	+++	+++
Մետիոնին	++	++
Վալին	++	++
Ֆենիլալանին	++	++
Լեյցին	+++	+++
Իզոլեյցին	++	++

Ժեքություն և ոչնչով չեն տարբերվում սովորական՝ գրոսարա-
կային պայմաններում գտնվող հավերի ձվերից:

Այսպիսով, միանգամայն ակնհայտ է դառնում թռչնաբու-
ծության զարգացման ինտենսիվ եղանակների մի շարք առա-
վելությունները և տնտեսական բարձր արդյունավետությունը
էքստենսիվ եղանակների նկատմամբ: Այդ եղանակները իրենց
լիովին արդարացրին նաև Հայաստանի պայմաններում և զար-
գացման լայն հեռանկարներ ունեն: Երկարամյա դիտողու-
թյունները և ուսումնասիրությունները միաժամանակ ցույց

Ձվի դեղնուցի սպիտակուցների ամինաթթվային բաղադրությունը հավերի վանդակային և զրոսաբակային պահվածքի պայմաններում

Ամինաթթուներ	Ամինաթթվի պոլտերի թվանշանային գնահատումը	
	ձվի դեղնուցի սպիտակուցները	
	վանդակային հավերի	զրոսաբակային հավերի
Ցիստին	++	++
Արգինին	++	++
Լիզին	++	++
Հիստիդին	+++	+++
Սերին	+++	+++
Ասպարազինյան թթու	++++	++++
Գլյուտամինյան թթու	++++	++++
?	+++	+++
Տրեոնին	++	++
Ալանին	+++	+++
Պրովին	+++	+++
Տիրոզին	+++	+++
(համապատասխանում է տրիպտոֆանի գտնվելու տեղում)	+++	+++
Մետիոնին	+++	+++
Վալին	+++	+++
Ֆենիլանին	+++	+++
Լեյցին	+++	+++
Իզոլեյցին	++	++

տվեցին, որ պահվածքի ինտենսիվ եղանակները չեն կարող ներդրվել հախուռն կերպով, առանց հաշվի առնելու յուրաքանչյուր գյուղատնտեսական գոտու բնակլիմայական առանձնահատկությունները, յուրաքանչյուր տնտեսության կոնկրետ պայմանները, անասնաբուծության մասնագիտացման ուղղությունը և, հատկապես, կերի բազայի վիճակը: Պետք է նկատի ունենալ, որ թռչնաբուծությունը վարելու ինտենսիվ եղանակներից յուրաքանչյուրն ունի իր ուրույն առանձնահատկությունները և որոշակի նպատակը: Հավերի պահվածքի վանդակային եղանակը հիմնականում պետք է կիրառվի խոշոր արդյունաբերական տիպի պետական տնտեսություններում

(Թռչնաբուծական ֆաբրիկաները), որոնք ստեղծվում են խոշոր քաղաքների և արդյունաբերական կենտրոնների շուրջը: Պատահական չէ, որ Հայաստանում այդ տիպի տնտեսությունները նույնպես ստեղծվել են Երևանի, Լենինականի շրջակայքում, նոր մասնագիտացված ֆաբրիկաներ են կառուցվում Կիրովականի, Ղափանի և Սպիտակի շրջակայքում, զգալիորեն ընդլայնվում են գոյություն ունեցողները: Մի շարք նոր ֆաբրիկաներ են կառուցվում Երևանի մերձքաղաքային գոտիներում՝ Լուսակերտում, Արտաշատում:

Վանդակային պահվածքի եղանակն իրեն արդարացնում է միայն այն ժամանակ, երբ տնտեսությունները լինում են խոշոր, որտեղ միայն ածանցների գլխաքանակը 100 հազարից սլակաս չի լինում, երբ տնտեսությունն ապահովված է համապատասխան շենքերով, բարձրորակ, լիարժեք կերերով, ջրով, կոմպլեքս մեքենայացումով, ավարտված տեխնոլոգիական ցիկլով և վերջապես, բարձրորակ մասնագիտական և արտադրական կադրերով: Վանդակային պայմաններում պահվող թռչունները շատ պահանջկոտ են կերաբաժինների և կերակրման կարգի նկատմամբ, չափազանց զգայուն են շենքի ներսում միկրոկլիմայի և լույսային ռեժիմի փոփոխության նկատմամբ: Երբ խախտվում է պահվածքի և կերակրման սահմանված կարգը, կամ ընկնում է կերերի լիարժեքությունը, որի վերականգնման համար պահանջվում է մի ամբողջ շաբաթ, եթե ոչ ավել, ապա խոշոր տնտեսություններում դրա հետևանքով կորցնում են տասնյակ հազար ձու: Ասածներից պարզ է, որ վանդակային պահվածքի եղանակը իրեն չի կարող արդարացնել սովորական, ոչ մեծ կոլտնտեսային ֆերմաների պայմաններում: Բացառություն կարող են կազմել միջկոլտնտեսային խոշոր ֆերմաները, եթե ածանցների տարեկան միջին գլխաքանակը կազմի գոնե 40—50 հազար:

Կոլտնտեսային և միջկոլտնտեսային ֆերմաներում, ինչպես և սովխոզներում, թռչնաբուծության ինտենսիվացման առավել արդյունավետ և մասսայական ձևը պետք է համարել խորը ցամքարի վրա պահելու եղանակը՝ լայն գաբարիտային լավ մեքենայացված թռչնանոցներում՝ 5—6 հազար ածան

հավերի տարողությամբ: Այդ եղանակի կարևոր առավելություններից մեկն այն է, որ այն մատչելի է յուրաքանչյուր շատ թե քիչ խոշոր կոլտնտեսության համար (շխոսելով այլևս միջկոլտնտեսային ֆերմաների և սովխոզների մասին) և մեծ միջոցների ծախսում չի պահանջում:

Հայն գաբարիտային թռչնանոցների օգտագործումը հնարավորություն է տալիս մեքենայացնելու աշխատատար պրոցեսները, կրճատելու աշխատանքի և միջոցների ծախսումները, իջեցնելու արտադրանքի ինքնարժեքն ու, այդպիսով, կոլտնտեսային թռչնաբուծությունը դարձնելու գյուղատնտեսական արտադրության բարձր եկամտաբեր ճյուղերից մեկը:

Խոսելով թռչնաբուծության ինտենսիվացման երկու հիմնական եղանակներից յուրաքանչյուրի առանձնահատկության և առավել նպատակահարմար տեղաբաշխման մասին, չպետք է անտեսել նաև որոշակի պայմաններում դրանց կոմբինացված կիրառման հնարավորության և նպատակահարմարության մասին: Այսպես, օրինակ, թռչնաբուծական ֆաբրիկաներում, որտեղ թռչունի արդյունաբերական հոտի պահվածքի հիմնական եղանակը վանդակայինն է, նպատակահարմար է մայրական (տոհմային) հոտի թռչնանոցներում կիրառել շփոփովոդ խոր ցամքարի վրա պահելու եղանակը, իսկ կոլտնտեսային ֆերմաներում և սովխոզներում, որտեղ հասակավոր թռչունի պահվածքի հիմնական եղանակը խոր ցամքարի վրա պահելու եղանակն է, նպատակահարմար է օգտագործել մատղաշի աճեցման վանդակային, ավելի ճիշտ, վանդակային-զբոսաբակային կոմբինացված եղանակը (երբ ճտերը 1—60 օրական հասակը աճեցվում են վանդակներում, իսկ այնուհետև՝ հատակի վրա), որի արդյունավետությունը հաստատված է բազմաթիվ տնտեսությունների փորձով:

Հայտնի է, որ վանդակային պահվածքի պայմաններում վառեկների օգտագործման տեղությունը համեմատաբար կարճ է լինում՝ նրանք խոտանվում են 13—14 ամսական հասակում և հանձնվում են մսամթերման: Այլ կերպ ասած, նրանց տնտեսական օգտագործման տեղությունը 7—8 ամսից չի անցնում: Իսկ զբոսաբակային պահվածքի պայմաններում հավերի բավականաչափ բարձր ձվատվությունը (50 տոկոս և

ավելի) պահպանվում է մինչև 20—22 ամսական հասակը։
Երկարամյա դիտումները ցույց են տալիս, որ Հայաստանի
պայմաններում ուսական սպիտակ ցեղի վանդակային
ածաններից բարձր (50—60 տոկոս) ձվատվություն է ստաց-
վում միայն ձվարկման առաջին 6—7 ամսում, որից հետո
մթերատվությունը խիստ ընկնում է, տատանվելով 15—20
տոկոսի սահմաններում, իսկ երբ այդպիսի ածանների
վանդակներից փոխադրվում են զբոսաբակային պահված-
քի, նրանց ձվատվությունն աստիճանաբար սկսում է վե-
րականգնվել և 7—10 օրից հետո հասնում 45—50 տոկոսի,
մոտավորապես այդ մակարդակի վրա պահպանելով 6—7
ամսվա ընթացքում։ Այլ կերպ ասած, նրանց շահագործ-
ման տևողությունը կրկնապատկվում է, շխոսելով այլևս
այն մասին, որ այդ շրջանում ձվերի կշիռը մոտ 10—13 տո-
կոսով ավելի բարձր է լինում։ Այդպիսի պայմաններում, մաս-
նավորապես երբ դեռ հնարավորություններ չեն ստեղծվել
վանդակային հավերի հոտը յուրաքանչյուր ամիս անընդմեջ
համալրելու ձվարկումը նոր սկսող վառեկներով, անհամե-
մատ ավելի նպատակահարմար է պահվածքի կոմբինացված
վանդակային-զբոսաբակային եղանակի օգտագործումը, որը
հնարավորություն կտա կանխելու ժամանակից շուտ, դեռ հա-
մեմատաբար բարձր մթերատվություն ունեցող ածանների
մասսայական խոտանումը։ Պետք է ասել, որ որոշ մասնա-
գետներ (Ն. Վ. Դոխնովսկին, Ե. Պ. Ժուկովը և Ի. Ի. Կրի-
վինսկայան), չափազանցելով վանդակային պահվածքի հետ
կապված որոշ դժվարությունները, այն կարծիքն են հայտ-
նում, որ իբր թե այդ եղանակն արդեն հնացել է և իրեն չի
արդարացնում, հակադրելով դրան ցանցապատ հատակի,
կամ խոր ցամքարի վրա լայն գաբարիտային թռչնանոցներում
պահելու եղանակը։ Այդպիսի հակադրումը, մեր կարծիքով,
միանգամայն անհիմն է։ Պետք է նկատի ունենալ, որ թռչնա-
բուծության ինտենսիվացման եղանակների նկատմամբ չի
կարելի որևէ ընդհանուր՝ շաբլոն դեղատոմս առաջարկել բո-
լոր գյուղատնտեսական գոտիների, շրջանների և տնտեսու-
թյունների համար, առանց հաշվի առնելու նրանց կոնկրետ
պայմանները, ինչպես բնակլիմայական, այնպես էլ տնտեսա-

կան: Կասկածից վեր է, որ խոշոր քաղաքների արդյունաբերական կենտրոնների և կուրորտային վայրերի բազմահազար բնակչությունը թարմ դիետիկ ձվով ու թռչունի մսով ապահովելու համար անհրաժեշտ է այդ կենտրոնների շուրջը ստեղծել արդյունաբերական տիպի խոշոր մասնագիտացված թռչնաբուծական ֆաբրիկաներ, սեփական ինկուբատորային բազայով, որը հնարավորություն կտա հոտը համալրել սեփական արտադրության բարձր մթերատու վառելիներով ամբողջ տարվա ընթացքում՝ անընդմեջ: Կոլտնտեսային սովորական ոչ մեծ ֆերմաները, որտեղ մթերքների արտադրությունը դեռ զգալի չափով սեզոնային բնույթ է կրում, այդ պրոբլեմը առայժմ լուծել չեն կարող:

Ինչ վերաբերում է խորը ցամաքի վրա պահելու եղանակին, ապա այն լայնորեն պետք է կիրառվի կոլտնտեսություններում, սովխոզներում և տոհմային տնտեսություններում:

Այդ եղանակը նպատակահարմար է զուգակցել մատղաշի վանդակային (կոմբինացված) աճեցման եղանակի հետ: Մասնագիտացված կոլտնտեսային և սովխոզային ֆերմաներում հաջողությամբ կարող է կիրառվել խորը ցամաքի վրա մասցու ճտերի աճեցումը մեծ խմբերով: Շատ լավ օրինակ է ցույց տալիս այդ տեսակետից Ղրիմի մարզի «Կրասնոյե» սովխոզը, Մոսկվայի մարզի «Ռասսվետ» կոլտնտեսությունը և մի շարք այլ կոլտնտեսություններ և սովխոզներ:

Պետք է նկատի ունենալ նաև, որ արդյունաբերական տիպի ձեռնարկությունները, թռչնաբուծական ֆաբրիկաները խտացրած կերերով ապահովվում են հիմնականում պետական ֆոնդերից, որի համար համապատասխան գոտիներում ստեղծվում են անհրաժեշտ քանակի համակցված կերեր արտադրող գործարաններ: Թռչնաբուծական պետական այդ տիպի տնտեսությունները խորը կերպով մասնագիտացվում են ձվի, կամ մսի (բրոյլերներ) արտադրության ուղղությամբ:

Ինչ վերաբերում է կոլտնտեսային և միջկոլտնտեսային թռչնաբուծական ֆերմաներին, մասնագիտացված թռչնաբուծական սովխոզներին ու շմասնագիտացված սովխոզների թռչնաբուծական ֆերմաներին, ապա նրանք կերերի պահանջը հիմնականում պետք է ապահովեն սեփական արտադրու-

թյան հաշվին. պետական ֆոնդերից այդ տնտեսությունները կարող են ձեռք բերել կենդանական սպիտակուցային կերեր, հակաբիոտիկներ և զանազան հարստացուցիչներ, որոնք հնարավորություն են տալիս կազմելու ճիշտ բալանսավորված լիարժեք կերաբաժիններ և զգալիորեն բարձրացնելու կերերի հատուցումը մթերքով:

ԱՐԴՅՈՒՆԱՐԵՐԱԿԱՆ ԹՌՉՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՏԱԳԱ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արտասահմանյան մի շարք երկրների հարուստ փորձը և մեր երկրի առաջավոր տնտեսությունների օրինակը համոզիչ կերպով ցույց են տալիս, որ թռչնաբուծության հետևողական ինտենսիվացումն ամենից առաջ պահանջում է արտադրության կազմակերպման անընդհատ կատարելագործում: Այդ վերաբերվում է, մասնավորապես, խոշոր արդյունաբերական թռչնաբուծությանը, որի ինտենսիվացման որոշիչ պայմաններից մեկը արտադրության համակենտրոնացումն է՝ գիտության ու տեխնիկայի ժամանակակից նվաճումների հիման վրա:

Մեր օրերում անվիճելիորեն ապացուցված է, որ տնտեսական առավել բարձր էֆեկտիվություն ու շահութաբերություն ունեն խոշոր մասնագիտացված թռչնաբուծական ֆաբրիկաները, որտեղ, ինչպես արդեն նշել ենք, միայն ածանցների թիվը հասնում է 250—500 հազարի և անգամ մինչև մեկ միլիոնի:

Վերջին մի քանի տարում մեր երկրում ստեղծվել է արդյունաբերական տիպի բազմաթիվ խոշոր տնտեսություններ: Ներկայումս միայն թռչնաբուծական ֆաբրիկաների թիվը ՍՍՌՄ-ում հասնում է մոտ 100-ի: Դրանց շարքին են պատկանում ամբողջ երկրին հայտնի Գլբրովյան, Բրատցկյան, Տոմիլնյան և մի շարք այլ ֆաբրիկաներ: Գլբրովյան ֆաբրիկայում, օրինակ, միայն ածանց հավերի թիվը հասնում է 472 հազարի: 1963 թվականին այստեղ արտադրվեց 82 միլիոն ձու. յուրաքանչյուր ածանցից ստացվեց միջինը 175 ձու: 1964 թվականին ձվի արտադրությունը այդ ֆաբրիկայում հասավ

100 միլիոն հատի: Բայց այդպիսի խոշոր թռչնաբուծական տնտեսությունների թիվը երկրում դեռ քիչ է: Նրանց մեծ մասում ածանցների քանակը 100.000-ից չի անցնում, իսկ շատ թվով տնտեսություններում կազմում է ընդամենը 40—50 հազար:

Զգալի թվով թռչնաբուծական ֆաբրիկաների համեմատաբար փոքր ծավալը բացատրվում է շինարարության դանդաղ տեմպերով: Գլխավոր պատճառներից մեկն էլ այն է, որ համակցված կերային արդյունաբերությունը դեռ նկատելիորեն ետ է մնում նրան ներկայացվող պահանջներից:

Մեր ռեսպուբլիկան առաջիններից մեկն էր, որ սկսեց ներդնել արդյունաբերական թռչնաբուծության առաջավոր եղանակները: Առաջին թռչնաբուծական ֆաբրիկան (էջմիածին) մասնակի շահագործման հանձնվեց դեռ 1955 թ.: 1957 թվականին Լենինականի թռչնաբուծական սովխոզը նույնպես վերածվեց ֆաբրիկայի: Երկու տարի անց սկսվեց գործել Երեվանի թռչնաբուծական ֆաբրիկան և Գետամիջի թռչնաբուծական սովխոզը, միաժամանակ ձեռնարկվեց Լուսաղբյուրի ֆաբրիկայի և էջմիածնի արտադրական վարչության Շահումյանի միջկոլտնտեսային թռչնաբուծական ֆաբրիկայի կառուցումը: Թե ինչպիսի առավելություններ ունի ինտենսիվ թռչնաբուծությունը, էքստենսիվ եղանակի համեմատությամբ Հայաստանի պայմաններում, ցույց են տալիս հետևյալ թվերը:

1959 թ. ռեսպուբլիկայում եղած 785 կոլտնտեսությունների թռչնաբուծական ֆերմաները, որոնք թռչնաբուծությունը վարում էին էքստենսիվ եղանակով, արտադրեցին ընդամենը 13,1 միլիոն ձու, իսկ միայն 3 թռչնաբուծական ֆաբրիկաները, որոնք դեռ մասամբ էին յուրացրել իրենց նախագծային հզորությունը, արտադրեցին մոտ 7 միլիոն ձու, կամ ռեսպուբլիկայի բոլոր կոլտնտեսությունների արտադրանքի կեսից ավելին: Նույն տարում այդ 3 ֆաբրիկաները արտադրեցին կոլտնտեսություններում արտադրած թռչունի մսի 42 տոկոսը:

Վերջին 4—5 տարիների ընթացքում ռեսպուբլիկայի կոլտնտեսային թռչնաբուծական ֆերմաները որոշ չափով խոշորացվեցին, նկատելիորեն ավելացավ ձվի համախառն ար-

տադրանքը, որը 1963 թ. հասավ 32,5 միլիոն հատի: Բայց, այնուամենայնիվ, պետական տնտեսությունների արտադրանքի տեսակարար կշիռը շարունակում է մնալ շատ բարձր: Գործող շորս ֆաբրիկաները, Գետամիջի սովխոզը և մի երկու տասնյակ շմասնագիտացված սովխոզային ֆերմաներ նույն տարում արտադրեցին 18,3 միլիոն ձու կամ բոլոր կոլտնտեսությունների արտադրանքի 56 տոկոսը: Կոլտնտեսությունների և սովխոզների կողմից 1963 թ. արտադրած 11,407 ցենտներ թռչունի մսից 6692 ցենտները կամ մոտ 60 տոկոսն արտադրել են 4 պետական թռչնաբուծական ֆաբրիկաները և Գետամիջի սովխոզը: Արդյունաբերական տիպի խոշոր տնտեսություններում անհամեմատ ավելի բարձր է թռչունների միջին ձվատվությունը, աշխատատար պրոցեսների մեքենայացման աստիճանը և միաժամանակ մոտ 50 տոկոսով ցածր է մթերքների ինքնարժեքը:

Բերած տվյալները համոզիչ կերպով ցույց են տալիս խոշոր մասնագիտացված տնտեսությունների անվիճելի առավելությունները մանր, էքստենսիվ տնտեսությունների նկատմամբ: Այդ տվյալները միաժամանակ խոսում են մեր ռեսպուբլիկայում արդյունաբերական թռչնաբուծության զարգացման մեծ հեռանկարների մասին:

Ռեսպուբլիկայի ղեկավար օրգանները և գիտահետազոտական հիմնարկները միջոցառումներ են մշակել թռչնաբուծության հետագա ինտենսիվացման և մասնագիտացման ուղղությամբ: Ինչպես նշվեց վերևում, նախատեսված է 1965—1970 թվականների ընթացքում կառուցել 10 նոր մասնագիտացված թռչնաբուծական ֆաբրիկաներ, որոնցից շորսը ձվի արտադրության, իսկ վեցը թռչունի մսի արտադրության ուղղությամբ: Ձվային ուղղություն ունեցող ֆաբրիկաները կառուցվելու են Կիրովականում 200 հազար ածանի տարողությամբ և 40 միլիոն ձվի արտադրողականությամբ, Արտաշատում՝ նույնպիսի հզորությամբ, Երևանի շրջակայքում՝ 500 հազար ածանի տարողությամբ և 100 միլիոն ձվի արտադրողականությամբ և Լուսակերտում (Աշտարակի շրջան) 100 հազար ածանի տարողությամբ և 20 միլիոն ձվի արտադրողականությամբ: Մսային ուղղության ֆաբրիկաները տեղաբաշխվում

են հետևյալ կերպ՝ Ղափանում և Սպիտակում մեկական ֆաբրիկա, յուրաքանչյուրը 500 հազար մսացու ճտի կամ 500 հազար տոնն թռչունի մսի արտադրողականությամբ, Երևանի, Լենինականի և Էջմիածնի շրջակայքում մեկական ֆաբրիկա՝ յուրաքանչյուրը 4 միլիոն մսացու ճտի կամ 4000 տ թռչունի մսի արտադրողականությամբ և Կիրովականում մեկ ֆաբրիկա՝ 2 միլիոն մսացու ճտի կամ 2000 տ թռչունի մսի արտադրական հզորությամբ: Միայն այդ 6 ֆաբրիկաները տարեկան արտադրելու են 15 միլիոն մսացու ճուտ, կամ 15 հազար տոնն թռչունի միս: Բացի այդ 2 հազար տոնն թռչունի միս կարտադրեն ձվային ուղղությամբ մասնագիտացող ֆաբրիկաներ: Այսպիսով, նախատեսվում է միայն արդյունաբերական տիպի պետական տնտեսություններում թռչունի մսի արտադրությունը հասցնել 17 հազար տոննայի 1963 թ. ամբողջ հանրային սեկտորում արտադրած 1140 տոննայի դիմաց:

Արդեն ձեռնարկված է նաև Էջմիածնի, Լենինականի և Երևանի գործող ֆաբրիկաների հետագա ընդլայնումը և մասնագիտացումը ձվի արտադրության ուղղությամբ այն հաշվով, որ նրանցից յուրաքանչյուրի ներկա արտադրական հզորությունը ավելանա 5—6 անգամ և հասնի ոչ պակաս 20 միլիոնի: Այդ ֆաբրիկաները, որպես լրացուցիչ, այսպես կոչված, կողմնակի արտադրանք տարեկան կտան նաև 600 տ թռչունի միս:

Նոր ֆաբրիկաների կառուցումը և եղածների ընդլայնումը հնարավորություն կտա արդեն 1967 թ. ձվի արտադրությունը միայն այդ ձեռնարկություններում հասցնել մոտ 30 միլիոն հատի, կամ 1965 թ. համեմատությամբ եռապատկել, իսկ 1970 թ. այն հասցնել 90 միլիոնի: Թռչունի մսի արտադրությունը համապատասխանորեն կազմելու է 2 հազ. 5,5 հազար տոնն. այն ժամանակ, երբ 1963 թ. ձվի համախառն արտադրանքը կազմում էր 11,8 միլիոն հատ, իսկ մսինը՝ 400 տ:

Հազիվ թե հարկ կա բացատրելու, թե ուժերի ինչպիսի լարում, ինչպիսի բարձր կազմակերպվածություն և հետևողականություն կպահանջվի այդ ծրագիրն իրականացնելու համար:

Բավական է ասել, որ ծրագրված շինարարությունը կատարելու համար կառավարության կողմից նախատեսվել է 50 միլիոն ռուբլի կապիտալ ներդրում, մեծ քանակի փոխադրական միջոցներ, մեքենաներ և այլն: Ուշադրության արժանի է, որ 1966—1970 թթ. համար նախատեսված 50 միլիոն ռուբլի կապիտալ ներդրումներից 39 միլիոնը կամ մոտ 80%-ը հատկացվելու է առաջին երեք տարում՝ 1966—1968 թթ. ընթացքում, որը հնարավորություն կտա այդ ժամանակաշրջանում շահագործման հանձնել ծրագրված արտադրական հզորությունների 80 տոկոսը՝ այսինքն ապահովել 800 հազար ածանցների տեղավորում և 11 միլիոն մսացու ճտերի արտադրությունը:

Բայց պետք է նկատի ունենալ, որ այդպիսի տեմպերն անգամ դեռ լրիվ չեն ապահովում ռեսպուբլիկայի բնակչության աճող պահանջը այդ մթերքների նկատմամբ: Ուստի անհրաժեշտ է մշակել լրացուցիչ միջոցառումներ՝ մի կողմից նոր թռչնաբուծական ֆաբրիկաներ ու սովխոզներ կառուցելու, իսկ մյուս կողմից եղածների հետագա ընդլայնման և արտադրողականությունը բարձրացնելու ուղղությամբ:

Պետք է նկատի ունենալ, որ գործող ու նոր կառուցվող ֆաբրիկաների համար պլանավորված են մթերատվության համեմատաբար ցածր ցուցանիշներ, երևի ելնելով ներկայումս եղած փաստացի մակարդակից: Օրինակ, ածանցների միջին ձվատվությունն այդ ուղղությամբ մասնագիտացված ֆաբրիկաներում նախատեսվում է 200 հատ, այն ժամանակ, երբ մեր երկրի առաջավոր ֆաբրիկաներում արդեն փաստորեն ստանում են 230—240 և ավել ձու (օրինակ Սարատովի մարզի «Մարքս» սովխոզում, Լիտվական ՍՍՌ «Անդլեյնայ» սովխոզում): Մսացու ճտի կենդանի քաշը ընդունված է միջինը 1 կգ, իսկ մեր շատ առաջավոր տնտեսություններն ստանում են 1,5—1,6 կգ: Մասնագիտացված վաղահաս գծերի և հիբրիդային թռչուններ օգտագործելու դեպքում այդ ցուցանիշները կարող են էլ ավելի բարձրանալ: Նույնը կարելի է ասել ձվատվության հետագա բարձրացման ուղղությամբ:

Ինչպես տեսնում ենք, դեռ չօգտագործված մեծ ռեզերվներ կան, որոնք իրացնելու համար պահանջվում է արտադրու-

թյան խորացրած մասնագիտացում, հետևողական տոհմային սելեկցիոն աշխատանք՝ բուծվող թռչունների հետ, որը պետք է տարվի գիտության ժամանակակից մակարդակի և առաջավոր փորձի նվաճումների հիման վրա: Ցավոք սրտի պետք է նշել, որ այդ աշխատանքները մեր ռեսպուբլիկայի ֆաբրիկաներում և սովխոզներում խիստ թերագնահատվում են: Չնայած որ կան բոլոր հնարավորությունները, համենայն դեպս, մեր պետական թռչնաբուծական տնտեսություններում տոհմային գործն ամուր հիմքերի վրա դնելու:

Ինչպես հայտնի է, տոհմային-սելեկցիոն աշխատանքի հիմքը թռչնաբուծության մեջ դրվում է ձվի, մատղաշի աճի և վառեկների վաղահասության անհատական հաշվառումով: Մեր ռեսպուբլիկայում միայն մեկ պետական տնտեսությունում՝ էջմիածնի ֆաբրիկայում (չհաշված անասնաբուծական-անասնաբուծական գիտահետազոտական ինստիտուտի Չարբախի էքսպերիմենտալ բազան) ուկաած դեռ 1957 թվականից կազմակերպվել էր ձվատվության անհատական հաշվառում, բայց 1964 թ. կեսերից այդ աշխատանքները շմտածված կերպով դադարեցվեցին:

Ժամանակն է ռեսպուբլիկայում կազմակերպելու խորացրած տոհմային-սելեկցիոն աշխատանք և գիտական հետազոտություններ, տեղական պայմաններին լավ հարմարված թռչունների մասնագիտացված բարձր մթերատու գծեր ու հիբրիդներ ստեղծելու ուղղությամբ:

Գ Լ Ո Ւ Խ 5

ՏՈՀՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՏԵՆՍԻՎ ԹՌՉՆԱՐՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Տոհմային աշխատանքը թռչունների բուծման տեսական հիմքն է հանդիսանում, որի նպատակն է արտադրողների ստեղծագործական ընտրության, ճիշտ կերակրման և մատղաշների նպատակադիր դաստիարակման միջոցով հետևողականորեն կատարելագործել թռչունների տոհմային հատկու-

թյունները և բարձրացնել նրանց մթերատվությունն ու կենսունակությունը:

Նրկարամյա փորձը ցույց է տալիս, որ թռչունների ամենալավագույն ցեղերն անգամ երկու-երեք սերնդի ընթացքում կարող են կորցնել իրենց արժեքավոր ժառանգական հատկությունները՝ բարձր մթերատվությունը, կենսունակությունը, միատիպությունը և այլն, եթե նրանց հետ շտարվի հետևողական պլանային, տոհմային-սելեկցիոն աշխատանք՝ լավագույն թռչունների ընտրության, բազմացման, կատարելագործման, իսկ վատերի՝ ցածր մթերատվունների խստիվ խոտանման միջոցով:

Ժամանակակից կենսաբանական գիտության նվաճումների հիման վրա մշակվել են տոհմային գործի տեսական հիմունքները և զոոտեխնիկական միջոցառումների մի ամբողջական կոմպլեքս, որոնց կիրառումը հնարավորություն է տալիս ցանկացած ուղղությամբ բարելավելու ցեղերի ժառանգական հատկանիշները:

Քանի որ օրգանիզմը և նրա կյանքի համար անհրաժեշտ պայմանները մի միասնություն են կազմում, ուստի յուրաքանչյուր ցեղ կամ ցեղախումբ պահանջում է իր ժառանգական հատկություններին համապատասխան այնպիսի պայմաններ, որոնք մասնակցել են տվյալ ցեղի ստեղծմանը: Հետևաբար ցեղերի կատարելագործման և դրված նպատակին հասնելու համար, պետք է ընտրել այնպիսի տոհմային թռչուններ և կերակրման ու պահվածքի պայմաններ, որոնք նպաստեն տվյալ ցեղի կամ գծի պրոգրեսիվ կատարելագործմանը:

Թռչունների ժառանգականությունը բարելավելու ուղղությամբ տարվող գործնական աշխատանքում կարևոր նշանակություն ունեն տեսական հետևյալ սկզբունքները.

ա) կյանքի պայմանների առաջատար դերը ժառանգականության ձևավորման պրոցեսում և

բ) տարբեր ժառանգականությամբ օրգանիզմների առկայությունը կյանքի միատեսական պայմաններում:

Առաջին սկզբունքը մատնանշում է, որ զարգացող օրգանիզմի վրա կյանքի համապատասխան պայմանների ներգոր-

ծուծյան միջոցով հնարավոր է ստանալ նոր ժառանգականութ-
յամբ օժտված թռչուններ: Երկրորդ սկզբունքը հիմնավորում
է ընտրության և զույգերի ընտրության ստեղծագործական
դերը, քանի որ տարբեր ժառանգականությամբ օժտված օր-
գանիզմների առկայությունը հոսում հնարավորություն է տա-
լիս ընտրելու այնպիսի ծնողական զույգեր, որոնց զուգոր-
դումը, կոնկրետ պայմաններում, ապահովում է հաջորդական
սերունդների ժառանգականության բարելավումը և կատարե-
լագործումը, ինչպես ցեղի մոտ, ամբողջությամբ վերցրած,
այնպես էլ առանձին գծերի, ընտանիքների և անհատների մոտ:

Տոհմային աշխատանքի կարևոր տեսական հիմունքներից
մեկն է հանդիսանում Ի. Պ. Պավլովի ուսմունքը՝ բարձրա-
գույն նյարդային գործունեության դերի մասին արտաքին մի-
ջավայրի պայմաններին օրգանիզմի հարմարվելու ընթացքում
և այդ պայմանների ներգործության հետևանքով առաջացած
պայմանական ռեֆլեքսների ժառանգելու հնարավորության
մասին: Արտաքին միջավայրի պայմանների նպատակադիր
փոփոխումը, օրգանիզմի աճի և զարգացման պրոցեսում, զու-
գակցված ընտրության, զույգընտրության, լիարժեք կերակր-
ման և մատղաշի նպատակադիր դաստիարակման հետ, հան-
դիսանում է թռչունի կենսաբանական բնույթի վերափոխման
հիմք:

Տոհմային աշխատանքի տեսական հիմունքների և գործ-
նական եղանակների մշակման բնագավառում մեծ ավանդ է
ներդրել ակադեմիկոս Մ. Ֆ. Իվանովը, որի դրույթները հաս-
տատվեցին պրակտիկայով և մինչև օրս էլ լայնորեն օգտա-
գործվում են անասնաբուծության բոլոր ճյուղերում, այդ թվում
նաև թռչնաբուծության մեջ, մասնավորապես ընտրության,
զույգերի ընտրության և արտադրողներին ըստ սերնդի որա-
կի գնահատելու եղանակների հետագա կատարելագործման
նպատակով:

Տոհմային-սելեկցիոն աշխատանքը պետք է տարվի թռչ-
նաբուծական բոլոր տիպի տնտեսություններում, սկսած կոլ-
տնտեսային թռչնաբուծական ապրանքային ֆերմաներից,
վերջացրած տոհմաբուծական սովխոզներով (տոհմաբուծա-
րաններով) և գիտահետազոտական ինստիտուտների փորձնա-

կան տնտեսություններով, քանի որ բոլոր դեպքերում էլ այդ աշխատանքը մի հիմնական նպատակ է հետապնդում՝ նպաստել թռչունների մթերատվության բարձրացմանը: Բայց տոհմային աշխատանքի եղանակները և խնդիրները տարբեր տիպի տնտեսություններում տարբեր են լինում: Այն ժամանակ, երբ կոլտնտեսային թռչնաբուծական (ապրանքային) ֆերմաներում տոհմային աշխատանքը հիմնականում սահմանափակվում է մասսայական ընտրությամբ, ըստ թռչունի արտաքին նշանների և վատ զարգացած ցածր մթերատու թռչունների խոտանումով, աքաղաղների պարբերաբար փոխանակումով՝ նեղ ազգակցական բուծումից և դրա բացասական հետեւանքներից խուսափելու համար, տոհմաբուծարաններում, այսինքն ամենաբարձր կարգի տոհմային տնտեսություններում տոհմային-սելեկցիոն աշխատանքը կազմակերպվում է այնպիսի խորությամբ ու ծավալով, որը հնարավորություն է տալիս ոչ միայն արմատապես բարելավելու գոյություն ունեցող ցեղերը, այլև ստեղծելու նոր ցեղեր և ցեղախմբեր, ինչպես նաև ներցեղային բարձր մթերատու մասնագիտացված գծեր:

Թռչունների բուծման երկու հիմնական եղանակ գոյություն ունի՝ զտացել բուծում և ներցեղային տրամախաչում, որն իր հերթին ստորաբաժանվում է հինգ տարբեր եղանակների:

1. ներածական (արյան ներարկում), 2. արդյունաբերական, 3. փոփոխական, 4. վերարտադրական և 5. կլանողական: Վերջին տարիներս մշակվել է այսպես կոչված «հիբրիդային» թռչուններ ստանալու եղանակ, հատկապես հավաբուծության մեջ: Ինչպես տրամախաչման այդ եղանակների, այնպես էլ տոհմային գործի տեխնիկայի մանրամասն լուսաբանման վրա մենք հնարավորություն չունենք կանգ առնելու, քանի որ այն շատ տեղ կբռնի և կշեղի գրքույկի հիմնական նպատակից: Միայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ բուծման տարբեր եղանակները միմյանց չպետք է հակադրել, որովհետև նրանցից յուրաքանչյուրն ունի իր տեղը և նշանակությունը:

Տոհմային աշխատանքի հաջողության որոշիչ պայմաններից մեկը բարձր մթերատու, կայուն ժառանգականությամբ օժտված զտացել թռչունների բազում հոտերի առկայությունն

է: Այդ դեպքում միայն կարելի է սպասել բարձր արդյունա-
վետություն, ինչպես ներցեղային գծեր կամ «հիբրիդներ»
ստեղծելիս, այնպես էլ այս կամ այն եղանակով միջցեղային
տրամախաշում կատարելիս: Վերջին տարիների փորձը ցույց
է տալիս, որ ինտենսիվ թռչնաբուծությունը բարձր արդյունա-
վետություն է ունենում այն ժամանակ, երբ օգտագործվում են
բարձր սելեկցիայի զտացեղ թռչունների ներցեղային գծեր,
կամ միջգծային «հիբրիդներ»: Այդպիսի թռչունները, որպես
կանոն՝ ունենում են բավականին ամուր կոնստիտուցիա,
և շատ բարձր մթերատվություն: Ուստի հենց այդ նպատա-
կին էլ պետք է ծառայի տոհմային աշխատանքն արդյունա-
բերական տիպի թռչնաբուծական տնտեսություններում: Այս
կապակցությամբ բնականաբար հարց է ծագում. հարկ կա
արդյոք, որ տոհմային աշխատանքով զբաղվեն արդյունաբե-
րական տիպի բոլոր տնտեսությունները, ֆաբրիկաները,
սովխոզները, թե ավելի նպատակահարմար է ստեղծել նեղ
մասնագիտացված տոհմային տնտեսություններ, որոնք կոչ-
ված լինեն ապահովելու ապրանքային տնտեսությունները
բարձրորակ տոհմային ձվով, իսկ հնարավորության դեպ-
քում՝ նաև մատղաշով: Այս հարցի շուրջը դեռ վիճաբա-
նություններ են գնում, մասնագետները տարբեր կարծիքներ
են հայտնում, բայց արտասահմանյան մի քանի երկրների
(Ճապոնիա, ԱՄՆ, Անգլիա, Հոլանդիա) և մեր երկրի մի
շարք տոհմային տնտեսությունների վերջին տարիների աշ-
խատանքի փորձը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ
անշուշտ նպատակահարմար է ստեղծել մասնագիտացված
տոհմային տնտեսություններ, որտեղ տնտեսության ղեկավար-
ները և մասնագետները, համապատասխան գիտական հիմ-
նարկների հետ համագործակցված, իրենց ամբողջ ուշադրու-
թյունը կարողանան կենտրոնացնել տոհմային-սելեկցիոն
աշխատանքի անընդհատ կատարելագործման և նրա արդյու-
նավետության բարձրացման վրա: Այդպիսի տնտեսություննե-
րը համեմատաբար կարճ ժամանակամիջոցում շատ բարձր
արդյունքների են հասնում ու նպաստում են թռչունների մթե-
րատվության բարձրացմանը ապրանքային տնտեսություննե-
րում: Անհամեմատ ավելի դժվար է համատեղել մեծաքանակ

մթերքների արտադրության կազմակերպումը (որը ձվային ուղղության խոշոր թռչնաբուծական ֆաբրիկաներում տարեկան կազմում է 40—100 միլիոն ձու, իսկ մսային ուղղության ֆաբրիկաներում՝ 4—10 միլիոն և ավելի մսացու ճուտ) տոհմային աշխատանքի հետ, որը պահանջում է առանձնահատուկ պայմաններ, խորը գիտելիքներ, մեծ փորձ, հետևողականություն, ստեղծագործական համառություն ու վերջապես տոհմային գործի տեխնիկային և բոլոր նրբություններին տիրապետելու ունակություն:

Թե ինչպիսի արդյունք է տալիս մասնագիտացված տոհմային տնտեսությունների ստեղծումը և ինչպես է այն նպաստում թռչնաբուծության մթերատվության բարձրացմանը, ցույց են տալիս հետևյալ օրինակները: Վերջին տասնամյակում տոհմային-սելեկցիոն աշխատանքը թռչնաբուծության մեջ բարձր կատարելագործության հասավ Ճապոնիայում: Գլխավոր ուղադրությունն այդ երկրում ուղղված է ձվատու և մսատու ուղղության ներցեղային և միջցեղային գծերի ստացմանը ու նրանց կատարելագործմանը, ստեղծելով կերակրման և պահվածքի համապատասխան պայմաններ: Ամբողջ երկրում տոհմային գործը ղեկավարում են ընդամենը հինգ պետական կայաններ, որոնց գլխավոր խնդիրն է՝ ստեղծել նոր գծեր, կատարելագործել գոյություն ունեցողները և անցկացնել կոնկուրսներ—մրցակցություններ: Բացի այդ, պետական տոհմային կայանները մշակում են բալանսավորված կերաբաժիններ (առավել արդյունավետ համակցված կերերից) յուրաքանչյուր գծի կամ հիբրիդային թռչունի համար, հաշվի առնելով հասակը, ցեղը, մթերատվության ուղղությունը և այլ հատկանիշներ: Ուղադրության արժանի է այն հանգամանքը, որ պետական կայաններում հասակավոր թռչունների գլխաքանակը 4—7 հազարից չի անցնում:

Ջանազան գծերի կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքը կատարվում է միասնական պլանով՝ պրեֆեկտուրային կայանների և մասնավոր ֆերմաների հետ: Պետական կայանները ենթարկվում են գյուղատնտեսության մինիստրությանը և աշխատում են վերջինիս ղեկավարությամբ: Ճապոնիայում կան նաև խոշոր մասնավոր ֆերմաներ, որոնց

Թիվը նույնպես սահմանափակ է՝ ընդամենը 13, դրանք միավորված են ակցիոներական ընկերություն մեջ: Այդ ֆերմաները նույնպես ստեղծում ու կատարելագործում են թռչունների ձվատու կամ մսատու ուղղություն գծեր: Յուրաքանչյուր տնտեսությունում այս կամ այն ցեղին պատկանող գծերի քանակը, որպես կանոն, հինգից չի անցնում: Քանի որ անհամեմատ ավելի դժվար է ստեղծել այնպիսի «ունիվերսալ» գծեր, որոնք ունենան թե բարձր ձվատվություն, թե խոշոր ձու և թե համեմատաբար մեծ կենդանի քաշ, ուստի աշխատանքը կազմակերպվում է այնպես, որպեսզի ստեղծված գծերից մեկը օժտված լինի բարձր ձվատվության ժառանգականությամբ, թեկուզ ձվի փոքր քաշով, մյուսը՝ ձվի մեծ քաշով, թեկուզ համեմատաբար քիչ բարձր ձվատվությամբ, երրորդը՝ օպտիմալ բարձր կենդանի քաշով թեկուզ համեմատաբար ցածր ձվատվությամբ և ձվի փոքր քաշով: Չորրորդ գիծը կարող է ընտրված լինել վաղահասություն և ինտենսիվ (առանց ընդմիջումների) ձվարկման հատկանիշով:

Հատուկ ընտրված գծերի նպատակադիր զուգորդման շնորհիվ ստացվում են արդյունաբերական ածանցներ, կամ միջգծային հիբրիդներ, որոնք զուգակցում են իրենց մեջ բարձր ձվատվությունը, ձվի խոշորություն և օպտիմալ բարձր կենդանի քաշի հետ: Այդպիսի թռչուններն ունենում են մեծ տնտեսական արժեք և բարձր են գնահատվում: Ճապոնիայում շատ մեծ ուշադրություն են դարձնում ռեկորդային ձվատվություն ունեցող ածանցներ հայտնաբերելու և նրանց տոհմային սերնդից ինչպես նպատակներով օգտագործելու հարցին: Վերջին տաս տարում «էնիա» ֆերման, օրինակ, կոնկուրսներին ներկայացրել է 1 հազար ածան հավեր, որոնցից 33-ը 365 օրում տվել են 365 ձու (յուրաքանչյուր հավը), այսինքն ածել են ամեն օր առանց ընդմիջման, իսկ 423-ը տվել են տարվա ընթացքում ավելի քան 300 ձու: Նույն ֆերմայում սպիտակ լեզհորն ցեղի հավերի երկգծային հիբրիդները 1963 թ. ունեցան հետևյալ ցուցանիշները. տարեկան միջին ձվատվությունը (տարվա սկզբին եղած ածանցների հաշվով) 248,3 հատ, ձվի միջին քաշը՝ 58,6 գ, հասակը ձվարկման սկզբին 167 օր, կենդանի քաշը ձվարկման սկզբին 1690 գ, գլխաքանակի պահ-

պանումը 1 օրականից մինչև 6-ամսական հասակը 95,3%, 1 կգ ձվային զանգվածի վրա ծախսված կերի քանակը 2,63 կգ: Սրանք շափազանց բարձր ցուցանիշներ են: Խորացրած տոհմային-սելեկցիոն աշխատանքի շնորհիվ, որը զուգակցվում է նաև լիարժեք կերակրման և լավ պահվածքի հետ, Ճապոնիայում վերջին 8 տարվա ընթացքում թռչնաբուծության զարգացման և թռչունների մթերատվության բարձրացման ուղղությամբ լուրջ նվաճումներ ձեռք բերվեցին: Թռչունների գլխաքանակը 1955 թ. եղած 45,715 հազարից (այդ թվում 39588 հազար ածան հավեր) 1962 թվին հասավ 90006 հազարի, այդ թվում 70518 հազար ածան հավեր: Հավերի միջին ձվատվությունը 167 հատից հասավ 211 հատի (աղյուսակ 13):

Աղյուսակ 13

Թռչունների գլխաքանակի և մթերատվության անը Ճապոնիայում
1955—1962 թթ. ընթացքում

Տ ա ր ի ն	Թռչունների գլխաքանակը առ 1 փետրվարի (հազար գլուխ)		Հավերի տարեկան ձվատվությունը միջինը ամբողջ երկրում
	ընդամենը	այդ թվում ածան հավեր	
1955	45 715	39 588	167
1956	42 589	36 730	181
1957	45 341	37 403	176
1958	50 291	41 781	193
1959	48 215	41 389	199
1960	54 627	44 520	204
1961	71 806	55 922	211
1962	90 006	70 518	—

Տվյալներ կան այն մասին, որ ածանների միջին ձվատվությունը 1962 թ. նույնպես կազմել է 211 հատ, շնայած գլխաքանակի աճի բարձր տեմպին: Թռչունների գլխաքանակի աճին ու մթերատվության բարձրացմանը զուգընթաց բնականաբար բարձրացել է նաև ձվի համախառն արտադրանքը: Եթե 1955 թ. ամբողջ երկրում արտադրվել էր 6 742 780 ձու, ապա 1962 թ. ձվի համախառն արտադրանքը հասավ մոտ 15 միլիարդ հատի, կամ աճեց գրեթե երկուս ու կես անգամ: Պա-

տահական չէ, որ թռչնաբուծությունը համարվում է Ճապոնիայի գյուղատնտեսության առաջատար ճյուղը: Դեռ 1961 թ. անասնաբուծությունից ստացվող ամբողջ եկամուտի 53,3%-ը կազմում էր ձվի արտադրությունից ստացվող եկամուտը: Ուշադրության արժանի է այն փաստը, որ թռչնաբուծությունն այդպիսի լուրջ զարգացման է հասել մի երկրում, որտեղ գոյություն ունի խիստ արտահայտված սակավահողություն՝ մեկ շնչին ընկնում է ընդամենը մոտ 0,06 հեկտար մշակվող օգտակար հող (1961 թ. Ճապոնիայի բնակչությունը կազմում էր մոտ 95 միլիոն մարդ, իսկ մշակվող հողային տարածությունը մոտ 6 միլիոն հեկտար):

Շատ ուսանելի է նաև Լիտվական ՍՍՌ-ի օրինակը:

Մինչև 1950—1955 թվականները թռչնաբուծությունը Լիտվայի գյուղատնտեսության ամենահետամնաց ճյուղերից մեկն էր, ինչպես և երկրի շատ ռեսպուբլիկաներում և մարզերում: Կոլտնտեսություններում և սովխոզներում ածանցների միջին ձվատվությունը 70—80 հատից չէր անցնում, թռչնաբուծական մթերքների համախառն արտադրանքի ծավալը փոքր էր: Անգամ 1962 թ. կոլտնտեսություններում ու սովխոզներում հավերի միջին ձվատվությունը կազմում էր ընդամենը 89 հատ, այդ թվում սովխոզներում 110 հատ: Ձվի համախառն արտադրանքը կազմում էր 53,7 միլիոն ձու, այդ թվում պետական թռչնաբուծական տնտեսություններում ընդամենը 16,4 միլիոն հատ: Հետևողական տոհմային աշխատանքի և թռչունի ճիշտ կերակրման շնորհիվ ընդամենը երկու տարվա ընթացքում թռչնաբուծության վիճակը այդ ռեսպուբլիկայում արմատապես բարելավվեց: 1962 թ. համեմատությամբ ածանցների քանակը միայն հանրային սեկտորում աճեց 95 հազար գլխով և հասավ 700 հազարի (կլորացրած թվերով), միջին ձվատվությունը կազմեց 139 հատ, այդ թվում սովխոզներում 167 հատ, այլ կերպ ասած ընդամենը երկու տարում աճեց մոտ 50 տոկոսով: Ձվի համախառն արտադրությունը գրեթե կրկնապատկվեց և հասավ 97,1 միլիոն հատի, այդ թվում սովխոզներում 39,3 միլիոնի, 1962 թ. արտադրած 16,4 միլիոնի դիմաց (աղյուսակ 14):

Թռչնաբուծության ինտենսիվացման մի փանի արդյունքները
Լիտվական ՍՍՌ-ում

Տարիները	Ածանների միջին գլխա- քանակը կուլ- տընտեսու- թյուններում և սովխոզ- ներում	Ածանների միջին ձվատվությունը			Ձվի համախառն արտա- դրանքը (միլիոն հատ)		
		կուլտես. և սովխոզ-ում	կուլտեսու- թյուն-ում	սովխոզներում	կուլտես. և սովխոզներում	կուլտեսու- թյուն-ում	սովխոզներում
1962	603	89	82	110	53,7	37,3	16,4
1963	691	111	100	137	76,7	48,9	27,8
1964	698	139	127	162	97,1	57,8	39,3

Առաջավոր սովխոզներում 1964 թ. ածանների միջին ձվատվությունը 200-ից անցավ: «Անդլենայ» սովխոզում, օրինակ, 10 407 ածանի տարեկան միջին ձվատվությունը կազմեց 225 հատ: «Կելմե» սովխոզում 8515 ածանից միջինը ստացվեց 216 ձու, «Ստանյունայ» սովխոզում, որտեղ ածանների տարեկան միջին քանակը կազմում էր 15 515 գլուխ, յուրաքանչյուր ածանից ստացվեց միջինը 210 ձու:

Լիտվական ՍՍՌ սովխոզներում վերջին երեք տարվա ընթացքում բուծվում են լեգհորն ցեղի գծային թռչուններ, որոնք աչքի են ընկնում բարձր ձվատվությամբ:

Թռչունների մթերատվության բարձրացման վրա տոհմային-սելեկցիոն աշխատանքի դրական ներգործության մի օրինակ էլ բերենք մեր ռեսպուբլիկայից:

Էջմիածնի թռչնաբուծական ֆաբրիկայի մայրական հոտում սկսած 1956 թվից հավերի ռուսական սպիտակ ցեղի հետ միաժամանակ բուծվում են Երևանյան ցեղախմբի հավերը: Մասսայական ընտրության հետ միասին այստեղ տարվում էր նաև բնային զուգավորման և ձվատվության այլ ցուցանիշների անհատական հաշվառում: Երևանյան ցեղախումբն ունի մթերատվության հանրագտագործելի—մսաձվատու ուղղու-

Թյուն: Այնուամենայնիվ շնորհիվ ընտրության և զույգերի
 ընտրության հաջողվեց ընդամենը 3—4 տարում հավերի տա-
 րեկան միջին ձվատվությունն ավելացնել 35—40 հատով: Եթե
 1955—1956 թվականներին նրանց միջին ձվատվությունը
 կազմում էր 135—140 ձու, ապա 1959 թ. այն հասավ 175,3
 հատի, շնայած որ ածանների գլխաքանակը եռապատկվել էր:
 Ավելի քան 200 ածաններ էլիտային խմբում ունեին 180—200
 և ավելի բարձր ձվատվություն, իսկ № 1873 հավի տարեկան
 ձվատվությունը կազմեց 253 հատ, յուրաքանչյուր ձվի 61 գ
 միջին քաշով, և այդ այն դեպքում, երբ այդ թռչունը ուներ նաև
 մեծ կենդանի քաշ՝ 3,6 կգ: Անհատական ընտրության և գծա-
 յին բուծման շնորհիվ 1964 թ. նույն ֆաբրիկայում աճեցվեցին
 360 ռեկորդային ձվատվություն ունեցող հավեր: Նրանցից 21
 ածան 1964 թ. առաջին 6 ամսում տվեցին միջինը 156 ձու, 61 գ
 միջին քաշով, 128 ածանի կես տարվա ձվատվությունը կազմեց
 140 հատ, 60 գ միջին քաշով, 119 ածանի ձվատվությունը
 նույն ժամանակամիջոցում կազմեց 121 հատ նույնպես 60 գ
 միջին քաշով: Նկատի ունենալով, որ երևանյան ցեղի հավերի
 ձվատվությունը թե՛ գարնան-ամառային և թե՛ աշնան-ձմե-
 ռային ամիսներին բավականաչափ հավասար է ընթանում,
 ապա առաջին խմբի հավերի տարեկան ձվատվությունը կկազ-
 մեր ամենաքիչը 275—280 հատ, երկրորդ խմբում՝ մոտ 240—
 250 հատ, իսկ երրորդ խմբում ոչ պակաս 220—225 հատ:
 Մենք հնարավորություն չունենք բերելու այդ բարձրարժեք
 տոհմային թռչունների տարեկան ձվատվության մասին փաս-
 տացի տվյալներ, միայն այն պատճառով, որ այդ ֆաբրիկա-
 յում 1964 թվականի հուլիսի սկզբներից դադարեցվեց տոհ-
 մային հոտում ձվատվության անհատական հաշվառումը:

Բերած օրինակները համոզիչ կերպով ցույց են տալիս.
 տոհմային աշխատանքի հսկայական դերը թռչնաբուծության
 զարգացման և մթերատվության բարձրացման գործում: Զա-
 փազանցություն չի լինի ասել, որ առանց տոհմային-սե-
 լեկցիոն աշխատանքի ճիշտ կազմակերպման անհնարին է
 ստանալ ռեկորդային բարձր մթերատվություն և թռչնաբու-
 ծությունը դարձնել առավել եկամտաբեր:

ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ԼԻԱՐԺԵՔ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ ԻՆՏԵՆՍԻՎ
ՊԱՀՎԱԾՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԿԵՐԻ ԲԱԶԱՅԻ
ԱՄՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ռեսպուբլիկայի թռչնաբուծական ֆաբրիկաներում թռչունների ցածր մթերատվության հիմնական պատճառներից մեկը, գուցե և ամենագլխավորը, կերակրման ցածր մակարդակն է։ Տնտեսություններում հնարավորություններ չեն ստեղծվում կազմելու բալանսավորված, լիարժեք կերաբաժիններ սպիտակուցային (հատկապես կենդանական ծագում ունեցողի) և վիտամինային կերերի բացակայության կամ խիստ պակասի պատճառով։ Կերաբաժինները, որպես կանոն, ապահովված չեն լինում անփոխարինելի ամինաթթուներով (լիզին, մետիոնին և այլն), որի հետևանքով չի ապահովվում թռչունի լիարժեք սպիտակուցային սնուցումը և խիստ ընկնում է մթերատվությունը։

Արտասահմանյան շատ երկրներում և մեր երկրի առաջավոր տնտեսություններում բալանսավորված կերաբաժնի պրոբլեմը լուծում է համակցված կերային արդյունաբերությունը։ Արտադրվող համակցված կերերը լավ բալանսավորված են, ապահովված են բոլոր տեսակի անհրաժեշտ սննդանյութերով, հարստացուցիչներով ու խթանիչներով՝ վիտամիններով, հակաֆիտոտիկներով, անփոխարինելի սինթետիկ ամինաթթուներով, միկրոէլեմենտներով և հանքային նյութերով։ Մեր ռեսպուբլիկայում արտադրվող համակցված կերերը ոչ միայն քիչ են քանակով, այլև շատ ցածր որակի են։ Զխոսելով այլևս այն մասին, այդ կերերն արտադրելիս բոլորովին հաշվի չեն առնվում թռչունների մթերատվության ուղղությունը, հասակային և ցեղային առանձնահատկությունները։ Մեր պլանավորող ու գյուղատնտեսական օրգանները պետք է լուրջ կերպով զբաղվեն կոմբիկերային արտադրության ընդլայնման և մասնավորապես նրա որակի և լիարժեքության բարելավման հարցերով։

Արդյունաբերական թռչնաբուծության նոր ձեռնարկու-

թյունների կառուցմանը պետք է ուղեկցի, ավելի ճիշտ՝ առաջ անցնի, համակցված կերային արդյունաբերության ընդլայնումն այնպիսի ծավալով, որ լրիվ ապահովվի առաջին հերթին թռչնաբուծական ֆաբրիկաների և մասնագիտացված սովխոզների պահանջը:

Երբեք չպետք է մոռանալ, որ լիարժեք կերակրումը թռչունի մթերատվության բարձրացման գլխավոր պայմանն է, իսկ բարձր մթերատվությունը՝ ցածր ինքնարժեքի և շահութաբերության վճռական լծակներից մեկը: Կերակրման մակարդակով է պայմանավորված թռչունների ինչպես մթերատվությունը, այնպես էլ կերերի և աշխատանքի ծախսը: Հաշվարկումները ցույց են տալիս, որ լիարժեք կերակրման դեպքում 10 ձվի արտադրության վրա երկու անգամ ավելի քիչ կեր է ծախսվում, ձվի արժեքը 1,6 անգամ պակաս է լինում, քան ոչ լիարժեք կերակրման պայմաններում, շնայած որ առաջին դեպքում կերի միավորը 1,5 անգամ ավելի թանկ է լինում՝ կերաբաժնի մեջ լիարժեք սպիտակուցներ, վիտամիններ և այլ խթանիչներ մտցնելու հետևանքով: Դրանում կարելի է համոզվել 15 աղյուսակում բերված համեմատական տվյալներից:

Աղյուսակ 15

Թռչունի մթերատվության (ձվատվության), կերի և աշխատանքի ծախսման կախվածությունը կերակրման մակարդակից (ըստ Ա. Ա. Կրիկունի)

Ց ու ց ա ն ի շ ն ե ր ը	Լիարժեք կերակրում	Ոչ լիարժեք կերակրում
Հավերի տարեկան միջին ձվատվությունը (հատ)	200	110
Կերամիավորների ծախսը 10 ձվի արտադրության վրա	2,0	4,1
Կերի արժեքը 10 ձու ստանալու համար (ռուբլի)	0,3	0,49
1000 ձվի արտադրության վրա ծախսված է մարդկածամ	4,3	8,0

Այդ օրինաչափությունը դրսևորվում է նաև մսացու ճտեր արտադրելիս: 10.000 մսացու ճուտ աճեցնելիս լիարժեք կերակրման դեպքում մատղաշի պահպանումը մինչև 80 օրա-

կան հասակը կազմում է 95%, իսկ ոչ լիարժեք կերակրման դեպքում՝ 80%: Մեկ գլխի միջին կենդանի քաշը առաջին դեպքում կազմում է 1,5 կգ, իսկ երկրորդ դեպքում՝ 1,0 կգ: Մեկ կիլոգրամ կենդանի քաշի վրա ծախսվում է լիարժեք կերակրման դեպքում 3,5 կերի միավոր, իսկ ոչ լիարժեք կերակրման դեպքում 5,0 կերի միավոր: Վերջապես մեկ ցենտներ մսի ինքնարժեքը (կենդանի քաշով) կազմում է առաջին դեպքում 76 ռուբլի, իսկ երկրորդ դեպքում 100 ռուբլի կամ 24% ավել:

Ուսումնասիրությունները միաժամանակ հաստատել են, որ մեկ միավոր մթերքի արտադրության վրա ծախսվող կերի քանակը պայմանավորված է նաև թռչունի պահվածքի եղանակով: 10 ձվի արտադրության վրա ծախսվում է հատիկային կեր, սովորական-զբոսաբակային պահվածքի պայմաններում 2,5 կգ, իսկ վանդակային պահվածքի պայմաններում 1,9 կգ: Այլ խոսքով ասած, վանդակային պահվածքի դեպքում 10 ձվի արտադրության վրա ծախսվում է 24 տոկոսով ավելի պակաս հատիկային կեր, քան զբոսաբակային պահվածքի պայմաններում: Կերերի ծախսի չափը արտադրվող մթերքի վրա պայմանավորված է նաև թռչունի ցեղային առանձնահատկություններով: Օրինակ, ձվի արտադրության դեպքում ձվատու ուղղության ցեղերի հավերը 10—15% ավելի քիչ կեր են ծախսում մեկ միավոր մթերքի արտադրության վրա, քան մսա-ձվատու ցեղերը, իսկ մսա-ձվատու ուղղության ցեղերի մատչաղը մսի արտադրության դեպքում, 1 կգ քաշաճի վրա ծախսում է 20—25% ավելի քիչ կեր, քան ձվատու ուղղության հավերի մատչաղը:

Ինչպես ցույց են տալիս բերված տվյալները, ճիշտ կերակրումը հանդիսանում է ձվի և թռչունի մսի արտադրության ավելացման, ինչպես և թռչնաբուծության շահութաբերության բարձրացման հիմնական գործոններից մեկը: Միաժամանակ պետք է հաշվի առնել պահվածքի եղանակները և թռչունի ցեղային առանձնահատկությունները, կապված մթերքի այս կամ այն տեսակի արտադրության հետ: Միանգամայն պարզ է դառնում, որ կերերի քիչ ծախսումով ավելի մեծ քանակի և լավ որակի մթերք ստանալու համար անհրաժեշտ է թռչունին

ապահովել լիարժեք, բազմապիսի կերերով: Այդ կարևոր պրոբլեմի լուծման ամենառացիոնալ ուղին համակցված կերերի արտադրության ստեղծումն է:

Համակցված կերերն իրենցից ներկայացնում են զանազան կերերի խառնուրդներ, որոնք պարունակում են անհրաժեշտ սննդանյութեր, խթանիչներ և արտադրվում են՝ հաշվի առնելով թռչունների ինչպես տեսակային և ցեղային առանձնահատկությունները, այնպես էլ հասակը և մթերատվության ուղղությունը:

Համակցված կերերն արտադրվում են նախօրոք մշակված և փորձարկված բաղադրատոմսերով, որոնց հիմքում ընկած են թռչունների կերակրման գիտականորեն հիմնավորված նորմաները: Ընդ որում հաշվի է առնվում թռչունի ոչ միայն տեսակը (հավեր, հնդկահավեր, բադեր, սագեր և այլն), այլև ցեղը, հասակը, մթերատվության ուղղությունը և այլն: 16 և 17-րդ աղյուսակներում բերված են կերակրման նորմաներ տարբեր կենդանի քաշ և ձվատվություն ունեցող ածան հավերի համար զրոսաբակային և վանդակային պահվածքի պայմաններում: Կերային նորմաների հիման վրա էլ կազմվում են կերաբաժիններ (տես 18, 19 և 20 աղյուսակները), որը հնարավորություն է տալիս մի կողմից խնայողաբար և ռացիոնալ օգտագործել կերերը, իսկ մյուս կողմից ապահովել թռչուններից բարձր մթերատվության ստացում:

Քանի որ արդյունաբերական տիպի թռչնաբուծական տրնտեսություններում գլխավորապես օգտագործվում են ըստ սննդանյութերի լավ բալանավորված համակցված կերեր, ստորև բերվում են տվյալներ (ըստ Ս. Ի. Սվետնևի և Գ. Պ. Իոցյուսի), տարբեր հասակի և մթերատվության ուղղություն ունեցող թռչունների համար հանձնարարվող մի քանի համակցված կերերի կազմի մասին (աղյուսակներ 21, 22, 23, 24):

Ռուսական սպիտակ ցեղի հավերի կերակրման նորմաները վաղակային պահվածքի պայմաններում (օրական մեկ գլխին)

(մղղղղղղղ) միտոույ մմղղղղ	(%) մղղղղղղղղղղղղ	կենդանի քառը (կգ)	կերի միավոր (գ)	Մարսելի պրոտեին (գ)	Հանքային կերեր (մգ)			Վիտամիններ (միկրոգրամ)		
					կալցիում	ֆոսֆոր	նատրիում	կարոտին	A ₃	B ₃
5-6	30-40	1,5-1,6	125-133	15,5-16,5	3600-3900	1200-1300	450-500	2000-2100	2,5	300-320
6-15 15 և	40-70	1,7-1,8	150-144	17-18,5	3900-4200	1300-1400	500-550	1900-2100	2,5	200-220
ավելի	30-50	1,9-2,0	130-144	19-21	3900-4200	1300-1400	500-550	1900-2100	2,5	200-220

2 կիլոգրամ կենդանի քաշ ունեցող հավերի կերակրման նորմաները
զրոսարակային պահվածքի պայմաններում (օրական մեկ գլխին)

Մենդանյութերը	Չափի միավորը	Մեկ ածանցից ամսական ստացվում է ձու (հատ)			
		մինչև 9	10—15	16—21	21 և ավելի
Կերային միավոր	գ	130—134	135—148	149—163	164—175
Մարսելի պրո-տեին	գ	15,5—16	16—18	18—19,5	19,5—21
Կալցիում	մգ	1850	1850—2300	2300—2800	2800—3400
Ֆոսֆոր	մգ	800	800—1000	1000—1200	1200—1300
Նատրիում	մգ	500	500—600	600—700	700—800
Կարոտին	մկգ	2000	2300	2500	2700—3000
Վիտամին A ₂	մկգ	2—245	2,5—3	3—3,5	3,5—4
Կամ վիտամին A ₃	մկգ	60—75	75—90	90—105	105—120
Վիտամին B ₂	մկգ	250	300	350	400

Կերաբաժին մսացու նման (քոյլերենի) համար, որն օգտագործվում է
Ղրիմի մարզի «Կրասնիյ» մասնագիտացված բոչնաբուծական
սովխոզում (տոկոսներով)

Կերաբաժնի բաղադրիչ մասերը	Ճտերի հասակը (օրեր)		
	1—4	5—45	46—80
Եգիպտացորեն	62	54	60
Գարու ալյուր	20	—	—
Ո լ ու	—	7	7
Քուսպ արևածաղկի	—	8	8
Հիդրոլիզային շաքարասնկեր	5	10	10
Ձկան ալյուր	—	8	6
Մսոսկրային ալյուր	—	5	3
Ջրած չոր կաթ	8	2	—
Խոտալյուր	5	5	5
Կերակրի աղ	—	0,5	0,5
Ձկան յուղ	—	0,5	0,5

Մանրություն.— Մեկ տոննա համակցված կերին պետք է
ավելացնել.

D₃ վիտամինի կոնցենտրատ—500 գ, E վիտամինի կոնցենտրատ—50 գ, PP վիտամին 15 գ, B₂ վիտամին 2 գ, աղաթթվային մանգան 150 գ, աղաթթվային երկաթ 20 գ, քլորական կոբալտ 10 գ, յոդային կալիում 10 գ, ծծմբաթթվային պղինձ 10 գ, ծծմբաթթվային ցինկ 20 գ, կերային բիոմիցին 300 գ և ֆուրազոլիդոն 30 գ:

Ա Ղ Յ Ո Ւ Ս Ա Կ 19

Վերաբաժին մսացու նաեւի (բոյլեւների) համար, որը հանձնարարված է ԱՄՆ-ի Այովա նահանգի Կոլեջի կողմից

Բաղադրություն	Կերակրման սկզբին—20 ⁰ / ₀ պրոտեին		Կերակրման վերջում—18 ⁰ / ₀ պրոտեին
	№. 1	№. 2	№.
Նգիպտացորեն դեղին աղացած	499	453	590
Վարսակ աղացած	—	45	45
Ցորեն	45	45	—
Առվույտի ալյուր	23	23	23
Սոյայի շրոտ (44 ⁰ / ₀ պրոտեին)	204	227	181
Մսոսկրային ալյուր	45	23	23
Ձկան ալյուր	23	23	23
Զոր սիճուկ կամ կաթ	23	23	—
Ոսկրի ալյուր	9	18	9
Խխունջ	4,5	9	4,5
Աղ յոդի հետ	4,5	4,5	4,5
Ծծմբաթթվային մանգան	0,2	0,2	0,2
Թիրաֆլավին (B ₂ վիտամին)	9		4,5
Խոլին-քլորիդ (25 ⁰ / ₀ -անոց)	1,3	1,3	0,9
A և D ₂ վիտամինների կոնցենտրատ	0,9	0,9	0,9
D ₃ վիտամինի կոնցենտրատ (1500)	0,2	0,2	0,2
Նիացին (գ)	20	20	—
Պանտոտենյան թթու (գ)	5	5	—
Վիտամին B ₁₂ (մգ)	5	5	5

Ծանոթություն.— № 1 և 2 կերաբաժինները օգտագործում են առաջին 7 շաբաթում, № 3 կերաբաժինը—մորթելուց (կամ վաճառելուց) 2—3 շաբաթ առաջ: Նպատակահարմար է կերաբաժնի մեջ մտցնել նաև հակաբիոտիկներ—

պենիցիլին 2—4 գ, աուրեոմիցին, տերամիցին կամ բացիտրացին՝ 6—10 գ 1 անգամ և կերին: Հնարավորության դեպքում օգտակար է ավելացնել 1—3% կենդանական ճարպ և համապատասխան դեղեր կոկցիդիոզի դեմ:

Ա Ղ Յ Ո Ւ Ս Ա Կ 20

Կերարածին 2,1 կգ կենդանի քաշ ունեցող ածան հավերի համար 50% ձվատվության (ամսական 15 ձու) դեպքում

Կերերը	Մեկ գլխին գրամներով	Մարսելի պրո- տեին (գ)	Կերային միա- վոր	Հանքային նյութեր (գ)			Վիտամիններ (միկրոգրամ)		
Համակցված կեր ¹	70	7,56	77,7	14	423	208	251	69	—
Ցորեն	10	0,85	12,3	4	47	11	—	6	—
Կորեկ	10	0,86	11,5	1	28	3	60	5	—
Մլեցրած վարսակ	20	1,88	20	24	70	34	—	12	—
Եգիպտացորեն	10	0,81	12,8	1	6	3	100	10	—
Ձուկ կերային	10	2	3,2	—	—	—	—	—	—
Մսոսկրային ալյուր	8	3,86	9,2	568	344	136	24	40	—
Քուսպ	5	1,6	5,5	15	41	47	—	2	—
Սիլոս կոմբինացված ²	30	0,75	9,12	—	—	—	56	—	—
Կաթ դտած	30	1,17	4,2	42	30	15	—	90	—
Կավիճ	4	—	—	1520	—	—	—	—	—
Ձկան յուղ	1,5	—	5,7	—	—	—	180	—	3,75
Տրիկալցի ֆոսֆատ	1	—	—	321	144	—	—	—	—
Առվույտի ալյուր	8	0,88	3,6	84	17,6	36	560	80	—
Վիտամին ³	0,01	—	—	—	—	—	—	—	1,25
Ընդամենը հատիկ. կեր	120	—	—	—	—	—	—	—	—
	217,51	22,2	174,8	3294	1170,6	493	1231	314	5

1 100 գ համակցված կերի մեջ պարունակվում է 111,8 կերի միավոր, 10,87 գ մարսելի պրոտեին:

2 60% եգիպտացորենի կաթնամոմային հասունության շրջանում, 20% գազար, 20% կանաչ առվույտ:

3 1 գ պարունակում է 5000 մմ (միջազգային միավոր):

Համակցված կերեր քոռյլերենի համար (հասակ 1—30 օր)

Համակցված կերային գործոնների կողմից բաց թողնվող		Տեղական կերերից պատրաստված հարստացված ՍՎՀՀ ³	
կերերի անունը	%	կերերի անունը	%
Եգիպտացորենի ալյուր ¹	40	ՍՎՀՀ (սպիտակուցա-վիտա- մինային հանքային հա- վելում) ²	27
Գարու ալյուր	13,5	Եգիպտացորենի ալյուր	40
Ցորենի ալյուր	15	Գարու ալյուր	13,5
Քուսպ	8,1	Ցորենի ալյուր	15
Սոյայի շրոտ ³	8,1	Առվույտի կամ երեքնուկի խոտ, ալյուր արհեստա- կան շորացրած	3
Կերային խմորիչներ	4	Խխունջ	1
Ձկան ալյուր	6,8	Աղ յոդավորված	0,5
Առվույտի կամ երեքնուկի խոտալյուր	3		
Խխունջ	1		
Աղ յոդավորված	0,5		

Որակական բնութագիրը

100 կգ համակցված կերը պարունակում է (կգ)

Փոխանակային էներգիա (հազար կկալորիա)	294	Լիզին	1,05
Կերի միավոր	117	Մետիոնին	0,39
Հում պրոտեին	21,12	Ցիստին	0,28
Մարսելի պրոտեին	16,9	Տրիտրոֆան	0,24
Հում ճարպ	2,76	Արգինին	1,26
Հում թաղանթանյութ	3,87	Հարիդին	0,45
Կալցիում	1,1	Լեյցին	1,69
Ֆոսֆոր	0,9	Ֆենիլալանին	0,96
Նատրիում	0,6	Տրեոզին	0,79
		Վլին	1,10

Մեկ տոննա համակցված կերին ավելացնում են (գ)

Վիտամին A (միլ. ՄՄ ⁴)	10	Պատոտենյան թթու	10
» D ₂ (միլ ՄՄ)	30	Մծմբաթթվային մանգան	250
» B ₂ (գ)	2	Մծմբաթթվային ցինկ	10
» B ₂ (մգ)	12	Մծմբաթթվային երկաթ	100
» PP (գ)	20	Մծմբաթթվային պղինձ	10
Քլորիդի խուլին (գ)	1000	Տերամիցին	8

1 750/0-ով կարելի է փոխարինել գարու ալյուրով և 250/0 ցորենի ալյուրով:

2 500/0-ով կարող է փոխարինվել ոլոռով:

3 ՍՎՀՀ—սպիտակուցա-վիտամինային-հանքային հավելում:

4 Միջազգային միավոր:

Համակցված կերեր քոյլերենի համար (հասակը 31—80 օրական,
այսինքն մինչև անեցման վերջը)

Կոմբիկերային գործարանների կողմից բաց թողնվող		Տեղական կերերից պատրաստված և հարստացված ՍՎՀՀ-ով	
Կերերի անունը	%	Կերերի անունը	%
Եգիպտացորենի ալյուր	45	ՍՎՀՀ № 2	25
Գարու ալյուր մաղած	26,2	Եգիպտացորենի (դեղին) ալյուր	45
Քուսպ արևածաղկի	7,5	Գարու ալյուր մաղած	26,2
Սոյայի շրոտ *	7,5	Առվույտի, երեքնուկի ալյուր արհեստական եղանակով շորացրած	3,0
Կերային խմորիչներ	2,5	Խխունջ	0,5
Կետի ալյուր	2,5	Աղ յոդավորված	0,3
Մսոսկրային ալյուր	5,0		
Առվույտի երեքնուկի կամ խոտի ալյուր	3,0		
Խխունջ	0,5		
Աղ յոդավորված	0,3		

Որակական բնութագիրը

100 կգ կոմբիկերերը պարունակում է (կգ)

Փոխանակային էներգիա	289	Լիզին	0,86
Կերի միավոր	121,8	Մետիոնին	0,32
Մարսելի պրոտեին	2075	Տրիստոֆան	0,22
Հում պրոտեին	16,6	Ցիստին	0,22
Հում ճարպ	4,01	Արգինին	1,27
Հում թաղանթանյութ	3,86	Հիստիդին	0,46
Կալցիում	0,7	Լեյցին	1,55
Ֆոսֆոր	0,6	Իզոլեյցին	1,13
Նատրիում	0,4	Ֆենիլալանին	0,90
		Տրեոնին	0,62
		Վալին	1,08

մեկ առնճա կոմբիկերին ավելացնում են (կգ)

Վիտամին A (միլ ՄՄ)	10	Բետաին	130
» D ₃ » »	12	Մծմբաթթվային մանգան	250
» B ₂ (գ) »	3	Մծմբաթթվային ցինկ	10
» B ₁₂ (մգ) »	15	Ածխաթթվային կոբալտ	10
» PP (մգ) »	15	Մծմբաթթվային երկաթ	100
Պանտոտենյան թթու (մգ)	10	Մծմբաթթվային պղինձ	10
		Բիոմիցին	10

* Կարող է 100%-ով փոխարինվել բամբակի կամ այլ շրոտով:

Կերակրման եղանակները: Թռչունների կերակրման մի քանի եղանակներ կան, որոնցից առավել տարածված են հետևյալները.

Չոր համակցված կերերով կերակրումը: Այդ կերերը պարունակում են թռչունի համար բոլոր անհրաժեշտ սննդանյութերը՝ բարձր մթերատվություն ստանալու համար: Չոր համակցված կերերով կերակրելու դեպքում հնարավոր է լիովին մեքենայացնել ինչպես կերերի նախապատրաստումը, այնպես էլ կերակրումը, օգտագործելով ավտոմատ կերամաններ և ղգալի շափով կրճատել աշխատանքի ծախսումը: Միայն չոր համակցված կերերով կերակրելու դեպքում հնարավոր է դառնում կերը բաժանել թռչունին օրական մեկ անգամ կամ 2—4 օրը մեկ անգամ:

Չոր համակցված և հատիկային կերերով կերակրումը: Այդ եղանակի դեպքում հնարավոր է լինում օգտագործել նաև տնտեսությունում ստացվող հատիկային կերը: Բայց քանի որ հատիկային կերերը համեմատաբար քիչ պրոտեին և վիտամիններ են պարունակում, միաժամանակ պետք է օգտագործել այնպիսի համակցված կերեր, որոնք հարուստ լինեն պրոտեինով, վիտամիններով և հանքային նյութերով:

Չոր համակցված և գրանուլացված կերերով կամ միայն գրանուլացված կերերով կերակրումը: Այս եղանակը նպաստում է սննդարար նյութերի, վիտամինների և միկրոէլեմենտների ավելի լավ օգտագործմանը և կանխում է կերերի կորուստը կերակրման ժամանակ:

Կոմբինացված կերակրման եղանակ: Այս եղանակի դեպքում օգտագործվում են ինչպես չոր համակցված կերեր (մշտապես գտնվում են կերամաններում), այնպես էլ հատիկ, որը տրվում է առավոտյան և երեկոյան ժամերին) և փխրուն խոնավ խառնուրդ, որը պատրաստվում է համակցված կերերից, կանաչից, հյութալի կերերից և զտած կաթից: Խոնավ խառնուրդը տրվում է օրական 1—2 անգամ, այնպիսի քանակով, որ թռչունը հնարավորություն ունենա ուտել-վերջացնել, յուրաքանչյուր կերակրման ժամանակ, 30—45 րոպեի ընթացքում:

Լիարժեք համակցված կերերի բաղադրատոմս 1—30
օրական համար համար

Համակցված կերերի բաղադրիչ մասերը	%	Որակական բնութագրերը	%
Նգիպտացորենի ալյուր	40	100 կգ կոմբիկերը պարու- նակում է (կգ)	
Ցորենի ալյուր	15	Փոխանակային էներգիա	
Գարու ալյուր	13,5	1000 կկ)	293
Քուսպ արևածաղկի	8	Կերի միավոր	116,4
Սոյայի շրոտ ^a	8	Հում պրոտեին	21
Կերի խմորիչներ	4	Մարսելի պրոտեին	17
Չկան ալյուր	6,5	Հում ճարպ	4
Առվույտի կամ երեքնուկի ալյուր	3	Հում թաղանթանյութ	3,75
Խիտանշ	1,5	Կալցիում	1,4
Աղ յոդավորված	0,5	Ֆոսֆոր	0,8
		Նատրիում	0,5
Մեկ տոննա համակցված կերին ավելացնում են (գ)		Ամիաաթթուներ	
Վիտամին A (միլ ՄՄ)	10	Լիզին	1,03
» D ₂ (միլ ՄՄ)	12	Մետիոնին	0,42
» B ₂ » »	3	Ցիստին	0,29
» B ₁₂ (մգ) »	15	Տրիպտոֆան	0,26
» PP (մգ) »	15	Արգինին	1,24
Պանտոտենյան թթու	10	Հիստիդին	0,44
Քլորիդի-խոլին	1000	Լեյցին	1,67
Մծմբաթթվային մանգան	250	Իզոլեյցին	1,01
» ցինկ	10	Ֆենիլալանին	0,94
» երկաթ	100	Տրեոնին	0,77
Տերամիցին	8,0	Վալին	1,09

^a Կարելի է 500/0-ով փոխարինել բամբակի կամ այլ շրոտներով, ինչ-
պես նաև հատիկալնդեղեններով:

Լիարժեք համակցված կերերի բաղադրատոմս 31—80
օրական համար

Կոմբիկերի բաղադրիչ մասերը	%	Որակական բնութագիրը	%
Նգիպտացորենի ալյուր	40	100 կգ համակցված կերերը պարունակում է (կգ)	
Ցորենի ալյուր	15	Փոխանակային էներգիա	
Գարու ալյուր	16,5	(հազար կկ)	291
Քուսպ արևածաղկի	8	Կերի միավոր	115
Կերային խմորիչներ	4	Հում պրոտեին	18,9
Սոյայի շրոտ	4	Մարսելի պրոտեին	15,5
Զկան ալյուր	3	Հում ճարպ	3,7
Մսոսկրային ալյուր	3	Հում թաղանթանյութ	3,7
Առվույտի, երեքնուկի ալյուր		Կալցիում	1,5
արհեստական շորացրած	3	Ֆոսֆոր	0,8
խխունջ	2,5	Նատրիում	0,5
Ոսկրի ալյուր	0,5		
Աղ յոդավորված	0,5		
I տ. համակցված կերին ավելացնում են (գ)		Ամինաթթուներ	
A վիտամին (միլ ՄՄ)	10	Լիզին	1,0
D ₂ վիտամին (միլ ՄՄ)	12	Մետիոնին	0,43
B ₂ վիտամին » »	3	Ցիստին	0,28
B ₁₂ վիտամին (մգ) »	15	Տրիպտոֆան	0,27
PP վիտամին (մգ) »	15	Արգինին	1,22
Պանտոտենյան թթու	10	Հիստիդին	0,43
Խոլին-քլորիդ	1000	Լեյցին	1,61
Սծմբաթթվային մանգան	250	Իզոլեյցին	1,00
Սծմբաթթվային ցինկ	10	Ֆենիլալանին	0,95
Սծմբաթթվային երկաթ	100	Տրեոնին	0,76
Տերամիցին	8	Վալին	1,02
Սծմբաթթվային պղինձ	10		

Խոնավ խառնուրդով կերակրումը բարերար ազդեցություն է թողնում թռչունի վրա՝ հատկապես ամառվա շոգ ամիսներին, երբ նրանց ախորժակը վատանում է։ Բայց խոնավ խառնուրդի օգտագործումը որոշ դժվարություններ է հարուցում կերակրումը մեքենայացնելու տեսակետից։ Թռչունը պետք է մշտապես ապահովված լինի նաև թարմ, մաքուր ջրով։ Թռչունի կերակրումը մեծ հմտություն է պահանջում հատկապես վանդակային պահվածքի պայմաններում (թռնաբուծական ֆաբրիկաներում)։ Ուստի անհրաժեշտ է նրանց կերակրել

լիարժեք կերաբաժիններով, սխտեմատիկաբար հետևելով արդյունավետությանը, որի ցուցանիշը բարձր մթերատվությունն է (ձվատվությունը, քաշաճը): Թռչնաբուծական տնտեսությունները շատ հաճախ օգտագործում են օրինակելի կերաբաժիններ՝ տարբեր հասակի թռչունների համար:

**ԿԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԱՄՐԱՊԵՒՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ՝ ԿԱՊՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱՐԵՐԱԿԱՆ
ԹՌՉՆԱՐՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՏ**

Կերերի հայթայթման շորս հիմնական աղբյուրներ կան: Թռչունների համար, հատկապես, հիմնական աղբյուրը դատային կերահայթայթումն է՝ հատիկային և հատիկա-ընդեղեն կուլտուրաները: Երկրորդ աղբյուրը՝ բնական արոտները և խոտհարքներն են, երրորդը՝ վերամշակող արդյունաբերության զանազան մնացորդները, մասնավորապես ալրաղացային, մսա-կաթնային և ձկնարդյունաբերության, չորրորդ աղբյուրը դա կերերի արդյունաբերական արտադրությունն է, որն օգտագործում է նաև մեծ քանակի ոչ սննդային հումք՝ փայտամշակման մնացորդներ, գյուղատնտեսական կուլտուրաների թափթփուկներ, վերամշակող արդյունաբերության մնացորդներ, սինթետիկ ազոտային միացություններ, զանազան հարստացուցիչներ՝ վիտամիններ, ամինաթթուներ, անտիբիոտիկներ, միկրոէլեմենտներ և այլն:

Հայաստանում կերահայթայթման բոլոր աղբյուրներն էլ (իհարկե տարբեր չափերով) օգտագործվում են, որի շնորհիվ կերային ռեսուրսները վերջին տարիներս որոշ չափով ավելացան, բայց դեռ ներկայումս էլ անասնաբուծության կերային բալանսը բավականին լարված է: Այդ վերաբերում է, հատկապես, խտացրած և սպիտակուցային կերերին, որոնք կազմում են թռչունների կերաբաժնի հիմքը:

1964 թ. խտացրած կերերի փաստացի արտադրությունը ռեսպուբլիկայում կազմեց մոտ 270 հազար տոննա. այդ թվում՝

Եգիպտացորեն՝	10	հազար տոննա
Գարի	50	»
Համակցված կեր	140	»
Պարենային հատիկի մնացորդներ	20	հազար տոննա
Յորենի թեփ	20	»
Ալրադացային փոշի	10	»
Բամբակի քուսպ	10	»
Մսոսկրային և արյան ալյուր	10	»

Ընդամենը 270 հազար տոննա

Միայն հանրային թռչնաբուծության պահանջը 1965 թ. կկազմի մոտ 65 հազար տոննա:

Պետական պլանով նախատեսված է 1965 թ. հանրային սեկտորում հասակավոր թռչունի գլխաքանակը հասցնել 1,4 միլիոնի: Այդպիսի գլխաքանակ ունենալու համար պետք է աճեցնել ոչ պակաս 2,5 միլիոն մատղաշ: Գոյություն ունեցող կերակրման նորմաների համաձայն (տարեկան 36 կգ հասակավոր թռչուններին և 4—6 կգ մատղաշներին), խտացրած կերերի ընդհանուր պահանջը կկազմի 62 հազար տոննա, բացի այդ, միայն թռչնաբուծական ֆաբրիկաների գծով նախատեսված է աճեցնել 800 հազար մսացու ճտեր (բրոյլերներ), որի համար կպահանջվի 3 հազար տոննա խտացրած կեր: Այսպիսով, խտացրած կերերի պահանջը հանրային թռչնաբուծության համար կկազմի 65 հազար տոննա, կամ ռեսպուբլիկայում արտադրվող խտացրած կերերի մոտ 24 տոկոսը: Հաշվի առնելով, որ Հայաստանում մեծ տեսակարար կշիռ ունեն նաև անասնաբուծության մյուս ճյուղերը՝ կաթնային անասնաբուծությունը, ոչխարաբուծությունը և խոզաբուծությունը, որոնց պահանջը խտացրած կերերի նկատմամբ նույնպես աճում է, թռչնաբուծությունը խտացրած կերերով լրիվ ապահովելու համար անհրաժեշտ է լրացուցիչ միջոցառումներ մշակել խտացրած կերերի արտադրության հետագա ընդլայնման ուղղությամբ:

Ի՞նչ ուղիներ կարելի է նշել թռչնաբուծության կերի բազայի հետագա ընդլայնման համար: Ամենից առաջ դաշտա-

յին ցանքաշրջանառության մեջ պետք է նկատելի շափով բարձրացնել կերային հատիկային կուլտուրաների (եգիպտացորենի, գարու, ընդեղենների) տեսակարար կշիռը: Ռեալ հնարավորություններ կան եգիպտացորենի ցանքերը հատիկի համար հեռանկարային շրջանում ավելացնել մոտ 2 անգամ, իսկ բերքատվությունը բարձրացնել մինչև 40—45 ց մեկ հեկտարից: Ռեսպուբլիկայի հիմնական խարային (ֆուրաժային) կուլտուրայի՝ գարու ցանքատարածությունները պետք է ընդլայնվեն 2—3 անգամ: Բոլոր գոտիներում, առանց բացառության, այդ կուլտուրան բարձր բերք է տալիս: Միանգամայն ռեալ է խնդիր դնել հենց առաջիկա 2—3 տարում գարու բերքատվությունը հասցնել 20—25 ց մեկ հեկտարից: Այդ միջոցառումները հնարավորություն կտան առաջիկայում հատիկային կերի արտադրությունը հասցնել առնվազն 300—350 հազար տոննայի՝ 1959 թվականին արտադրած 74,9 հազար տոննայի դիմաց: Հայկական ՍՍՌ հողասակավության պայմաններում հատուկ ուշադրություն պիտի դարձվի կերերի արդյունաբերական արտադրության վրա: Ռեսպուբլիկայի պլանավորող օրգանների նշագծումներով կոմբինացված կերի արտադրությունը հաշվարկման շրջանի վերջում կհասցվի մինչև 200 հազար տոննայի: Թռչնաբուծության կերի բազան ամրացնելու լուրջ ռեզերվ կհանդիսանա կերային խմորիչների (դրոժների) արդյունաբերական արտադրությունը, ոչ սննդային հումքից:

Հայկական ՍՍՌ-ում նախագծված է կառուցել կերային խմորիչների գործարան 10 հազար տոննա (չոր վիճակում) արտադրողականությամբ, օգտագործելով այդ նպատակի համար, որպես հումք, գյուղատնտեսության և փայտամշակման թափթփուկները: Հետագայում կերային դրոժների արտադրությունը պետք է հասցնել 30—35 հազար տոննայի և լիովին ապահովել այդ բարձր սննդարարություն ունեցող սպիտակուցա-վիտամինային կերի պահանջը ոչ միայն թռչնաբուծության, այլև խոզաբուծության և մասամբ անասնաբուծության մյուս ճյուղերի համար: Հետագայում նպատակահարմար է իրագործել նաև ապակենտրոնացված՝ համեմատաբար փոքր կարողությամբ հիդրոլիզային խմորիչների գործարանների շի-

նարարությունը՝ տարեկան 150—300 տոննա տարողականությամբ, տեղադրելով այդպիսիք տարբեր գյուղատնտեսական գոտիներում: Այդ գործարանների համար որպես հումք կարող են օգտագործվել ծղոտը, եգիպտացորենի ցողունը, փայտի թեփը, խաղողի վերամշակման մնացորդները և այլն: Նպատակահարմար պետք է համարել նաև համակցված կերի արդյունաբերության հետագա կենտրոնացումը: Համապատասխան կարողությամբ կոմբիկերների գործարաններ պետք է ստեղծել առանձին գյուղատնտեսական գոտիներում: Դա հնարավորություն կտա նախ՝ առավել նպատակահարմար օգտագործել տեղական կերային միջոցները և երկրորդ՝ խուսափել ավելորդ փոխադրական ծախսերից: Այդպիսի գործարաններ անհրաժեշտ է կազմակերպել առաջին հերթին Շիրակի, Լոռի-Փամբակի, Զանգեզուրի և Սևանի ավազանի գոտիներում: Անհրաժեշտ է ամեն կերպ արագացնել ռեսպուբլիկայում էժան անտիբիոտիկների, ամինաթթուների (լիզին, մետիոնին) և միկրոէլեմենտների արտադրության կազմակերպումը:

Թռչնաբուծության արդյունավետությունը բարձրացնելու գործում կարևոր նշանակություն ունեն կանաչ՝ սպիտակուցավիտամինային կերերը: Կերային կուլտուրաների ցանքերի հետագա ընդլայնելու և նրանց բերքատվությունը բարձրացնելու միջոցով հեռանկարային շրջանում (1970—1975 թթ.) ռեսպուբլիկայում կարտադրվի մոտ 2—2,5 միլիոն տոննա հյութալի սպիտակուցավիտամինային կեր, կամ 4—5 անգամ ավելի, քան արտադրվել է 1958 թվականին: Դա հնարավորություն կտա թռչնաբուծության պահանջն այդ կերերի նկատմամբ լրիվ ապահովել:

Սագաբուծության և հնդկահավաբուծության զարգացման համար բնական գյուղամերձ արոտավայրերի մի զգալի մասը անհրաժեշտ է վերածել արհեստական-կուլտուրական արոտների:

Ինչպես ցույց են տվել Հայաստանում կատարված գիտական փորձերը (պրոֆեսոր Շ. Մ. Աղաբաբյանի տվյալները), արհեստական արոտավայրերի ստեղծումը 5—10 անգամ բարձրացնում է նրանց բերքատվությունը և զգալիորեն եր-

կարացնում օգտագործման ժամանակամիջոցը: Այդ էժանարոտների վրա, խտացրած կերերի փոքր ծախսումով, կարելի է բտել հարյուր հազարավոր սագեր և հնդկահավեր:

Գ Լ Ո Ւ Խ 7

ԹՈՋՈՒՆԻ ԳԼԽԱՔԱՆԱԿԻ ԵՎ ԹՈՋՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՃԻ ՄՈՏԱԿԱ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅՈՒՄ

Թռչնաբուծության կերի բազայի ամրացումը հնարավորություն է ստեղծում թռչունների գլխաքանակը և ձվի ռեմսի արտադրությունը մեծ չափերով ավելացնելու: Հայկական ՍՍՌ Միենիստրների սովետի Պետպլանի տվյալներով 1960 թ. վերջին հասակավոր թռչունների բոլոր տեսակների ընդհանուր քանակը ռեսպուբլիկայում կազմել է 3663 հազար, այդ թվում հանրային սեկտորում՝ 1023,6 հազար, 1958 թ. եղած 2350,5 հազարի դիմաց (այդ թվում հանրային սեկտորում՝ 439,7 հազար): Այս թվերը ցույց են տալիս, որ ընդամենը երկու տարվա ընթացքում մթերատու թռչունների ընդհանուր գլխաքանակը ավելացավ մոտ 60 տոկոս, իսկ հանրային սեկտորում՝ երկուս ու կես անգամ: Հետագա տարիներում գլխաքանակի աճի տեմպը դանդաղեց, բայց, այնուամենայնիվ, այն տեղի էր ունենում: 1963 թ. թռչունների գլխաքանակը տնտեսության բոլոր կատեգորիաներում հասավ 4298 հազարի, հանրային սեկտորում՝ 1163 հազարի: Միաժամանակ բարձրացավ միջին ձվատվությունը՝ 1958 թ. համեմատությամբ մոտ 35 տոկոսով:

Հայկական ՍՍՌ Պետպլանի հաշվարկումներով նախատեսվում է 1970 թվին թռչունների ընդհանուր գլխաքանակը հասցրնել 4340 հազարի, այդ թվում հանրային սեկտորում՝ 1840 հազարի: Այս նշագծումները զգալիորեն գերակատարելու ռեալ հնարավորություններ կան ռեսպուբլիկայում և հաղիվ թե նպատակահարմար է դանդաղեցնել թռչունների գլխաքա-

նակի աճի տեմպերը, մանավանդ հաշվի առնելով այն լուրջ միջոցառումները, որոնք ընդունվել են ՍՄԿՊ Կենտկոմի և ՍՍՌՄ Միևիստրների սովետի, ինչպես նաև Հայաստանի կոմպարտիայի Կենտկոմի և ռեսպուբլիկայի կառավարական օրգանների կողմից 1964 թ. սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին արդյունաբերական թռչնաբուծության զարգացման մասին: Փաստական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դեռ ցածր մակարդակի վրա է պլանավորվում առաջիկա տարիներում նաև թռչնաբուծության մթերատվության աճը: Այսպես, օրինակ, հավերի տարեկան միջին ձվատվությունը նախատեսված է 1970 թ. հասցնել ընդամենը 86 հատի, այդ թվում հանրային սեկտորում 105 հատի, այն ժամանակ, երբ դեռ 1960 թ. բոլոր կատեգորիաների տնտեսություններում միջին ձվատվությունը կազմել է 76 հատ, այդ թվում հանրային սեկտորում՝ 90 հատ: Իսկ թռչնաբուծական ֆարրիկաներում և սովխոզներում միջին ձվատվությունը նույն թվին կազմել էր 117 հատ (առանձին տնտեսություններում հասնելով 140—150 հատի): Բերած տվյալները ցույց են տալիս, որ ռեալ հնարավորություններ կան հասակավոր թռչունների ընդհանուր գլխաքանակը ռեսպուբլիկայում (տնտեսությունների բոլոր կատեգորիաներում) 1970 թ. հասցնելու մոտ 7 միլիոնի, այդ թվում ածաններինը՝ 5,5 միլիոնի (հանրային սեկտորում համապատասխանորեն՝ 2,8 միլիոնի և 2,4 միլիոնի): Միջին ձվատվությունը պետք է պլանավորել տնտեսության բոլոր կատեգորիաներում միջինը ոչ պակաս 110—115 հատ, իսկ հանրային սեկտորում՝ 135—145 հատ: Այդ դեպքում հնարավոր կլինի ձվի համախառն արտադրությունը հասցնել 660—700 միլիոնի, կամ բնակչության մեկ շնչին արտադրել 220—225 ձու:

Այդ հնարավորության ռեալության մասին է խոսում այն փաստը, որ անցած յոթնամյակում (1957—1963 թթ.) ձվի համախառն արտադրանքը ռեսպուբլիկայում գրեթե կրկնապատկվեց՝ 96 միլիոնից հասնելով 181 միլիոնի: Իսկ առաջիկայում թռչնաբուծության զարգացման համար ավելի բարենպաստ պայմաններ են ստեղծվում, քան եղել են անցած յոթնամյակում: Պետք է նկատի ունենալ, որ դեռ չօգտագործ-

ված զգալի ռեզերվներ կան: Դրանցից առավել կարևորագույն-ներն են. ա) ձվի և թռչունի մսի արտադրության կազմակերպումը արդյունաբերական բազայի վրա, բ) կոլտնտեսային թռչնաբուծական ֆերմաների խոշորացումն ու մասնագիտացումը և գ) կոլտնտեսականների, բանվորների ու ծառայողների անձնական տնտեսություններում թռչնաբուծության զարգացման խրախուսումը:

Արդեն նշել ենք, որ ռեսպուբլիկայի դիրեկտիվ օրգանների և կառավարության որոշման համաձայն 1965—1970 թթ. Հայաստանում կառուցվելու են 10 նոր խոշոր թռչնաբուծական մասնագիտացված ֆաբրիկաներ, ձվի և թռչունի մսի արտադրության ուղղությամբ, նկատելիորեն ընդլայնվելու են ներկայումս գործող ձվային ուղղության 3 ֆաբրիկաները, որոնցից յուրաքանչյուրի տարողությունը 40 հազար ածանց կհասնի 100 հազարի: Ծրագրված այդ ձեռնարկությունները լրիվ շահագործման հանձնելուց հետո ձվի համախառն արտադրանքը 1975—1976 թթ. կարելի է հասցնել 260 միլիոնի, իսկ թռչունի մսի արտադրությունը՝ 17 հազար տոննայի: Ածան հավերի գլխաքանակը միայն ձվային ուղղության ֆաբրիկաներում պետք է կազմի 1,3 միլիոն: Իհարկե ծրագրված տեմպերը չափազանց բարձր են, և դրանց իրականացումը կպահանջի բացառիկ ջանքեր և խոշոր կապիտալ ներդրումներ: Թռչնաբուծության զարգացման տեմպերի մասին ավելի կոնկրետ պատկերացում ստանալու համար բավական է բերել հետևյալ տվյալները: 1963 թ. ռեսպուբլիկայում (տնտեսության բոլոր կատեգորիաներում) արտադրվել էր 187,1 միլիոն ձու, այդ թվում հանրային սեկտորում՝ ֆաբրիկաներում, սովխոզներում և կոլտնտեսություններում 51,7 միլիոն: Թռչունի մսի արտադրանքը ֆաբրիկաներում, սովխոզներում և կոլտնտեսություններում նույն թվին կազմել էր 1,140 տ: Հետևապես, եթե նախատեսված աճը հաջողվի ապահովել, ապա 1970 թ. միայն թռչնաբուծական ֆաբրիկաները կարտադրեն 74 տոկոսով ավել ձու, քան արտադրվել էր 1963 թ. հանրային սեկտորում ամբողջությամբ վերցրած և մոտ 5 անգամ ավել թռչունի միս, քան արտադրվել էր նույն թվին հանրային սեկտորի բոլոր տնտեսություններում:

ԿՈԼՏԵՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՏՆԱՄԵՐՁ ԹՌՉՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ընդգծելով արդյունաբերական թռչնաբուծության անվիճելի առավելությունները և մասնավորապես նրա տնտեսական բարձր արդյունավետությունը, երբեք չի կարելի թերագնահատել կոլտնտեսային թռչնաբուծության նշանակությունը: Պետք է նկատի ունենալ, որ հենց ներկայումս էլ մեր ռեսպուբլիկայի կոլտնտեսային թռչնաբուծական ֆերմաներում 70 տոկոսով ավելի թռչուններ կան, քան պետական թռչնաբուծական տնտեսություններում: Կոլտնտեսությունները տալիս են հանրային սեկտորում արտադրվող ձվի 64 տոկոսը: 1965 թ. նախատեսվում է հանրային սեկտորում հասակավոր թռչունների ընդհանուր գլխաքանակը հասցնել 1,840 հազարի, այդ թվում կոլտնտեսություններում՝ մոտ 1 միլիոնի, որոնք կտան ձվի համախառն արտադրանքի 40—45 տոկոսը: Կոլտնտեսային թռչնաբուծության զարգացումը նույնպես պետք է ընթանա խոշորացման և մասնագիտացման ուղիով: Ներկայումս կոլտնտեսային ֆերմաների զգալի մասը շատ փոքր է, ոչ շահութաբեր և քիչ ապրանքային: Ռեսպուբլիկայի կոլտնտեսություններում ֆերմաների 40 տոկոսում թռչունների գլխաքանակը 1000-ից չի անցնում, իսկ 100 կոլտնտեսություններում անգամ 500 գլխի չի հասնում: Ցածր է նաև ձվատվությունը, որը 1963 թվականին կազմեց միջինը 79 ձու մեկ ածանից:

Քանի որ ի տարբերություն խոշոր արդյունաբերական թռչնաբուծության կոլտնտեսային թռչնաբուծությունը հիմնականում պետք է զարգանա սեփական կերի բազայի հիման վրա, ապա անհրաժեշտ է ճիշտ որոշել կերարտադրության հնարավորությունները: Հաշվարկումները ցույց են տալիս, որ թռչնաբուծական ֆերմաները շահութաբեր են լինում այն դեպքում, երբ ածանների գլխաքանակը 3 հազարից ավել է լինում: Շահութաբերությունը նկատելիորեն բարձրանում է միայն այն ժամանակ, երբ ածանների գլխաքանակը հասնում է 5—6 հազարի: Իսկ 6 հազար ածան (և համապատասխան քանակի մատղաշ) պահելու համար տարեկան կպահանջվի մոտ 300 տ միայն հատիկային կեր: Մեր ռեսպուբլիկայում շատ քիչ թվով

կոլտնտեսություններ կարող են իրենց բերքից այդպիսի քանակով հատիկային կեր առանձնացնել միայն թռչնաբուծության կարիքների համար: Մյուս կողմից էլ անվիճելի է այն փաստը, որ փոքր գլխաքանակով ֆերմաները իրենց չեն արդարացնում և ոչ միայն շահութաբեր չեն, այլ որպես կանոն, վնաս են հասցնում կոլտնտեսություններին: Այստեղից անհրաժեշտաբար բխում է այն հետևությունը, որ կոլտնտեսային թռչնաբուծության զարգացումը մեր ռեսպուբլիկայում պետք է ընթանա, հիմնականում, միջկոլտնտեսային, համեմատաբար խոշոր ֆերմաներ ստեղծելու ուղիով, որտեղ ածանցների գլխաքանակը կազմի 10—12 հազարից ոչ պակաս: Առավել նպատակահարմար է ունենալ 18—24 հազար ածանցներ: Այդպիսի գլխաքանակի համար բավական կլինի ունենալ 2-ից 4 լայնազարբարիտային մեքենայացված տիպային թրոչնանոցներ՝ յուրաքանչյուրը 6000—8000 ածանի տարողությամբ, համապատասխան քանակի ճտանոցներով և օժանդակ շենքերով: Այս դեպքում հնարավոր կլինի մասնագիտացնել և մեքենայացնել արտադրությունը, բարձրացնել նրա շահավետությունը և ապրանքայնությունը: Այդպիսի տնտեսությունների գլուխ արդեն պետք է կանգնեն հմուտ կազմակերպիչներ և մասնագետներ:

Անհրաժեշտ է խոշորացնել և մասնագիտացնել թռչնաբուծական ֆերմաները նաև այն սովխոզներում, որտեղ թռչնաբուծությունը տնտեսության գլխավոր ուղղությունը չէ, այլ արտադրության ճյուղերից մեկն է հանդիսանում: Հարկ կանշելու նաև բանվորների, ծառայողների և կոլտնտեսականների տնամերձ թռչնաբուծության նշանակության անտեսման միանգամայն անհիմն տենդենցները: Չպետք է մոռանալ, որ ներկա պայմաններում ձվի և թռչունի մսի արտադրության մեջ օժանդակ տնտեսությունների արտադրանքի տեսակարար կշիռը դեռ բավականին մեծ է ինչպես Միության մեջ, այնպես էլ մեր ռեսպուբլիկայում: Այդ մասին են խոսում հետևյալ թվերը. ՍՍՌՄ-ում 1960 թ. ձվի համախառն արտադրանքը բոլոր կատեգորիաների տնտեսություններում կազմեց 26,4 միլիարդ հատ, այդ թվում կոլտնտեսություններում և սովխոզներում՝ ընդամենը 5 միլիարդ հատ, կամ ամբողջ արտադրանքի մոտ

20 տոկոսը, մնացած 80 տոկոսն արտադրվել է օժանդակ տընտեսություններում: Մոտավորապես նույն հարաբերությունը գոյություն ունի Հայաստանում. 1963 թ. բոլոր կատեգորիաների տնտեսություններում ձվի համախառն արտադրանքը կազմեց 187,1 միլիոն հատ, որից կոլտնտեսություններում, սովխոզներում և ֆաբրիկաներում ընդամենը 51,7 միլիոն հատ, կամ ամբողջ արտադրանքի միայն 27,6 տոկոսը: Մնացած 72,4 տոկոսը արտադրվել է բանվորների, կոլտնտեսականների և ծառայողների օժանդակ տնտեսություններում: Մոտավորապես նույնպիսի հարաբերություն գոյություն ունի թռչունի մսի արտադրության բալանսում: Այս թվերը խոսում են այն մասին, որ օժանդակ տնտեսությունները սննդամթերքի այդ կարևոր տեսակների արտադրության մեջ ներկա պայմաններում դեռ կարևոր դեր են խաղում, և ոչ մի հիմք չկա այդ աղբյուրը թերազնահատելու: Ընդհակառակը, պետք է ամեն կերպ խրախուսել տնտեսություններում թռչունների գրլխաքանակի ավելացումը և մթերատվության բարձրացումը: Պետք է նկատի ունենալ, որ մեկ-երկու տասնյակ ընտանի թռչուններ պահելը մատչելի է գյուղական և քաղաքատիպ վայրերում ապրող գրեթե յուրաքանչյուր ընտանիքի համար, քանի որ դա չի պահանջում շատ թե քիչ նկատելի միջոցների ներդրում: Բացի այդ, թռչունների սպասարկումը շատ հեշտ է, չի խանգարում բանվոր-ծառայողներին և կոլտնտեսականներին կատարելու իրենց հիմնական հանրային աշխատանքը: Իսկ թեկուզ 12—15 ածանի առկայությունը օժանդակ տնտեսությունում ոչ միայն ապահովում է ընտանիքի պահանջը ձվի և մասամբ մսի նկատմամբ, այլև որոշ ավելցուկ է առաջացնում կոլտնտեսային շուկաներում վաճառելու համար:

Չափազանց կարևոր խնդիր է բնակչության պահանջները թռչնաբուծական մթերքների նկատմամբ բավարարելը: Գիտականորեն հիմնավորված նորմաներով բնակչության մեկ շնչին անհրաժեշտ է տարեկան 216 ձու և 12 կգ թռչունի միս: Հաշվարկումները ցույց են տալիս, որ այդ խնդիրը կատարելու համար անհրաժեշտ է առաջիկա 5—6 տարում հանրային սեկտորում ոչ պակաս երկու անգամ ավելացնել ածանների գլխաքանակը և մոտավորապես կրկնապատկել նրանց միջին ձվա-

տվությունը, միաժամանակ մտածված կերպով զուգորդելով հանրային սեկտորի արտադրությունն օժանդակ սեկտորի արտադրության հետ: Որպեսզի մեկ շնչին արտադրվի տարեկան 216 ձու (1963 թ. Հայկական ՍՍՌ-ում արտադրված 86 ձվի դիմաց), անհրաժեշտ է ձվի համախառն արտադրանքի ծավալը ռեսպուբլիկայում հասցնել 660—700 միլիոն հատի (նկատի ունենալով, որ այդ շրջանում բնակչության թիվը կհասնի մոտ 3,1 միլիոնի): Իսկ դա նշանակում է ածան հավերի գլխաքանակը հասցնել 5,5 միլիոնի (այդ թվում 2,8 միլիոն հանրային սեկտորում), միջին ձվատվությունը՝ 110—115 հատի, այդ թվում հանրային սեկտորում 135—145 հատի:

ԹՈՉՈՒՆԻ

ԳԼԽԱՔԱՆԱԿԻ ԱՃԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի գյուղատնտեսության էկոնոմիկայի և կադմակերպման գիտահետազոտական ինստիտուտի հաշվումներով հասակավոր թռչունների ընդհանուր քանակը 5,5 միլիոնի կարող է հասնել 1980 թ. ոչ շուտ, այդ թվում ածանների գլխաքանակը կկազմի 3 միլիոն 800 հազար: Ակնհայտ է, որ աճման այսպիսի տեմպերը չեն կարող ապահովել դրված խնդրի ժամանակին լուծումը: Վերը նշվեց, որ արդեն 1963 թ. ռեսպուբլիկայում թռչունների ընդհանուր գլխաքանակը կազմում էր 4298 հազար, հինգ տարում ավելանալով մոտ 2,8 միլիոնով: Եթե պահպանվի գլխաքանակի աճի թեկուզ մոտավորապես այդ տեմպը, ապա դեռ 1970 թ. ռեսպուբլիկայում այն կարող է հասնել մինչև 7 միլիոնի, այդ թվում ածանների գլխաքանակը՝ մինչև 5,5 միլիոնի: Ըստ առանձին գյուղատնտեսական գոտիների, գլխաքանակի տեղաբաշխումը և թռչնաբուծական մթերքների արտադրությունը կարող է ունենալ մոտավորապես հետևյալ պատկերը (աղյուսակ 25 և 26):

Թռչունների գլխաքանակի օրինակի անը Հայկական ՍՍՌ-ում ըստ
գյուղատնտեսական գոտիների հեռանկարային շրջանում
(տնտեսության բոլոր կատեգորիաներում)

Գյուղատնտեսական գոտիներ	Հազար գլուխ			
	1963 թ.		1970 թ.	
	հասուն թռչուն- ներ	ածան հավեր	հասուն թռչուն- ներ	ածան հավեր
Արարատյան հարթավայր	—	—	1600	1300
Արարատյան հարթավայրի նախա- լեռնային գոտի	—	—	750	600
Կենտրոնական	—	—	500	400
Սևանի ավազան	—	—	850	700
Հյուսիս-արևելյան	—	—	550	450
Լոռի-Փամբակ	—	—	150	650
Շիրակ	—	—	1100	800
Դարալաղյազ	—	—	360	200
Ջանգեղուր	—	—	500	400
Ընդամենը՝	4298	2800	7000	5500

Վիճակագրական տվյալների բացակայության պատճառով
ածանների քանակը բերվում է մոտավոր ճշտությամբ՝ հա-
սուն թռչունների ընդհանուր գլխաքանակի մոտ $\frac{2}{3}$ չափով:

Թռչունների գլխաքանակի աճին զուգընթաց զգալիորեն
կավելանա մթերատվությունը և ձվի ու մսի համախառն ար-
տադրանքը: 1963 թ. համեմատությամբ 1970 թ. վերջերին
թռչունների գլխաքանակը կաճի մոտ 63%-ով, միջին ձվա-
տվությունը՝ 45—50%-ով, ձվի արտադրությունը կավելանա
մոտ 3,5 անգամ, իսկ թռչունի մսի արտադրությունը՝ ավելի
քան 8 անգամ:

Ձվի և թռչունի մսի խոշոր արտադրողներ կդառնան Արա-
րատյան հարթավայրի և նրա նախալեռնային գոտիների թռչ-
նաբուծական ֆաբրիկաները, կոլտնտեսությունները և սով-

Թռչնաբուծության մրերենների արտադրությունը Հայկական ՍՍՌ-ում ըստ գյուղատնտեսական գոտիների հեռանկարային շրջանում՝ 1970 թ. (բոլոր կատեգորիաների տնտեսություններում)

Գյուղատնտեսական գոտիներ	Ձուլ (միլիոն հատ)	Թռչունների միս (հազար տոննա)
Արարատյան հարթավայր	210	12,0
Արարատյան հարթավայրի նախալեռնա- յին գոտի	70	3,0
Կենտրոնական	50	1,5
Սևանի ավազան	70	2,5
Հյուսիս-արևելյան	40	1,0
Լոռի-Փամբակ	85	6,0
Շիրակ	110	6,5
Դարալագյազ	45	2,0
ընդամենը՝	700	35,0

խոզները, Սևանի ավազանի, Լոռի-Փամբակի, Շիրակի, Հյուսիս-արևելյան Կենտրոնական և Զանգեզուրի գոտիների տընտեսությունները (աղյուսակ 26)։

Այդպիսիք են, ընդհանուր գծերով, թռչնաբուծության զարգացման և ձվի ու մսի արտադրության ծավալի ավելացման հեռանկարները Հայաստանում։ Բնական է, իհարկե, որ գիտության և տեխնիկայի հետագա զարգացումը և սոցիալիստական էկոնոմիկայի ընդհանուր վերելքը անհրաժեշտ ճիշտումներ կմտցնեն այդ նախանշումների մեջ։

Գ Լ Ո Ւ Խ 8

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒՄԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՏԻՊԻ ԹՌՉՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Խոշոր մասնագիտացված թռչնաբուծական տնտեսությունների գործունեության արդյունավետությունը մեծ չափով պայմանավորված է աշխատանքի ճիշտ կազմակերպումով ու

վարձատրումով: Աշխատանքի ռացիոնալ, գիտական կազմակերպումը, արտադրական պրոցեսների առաջավոր եղանակների ներդրումը, բանվորական ուժի և մեքենայացման ճիշտ տեղաբաշխումն ու օգտագործումը թռչնաբուծական մթերքների արտադրության ավելացման կարևոր պայմաններից մեկն է: Պետք է նկատի ունենալ, որ մթերքների արտադրման պրոցեսը ինտենսիվ տիպի թռչնաբուծական տնտեսություններում ընթանում է անընդմեջ՝ ամբողջ տարվա ընթացքում, որը հնարավորություն է տալիս աշխատանքի բաժանումը և մթերքների արտադրությունը կազմակերպել խորը մասնագիտացման հիման վրա, ճիշտ այնպես, ինչպես այդ արվում է արդյունաբերական ձեռնարկություններում:

Սովետական Միության բազմաթիվ խոշոր թռչնաբուծական տնտեսությունների աշխատանքի փորձի ուսումնասիրությունը հնարավորություն է տվել անելու մի շարք ընդհանրացումներ և հանձնարարություններ (Ն. Դ. Կոնդրատյուկի, Ի. Վ. Նիկոլիցկու, Հ. Տ. Բաբիչի և ուրիշների ուսումնասիրությունները), որոնց հիման վրա մշակվել են կոնկրետ դրույթներ և հրահանգներ աշխատանքի կազմակերպման և վարձատրության մասին:

Թռչնաբուծական ֆաբրիկաներում ու մասնագիտացված սովխոզներում հիմնական արտադրական միավորը հանդիսանում է ցեխը (օրինակ, վանդակային ածանցների ցեխը, մատղաշի աճեցման ցեխը, ինկուբացման ցեխը, կերերի նախապատրաստման ցեխը և այլն), իսկ կոլտնտեսային և շմասնագիտացված (թռչնաբուծության ուղղությամբ) սովխոզներում հիմնական արտադրական միավորը ֆերման է:

Ցեխերի ներսում և խոշոր ֆերմաներում կազմակերպվում են արտադրական բրիգադաներ՝ տարբեր տեսակի թռչուններ կամ հասակային խմբեր սպասարկելու համար: Բրիգադաները հանդիսանում են աշխատանքի կազմակերպման հիմնական ձևը թռչնաբուծության մեջ:

Աշխատանքի կազմակերպումը թռչնաբուծական տնտեսությունների ցեխերում, ֆերմաներում և բրիգադաներում կառուցվում է համամասնության, համաձայնեցվածության, համաչափության և անընդհատության սկզբունքի վրա: Այդ սկզբ-

բունքներից որևէ մեկի խախտումը առաջ է բերում ընդհա-
տումներ և աշխատանքի ընդհանուր ռիթմի խախտում, որն
անխուսափելիորեն տանում է դեպի աշխատանքի արտադրո-
ղականության անկում և արտադրանքի ինքնարժեքի բարձրա-
ցում:

Արտադրության ճիշտ կազմակերպումը ապահովելու հա-
մար նախօրոք մշակվում են տեխնոլոգիական գրաֆիկներ
ինչպես առանձին ցեխերի, այնպես էլ ամբողջ տնտեսության
համար, որի անխափան կատարումը պարտադիր է բոլոր աշ-
խատողների համար՝ սկսած թռչնապահից, վերջացրած ար-
տադրության ղեկավարով: Այս կապակցությամբ շատ մեծ
կարևորություն է ձեռք բերում բոլոր աշխատողների աշխա-
տանքի մասնագիտացումը: Այդ նպատակով բրիգադաների
կազմում ստեղծվում են մասնագիտացված օղակներ: Այս-
պես, օրինակ, մատղաշների վանդակային աճեցման բրիգա-
դայում առաջին հասակի ճտերին (1—20 օրական հասակը)
սպասարկում է մի օղակ, երկրորդ հասակի ճտերին (21—40
օրական)—մի ուրիշ օղակ, իսկ երրորդ հասակի ճտերին (41—
60 օրական) մի այլ օղակ: Նայած թռչունի պահվածքի և կե-
րակրման եղանակին, ինչպես նաև այդ աշխատանքի մեքենա-
յացման մակարդակին, սահմանվում են թռչունի սպասարկ-
ման նորմաներ:

Ա Ղ Յ Ո Ւ Ս Ա Կ 27

Ածան հավերի սպասարկման օրինակելի նորմաներ վանդակային պահվածքի
պայմաններում, երբ թռչունը կերակրվում է համակցված կերերով,
հատիկով և խոնավ խառնուրդով

Վանդակների տիպը և թռչունի հասակը	Մեկ թռչնա- պահի սպա- սարկման նորման (գլուխ)	1000 հավա- քած և հատ ծնված ձվի գնահատումը (ռ. կ.)
1	2	3

Վանդակներ, որոնք ունեն ջրամաններ, հո-
սող ջրով համատարած կերամաններ և
թեք հատակ, ձվի գլորվելու համար, երբ
սպասարկվում են
հետևյալ հասակի ածաններ

1	2	3
6—14 ամսական	3600	1—73
14 ամսականից բարձր	3000	2—61
Վանդակներ, առանձին ամրացրած կերա- մաններով և ջրամաններով, (հին նմու- շի), հատակը ցանցավոր է և հարթ . Երբ սպասարկվում են հետևյալ հասակի աժաններ	3000	2—07
6—14 ամսական	2500	3—13
14 ամսական և բարձր		
Վանդակները նույնն են, ինչ որ առաջին դեպքում, բայց միաժամանակ կերերը բա- ժանվում են մեքենայացման կերաբա- ժանիչների միջոցով: Երբ սպասարկվում են հետևյալ հասակի աժաններ.	5000	1—24
6—14 ամսական	4200	1—86
14 ամսականից բարձր		

Մշակված են նաև վանդակային ճտերի աճեցման սպա-
սարկման օրինակելի նորմաներ (աղյուսակ 28):

Աղյուսակ 28

Տարբեր հասակի վանդակային ճտերի աճեցման օրինակելի
նորմաներ

Ճտերի հա- սակը (օրերով)	Աճեցվող խմբերի համախառն քա- ղաճը աճեցման շրջանում (ցենտ- ներ)	Մեկ թռչնապահի սպասարկման նոր- ման (գրուխ)	Գնահատում	
			Յուրաքանչյուր 1000 կերա-օր- վա համար ա- վանսով (կոպ.)	1 ք. քաղաճի համար վերջ- նական հաշ- վարկի ժամա- նակ (նուր. կոպ.)
1—20	7	8000	30,3	6—00
21—40	11	6500	37,3	5—52
41—60	16	5000	48,5	4—26

Թռչունների գլխաքանակի ամրացումն աշխատողներին
կատարվում է՝ հաշվի առնելով շենքերի չափերը, արտադրա-
կան պրոցեսների մեքենայացման աստիճանը, պահվածքի և
կերակրման եղանակը (վանդակային, զբոսաքակային, ցան-

ցապատ հատակի վրա, վոլյեբեներում և այլն), տարբեր տեսակի թռչունների տեղադրման խտությունը ու, վերջապես, աշխատողների արտադրական որակը: Հաշվի է առնվում, իհարկե, նաև բրիգադի կազմում աշխատողների թիվը և աշխատավարձի սահմանված ֆոնդը:

Թռչնաբուծական սովխոզներում, որտեղ թռչնանոցները կառուցված են 1958 թ. նախագծերով և մեքենայացման մակարդակը ցածր է, մեկ թռչնապահին ամրացնում են տարբեր տեսակի և հասակի թռչունների հետևյալ գլխաքանակը.

Հավեր զբոսաբակային պահվածքի դեպքում	2000—2500
» վանդակային (խմբային) պահվածքի դեպքում	2000—2500
» անհատական վանդակներում պահելու դեպքում	1800—2200
Բադեր զբոսաբակային պահվածքի դեպքում	500— 600
Հնդկահավեր զբոսաբակային պահվածքի դեպքում	750— 800

Տարբեր տեսակի թռչունների մատղաշի սպասարկման նորմաները պահվածքի զանազան եղանակների դեպքում բերված են 29 աղյուսակում:

Աղյուսակ 29

Տարբեր տեսակի թռչունների մատղաշի սպասարկման նորմաները

Թռչունի տեսակը	Մատղաշը մինչև 70 օրական հասակը ընդհանուր և կլիմայավարժանոցներում	Ճտեր և հնդկահավերի մինչև 70 օրական հասակը և բադեր մինչև 30 օրական հասակը մարտկոցներում	Մատղաշը ճամբարային պահվածքի դեպքում
Ճտեր	3000	3000	2500
Բադիկներ	2000	2000	2000
Հնդկահավիկներ	800	1200	800
Սագիկներ	600	—	600

Բտման ցեխում սահմանվում են սպասարկման հետևյալ նորմաները: Հասակավոր հավեր և մատղաշ ինքնակտցահարման եղանակով բտելիս—2000 գլուխ, իսկ մեքենայական բտման ժամանակ՝ 900 գլուխ (ամրացվում է բտողին իր օգնականի հետ):

Բադեր բտելիս համապատասխանորեն՝ 2000 և 550 գլուխ, հնդկահավեր բտելիս՝ 800 և 450 գլուխ, սագեր բտելիս՝ 600 և 450 գլուխ: Երբ անհրաժեշտ է լինում տնտեսությունում տանել տոհմային-սելեկցիոն աշխատանք՝ մանրակրկիտ հաշվառումներ, հաճախակի կշռումներ, բոնիտացում և այլն, ապա ծանրաբեռնվածությունը նկատելիորեն կրճատվում է: Օրինակ տոհմային սովխոզներում, որտեղ կիրառվում է սելեկցիոն և փորձնական թռչունի պահվածքի բնային եղանակ, հաշվեառիչը սպասարկում է 500 հավ կամ բադ, 250 հնդկահավ կամ սագ: Բերված նորմաները օրինակելի են և կարող են ճշտվել՝ ելնելով տվյալ տնտեսության կոնկրետ պայմաններից և կուտակված փորձից: Առաջավոր թռչնապահները սահմանված նորմաները հաճախ գերակատարում են երեք-չորս անգամ: Օրինակ, Ղրիմի մարզի «Յուժնիյ» սովխոզում ածանների վանդակային պահվածքի պայմաններում, որտեղ արտադրական բոլոր պրոցեսները մեքենայացված են, յուրաքանչյուր թռչնապահ սպասարկում է միջին հաշվով 11.700 ածան հավ: Նույն սովխոզում զբոսաբակային պահվածքի պայմաններում (լայնգաբարիտային մեքենայացված թռչնանոցներում) յուրաքանչյուր թռչնապահ սպասարկում է 13.200 ածան հավ, միաժամանակ ապահովելով բարձր մթերատվություն: Նույն մարզի «Կրասնիյ» սովխոզում մեկ թռչնապահը սպասարկում է 20 հազար մսացու ճուտ (բրոյլերներ):

Թռչնաբուծական ֆաբրիկաների, մասնագիտացված սովխոզների և տոհմային տնտեսությունների բանվորների նյութական շահագրգռվածությունը բարձրացնելու նպատակով աշխատանքի վարձատրությունը կատարվում է տարիֆային դրույքի 125 տոկոսի հաշվով, իսկ մասնագետների և ղեկավար կազմի վարձատրությունը՝ աշխատավարձի դրույքի հիման վրա, հաշվի առնելով արտադրանքի ծավալը:

Միաժամանակ բանվորների, մասնագետների և ղեկավար

աշխատողների համար սահմանված է լրացուցիչ վարձատրու-
թյուն՝ արտադրության վերջին 2—3 տարվա միջին մակար-
դակը գերակատարելու համար, միջին ամսական աշխատա-
վարձի կամ դրույքի 4—6 տոկոսի չափով: Բացի այդ,
մթերքների արտադրության եռամսյակային պլանները գերա-
կատարելու համար (հաշվի առնելով նաև մթերքների որակը)
աշխատողներն ստանում են նաև պարգև արտադրած արտա-
պլանային մթերքների արժեքի մինչև 30 տոկոսի չափով և ուղ-
ղակի ծախսերի կրճատումից, կերերի խնայողությունից և
մթերքների պլանային ինքնարժեքի իջեցման շնորհիվ առա-
ջացած տնտեսման 50 տոկոսի չափով:

Թռչնաբուծական ֆաբրիկաների և սովխոզների աշխա-
տողներին պարգևը տրվում է տնտեսության համար սահման-
ված աշխատավարձի ֆոնդից, բայց ոչ ավելի 5 ամսվա աշ-
խատավարձից, իսկ խոպանային շրջաններում՝ 6 ամսվա աշ-
խատավարձից:

Արտադրության պլանավորումը: Աշխատանքի ճիշտ կազ-
մակերպումը և վարձատրումը անհնար է առանց արտադրու-
թյան ճիշտ պլանավորման, ընդ որում պլանավորման հիմքը
կազմում է տարեկան օպերատիվ պլանների ճիշտ զուգորդու-
մը հեռանկարային պլանների հետ: Հեռանկարային պլաննե-
րում սովորաբար, նախատեսվում են արտադրության աճը,
եթե հնարավոր է և նպատակահարմար նաև տնտեսության
ընդլայնումը, նոր ցեղի ստեղծումը, բուծվող թռչունի որակի
բարելավումը և մթերատվության բարձրացումը, տեխնոլո-
գիական նոր կատարելագործումների ներդրումը և դրանց հի-
ման վրա աշխատանքի արտադրողականության բարձրացու-
մը, ինքնարժեքի իջեցումը և այլն:

Տարեկան արտադրական-ֆինանսական պլանով որոշվում
է մթերքների արտադրության և պետական հանձնումների՝ չա-
փը, սահմանվում են առաջադրանքներ աշխատանքի, ինքնար-
ժեքի, կերերի, վառելիքի, էլեկտրաէներգիայի ծախսման ու
այլ ցուցանիշների նկատմամբ:

Պետությանը մթերքներ վաճառելու առաջադրանքի հիման
վրա թռչնաբուծական տնտեսությունները մշակում են տարե-
կան պլաններ՝ հաշվի առնելով գյուղատնտեսական թռչուննե-

րի տեսակային առանձնահատկությունները և արտադրության տեխնոլոգիան: Ձվի և մսի արտադրության պլանը մշակելիս, օրինակ, նկատի են առնվում հասակավոր թռչունների և մատղաշի շարժը ըստ ամիսների, ձվատվությունը և ձվի համախառն արտադրանքը, թռչունի քաշաճն աճեցման ու բտման ժամանակ, ինկուբացիան, թռչունի մորթը և վերամշակումը, կերային ռեսուրսները, հաշվի առնելով զանազան կերերի սննդարարությունը:

Թռչունի միջին թվաքանական պլանային գլխաքանակը որոշվում է հետևյալ ձևով. յուրաքանչյուր ամսվա սկզբին ու վերջում եղած թռչունների քանակը գումարվում է և բաժանվում 2-ի:

Ածանցների գլխաքանակի միջին ցուցանիշների գումարը ըստ ամիսների բաժանելով 12-ի, ստացվում է թռչունների միջին տարեկան գլխաքանակը:

30 աղյուսակում բերվում են մասնագիտացված թռչնաբուծական ֆաբրիկայի արտադրական գործունեության մանրամասն օրինակելի հաշվարկներ (ըստ Ն. Դ. Կոնդրատյուկի):

Տնտեսության մասշտաբով արված այսպիսի հաշվարկների հիման վրա կազմվում են համապատասխան հաշվարկումներ ըստ ցեխերի, բրիգադների և անգամ օղակների, որոնք ստանում են մթերքների արտադրության և գլխաքանակի պահպանման կոնկրետ առաջադրանքներ ըստ ամիսների, տասնօրյակների և անգամ օրերի:

Արտադրության օրինակելի հաշվարկներ 100 հազար գլուխ ածան հավ ունեցող թռչնաբուծական ֆաբրիկայում

Ցուցանիշները	Չափման միավորը	Ա Ղ Յ Ո Ւ Մ Կ Ը												Երեսմյուսյին ժամանակահատվածում
		Ա												
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
Հավերի մայրական հոտը	հազ. գլխ.	10,0	9,5	9,0	8,7	8,4	9,0	9,9	10,3	10,4	11,2	11,0	10,5	10,0
Գլխաքանակ ամսվա սկզբ.	»	—	—	—	—	1,6	1,6	1,6	1,6	1,8	1,8	—	—	10,0
Մուտք է լինելու	»	0,5	0,5	0,3	0,3	1,0	0,7	1,2	1,5	1,0	2,0	0,5	0,5	10,0
Խոտանում	»	9,7	9,2	8,8	8,5	8,6	0,4	10,1	10,3	10,8	11,1	10,7	10,2	9,8
Միջին գլխաքանակը	»	8,6	8,2	7,8	7,6	7,7	8,4	9,0	9,0	9,5	10,0	9,6	9,0	8,5
Այդ թվում ածաններ	հոտ	15	16	18	18	18	18	16	14	10	12	14	15	186
Մեկ ածանի ձվատվութի.	հազ. հոտ	129	131	140	137	138	151	144	126	95	120	134	135	1580
Զվի համախառն արտադր.	»	80	90	100	90	80	70	70	59	51	60	70	80	900
Այդ թվում ինկուբացիոն ձու	%	60	70	70	70	60	50	50	50	50	50	55	60	60
Օգտագործված է ձու ինկուբացիայի համար	հազ. հոտ	50	50	50	50	12	50	50	50	50	50	50	50	562
Դրանից սեփական ինկուբացիայի համար	հազ. հոտ	50	50	50	50	12	50	50	50	50	50	50	50	562
Ինկուբացիա	»	40	40	40	40	40	10	40	40	40	40	40	40	450
Դրված է ձու	»	50	50	50	50	12	50	50	50	50	50	50	50	562
Ինկուբացված է	»	50	50	50	50	50	12	50	50	50	50	50	50	562
Ճտահանութուն	»	40	40	40	40	40	10	40	40	40	40	40	40	450

Ցուցանիշները	Չափման միավորը	Ա Մ Ե Կ Ն Ս Ը												Երաժշտության տիպի միջոցառումներ
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
Ճտերի աճեցումը վանդակներում	հազ. գլխ.	40,0	40,0	40,0	40,0	40,0	40,0	40,0	40,0	40,0	40,0	40,0	40,0	40,0
1—30 օրական հասակը	»	40,0	40,0	40,0	40,0	40,0	40,0	40,0	40,0	40,0	40,0	40,0	40,0	450,0
Գլխաք. ամսի սկզբին	»	38,7	38,7	38,7	38,7	38,7	38,7	38,7	38,7	38,7	38,7	38,7	38,7	435,0
Կտաղցվեն 1 օրական ճտեր														
Պահպանումը														
Հանձնել.														
Վառեցների ցեխ	»	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	4,4	19,6	19,6	19,6	19,6	19,6	220,0
Աքաղաղների ցեխին	»	19,1	19,1	19,1	19,1	19,1	19,1	4,9	19,1	19,1	19,1	19,1	19,1	215,0
Գլխաք. ամսի վերջին	»	40,0	40,0	40,0	40,0	40,0	40,0	10,0	40,0	40,0	40,0	40,0	40,0	40,0
Մատղաշի աճեցումը վանդակներում	հազ. գլխ.	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6
1—60 օրական հասակում	»	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6
Գլխաք. ամսի սկզբին	»	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	220,0
Կտաղցվի 30 օրական ճուտ	»	19,1	19,1	19,1	19,1	19,1	19,1	19,1	19,1	19,1	19,1	19,1	19,1	214,0
Պահպանումը	»	17,8	17,8	17,8	17,8	17,8	17,8	17,8	17,8	17,8	17,8	17,8	17,8	200,0
Հանձնել աղվաթաղապար	»	1,3	1,3	1,3	1,3	1,3	1,3	1,3	1,3	1,3	1,3	1,3	1,3	14,0
Խոտանում միս հանձնելու	»	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6	19,6
Գլխաք. ամսվա վերջին														
Մատղաշի աճեցումը 60—150 օրական հասակում աղվաթաղապարներում														

[illegible]

Ցուցանիշները	Չափման միավորը	Ա Մ Ե Կ Մ Ը												Երաժշտական տիմոտ միջոցառում
		Ա Մ Ե Կ Մ Ը												
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
Մեկ ածանի ձվատվությունը . . .	հատ	15,4	15,4	15,4	15,4	15,4	15,4	15,4	15,4	15,4	15,4	15,4	15,4	185,0
Չվի համախառն արտադրանքը . . .	հազ. հատ	143,0	148,0	1500	1525	1555	1585	1585	1585	1585	1585	1585	1500	18500
Չվի արտադրությունը . . .	հազ. հատ	129	131	140	137	138	151	144	126	95	150	134	135	1580
Կատացվի մայրական հոտից . . .	»	1430	1480	1500	1525	1555	1585	1585	1585	1585	1585	1585	1500	18500
Վանդակային ածանները . . .														
Ընդամենը . . .		1559	1611	1640	1562	1693	1736	1729	1711	1680	1705	1719	1635	20080
Կոգտագործվի ինկուբացիայի հա- մար . . .	հազ. հատ	50	50	50	50	50	12	50	50	50	50	50	50	562
Ապրանքային ելքը . . .	»	1509	1561	1590	1612	1643	1724	1679	1661	1630	1655	1669	1585	19518
Քոչունի մսի արտադրութ. կատա- ցվեն ճտեր բառմից . . .	հազ. գլխ. տոննա	18,7	18,7	18,7	18,7	18,7	18,7	18,7	18,7	18,7	4,3	18,7	18,7	210,0
Կենդանի քաշը (1-ական կգ) . . .	հազ. գլխ. տոննա	18,7	18,7	18,7	18,7	18,7	18,7	18,7	18,7	18,7	4,3	18,7	18,7	210,0
Մատղաշներ 31—60 օրական . . .	հազ. գլխ. տոննա	1,3	1,3	1,3	1,3	1,3	1,2	1,2	1,2	0,3	1,2	1,2	1,2	14,0
Կենդանի քաշը (0,5 կգ) . . .	հազ. գլխ. տոննա	0,7	0,6	0,7	0,6	0,7	0,6	0,6	0,6	0,1	0,6	0,6	0,6	7,0
Մատղաշներ 60—150 օրակ. . .	հազ. գլխ. տոննա	2,8	2,8	2,8	2,8	2,8	2,8	2,8	2,8	2,9	2,6	2,6	1,5	32,0
Կենդանի քաշը (1,3 կգ) . . .	հազ. գլխ. տոննա	3,7	3,7	3,7	3,7	3,7	3,7	3,7	3,7	3,7	3,4	3,4	2,0	42,0
Մայրական հոտի հալիք . . .	հազ. գլխ. տոննա	0,5	0,5	0,3	0,3	1,0	0,7	1,2	1,5	2,0	2,0	0,5	0,5	10,0
Կենդանի քաշը (1,6 կգ) . . .	հազ. գլխ. տոննա	0,8	0,5	0,5	0,5	1,6	1,1	1,9	2,4	1,0	3,2	0,8	0,8	16,0
Վանդակային ածաններ . . .	հազ. գլխ. տոննա	12,5	12,5	12,5	12,5	12,5	12,5	12,5	12,5	12,5	12,5	12,5	12,5	150,0
Կենդանի քաշը (1,6-ական կգ) . . .	հազ. գլխ. տոննա	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	240,0
Կենդանի քաշով . . .	»	43,9	43,8	43,6	43,5	44,7	44,1	44,9	45,4	44,0	31,5	43,5	42,1	515,0
Ապանդային քաշով (80% և ևլ.) . . .	»	35,3	35,0	35,9	34,8	35,4	35,2	36,0	36,3	35,1	25,7	34,7	33,6	412,0

ԹՈՉՆՍ.ԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ԷԿՈՆՈՄԻԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Յուրաքանչյուր տնտեսության գործունեության արդյունավետությունը վերջին հաշվով որոշվում է նրա էկոնոմիկական ցուցանիշներով, որոնցից գլխավորներն են համարվում հետևյալ շորս ցուցանիշները.

1. Մթերքների արտադրանքը 1 ուրվու կապիտալ ներդրումների կամ հիմնական արտադրական միջոցների նկատմամբ:

Այս դեպքում տարվա ընթացքում արտադրված ամբողջ արտադրանքի արժեքը բաժանում են հիմնական միջոցների արժեքի վրա: Քանորդը ցույց է տալիս, թե 1 ուրվու հիմնական միջոցների նկատմամբ քանի ուրվու արտադրանք է արտադրվում: Օրինակ, թռչնաբուծական ֆաբրիկայի կառուցման վրա ներդրված է 5 միլիոն ուրվի, տարեկան արտադրանքը կազմում է 7,2 միլ. ուրվի: Հետևաբար, 1 ո. հիմնական միջոցների հաշվով արտադրվում է 1 ո. 44 կոպ. (7, 2: 5):

2. Կապիտալ ներդրումների ետզնման տեղությունը: Այսինքն քանի տարվա կամ ամսվա ընթացքում է ետզնվում տնտեսության կառուցման ու կահավորման (սարքավորման) վրա ծախսված միջոցները՝ արտադրանքի իրացումից ստացված շահույթի հաշվին:

Այդ ցուցանիշը որոշելու համար կապիտալ ներդրումների գումարը բաժանում են մեկ տարում ստացված մաքուր շահույթի վրա:

Օրինակ, 250 հազար ածան հավի տարողությամբ թռչնաբուծական ֆաբրիկայի կառուցման և կահավորման վրա ներկայումս ծախսվում է 5 միլիոն ուրվի: Այդպիսի ֆաբրիկան տարեկան արտադրում է 7,2 միլիոն ուրվու ընդհանուր արժեքով արտադրանք, որի ինքնարժեքը կազմում է 3,4 միլիոն ուրվի, հետևաբար մաքուր շահույթը կազմում է 3,8 միլիոն ուրվի: 5 միլիոնը : 3,8 միլիոնի վրա = 1,3: Այլ կերպ ասած, այդ ֆաբրիկայի կառուցման վրա ծախսված կապիտալ ներդրումները ետ են գնվում 1,3 տարում, կամ մեկ տարի 4 ամսում: Եթե մեկ տարում ստացվող մաքուր շահույթը կազմեց

ասենք, 3 միլիոն ռուբլի, ապա կապիտալ ներդրումների ետ-
գրնման համար կապահանջվեն 1,7 տարի կամ 1 տարի 8 ամիս:

3. Արտադրության շահութաբերությունը: Այդ ցուցանիշը
որոշվում է տնտեսութունում ստացված մաքուր շահույթի և
արտադրանքի ինքնարժեքի հարաբերությամբ: Որքան ցածր
է արտադրանքի ինքնարժեքը, այնքան ավելի բարձր է լինում
շահութաբերությունը և ընդհակառակը: Եթե ասենք տնտեսու-
թյան տարեկան արտադրանքի ընդհանուր արժեքը 3 միլիոն
ռուբլի է, իսկ մաքուր շահույթը՝ 1 միլիոն, նշանակում է շա-
հութաբերությունը կկազմի 33,3 տոկոս. եթե մաքուր շահույ-
թը կազմեն 1,5 միլիոն ռուբլի, ապա շահութաբերությունը
կկազմեն 50 տոկոս, իսկ եթե շահույթը կազմեն միայն 750
հազար ռուբլի, ապա շահութաբերությունը կկազմեն ընդամենը
25 տոկոս:

4. Աշխատանքի արտադրողականությունը: Որոշվում է մեկ
միջին տարեկան աշխատողի ամբողջ արտադրանքի քանակով
արժեքային արտահայտությամբ (ներառյալ բանվորները,
ծառայողները, կրտսեր սպասարկող կազմը, աշակերտները,
մասնագետները և տնտեսության ղեկավար աշխատողները):

Վանդակային ածանցների ցեխերում հաճախ հաշվարկում
են նաև 1 քառ. մետր արտադրական տարածությունից ստաց-
վող ձվի քանակը:

Բանվորական օրվա կարգը: Աշխատանքի ճիշտ կազմա-
կերպման և արդյունավետության կարևոր էլեմենտներից մեկն
է բանվորական օրվա հստակ կարգը, որը կազմում է գլխավոր
մասնագետը և հաստատվում տնտեսության ղեկավարի կող-
մից: Սահմանված կարգի խստիվ կատարումը պարտադիր է
բոլոր աշխատողների համար:

Բանվորական օրվա կարգի նպատակն է՝ ապահովել թրո-
շունի ժամանակին կերակրումը, ջուր տալը, շենքերի և մյուս
կահույքի մաքրումը, շենքի օդափոխումը, հիվանդ և թույլ
թռչունների առանձնացումը և հատուկ խնամքը նրանց նկատ-
մամբ, ձվի հավաքումը, հաշվառումը, գրանցումը և այլն:
Ճիշտ կազմած օրակարգը ապահովում է աշխատանքի հեր-
թականությունը, նպաստում է թռչունների մթերատվության
բարձրացմանը և անկումների կանխմանը:

Աշխատանքի սկիզբը և վերջը որոշ շափով պայմանավորվում է տվյալ վայրի աշխարհագրական դիրքով, լուսային օրվա տևողությամբ, կլիմայական պայմաններով ու տարվա սեզոնով:

Հայաստանի թռչնաբուծական ֆաբրիկաներում կարելի է հանձնարարել հետևյալ օրինակելի օրվա կարգը՝ վանդակային ածանների ցեխում:

Առաջին կերակրումը խառնուրդով ժամը 7-ից 7—20ր.	
Թույլ և հիվանդ թռչունի առանձնացումը և հանձնումը	ժամը 7—20 ր.—7—50 ր.
Վանդակների մաքրումը և շենքի օդափոխումը	ժամը 7—50 ր.—8—30 ր.
Ընդմիջում նախաճաշի	ժամը 8—30 ր. ժ.10—00
Երկրորդ կերակրումը	ժամը 10-ից ժ. 10—20 ր.
Զվի հավաքումը	ժամը 10—20 ր.—10—40 ր.
Հյութալի կերերի բաժանումը	ժամը 10—40 ր. ժ. 11—00
Չոր խառնուրդի բաժանումը	ժամը 11-ից ժ. 11—20 ր.
Զվի հավաքումը	ժամը 11—20-ից 11—50 ր.
Խառնուրդով երրորդ կերակրումը	ժամը 11—50-ից 12—10 ր.
Ընդմիջում ճաշվա	ժամը 12—10-ից 15—10 ր.
Խոնավ խառնուրդի բաժանումը	ժամը 15—10-ից 15—30 ր.
Զվի հավաքումը	ժամը 15—30-ից 15—50 ր.
Շենքի և վանդակների մաքրումը	ժամը 15—50-ից 16—20 ր.
Հանգստի ընդմիջում	ժամը 16—20-ից ժ. 18—20 ր.
Զվի հավաքումը և հանձնումը	ժամը 18—20-ից 19—40 ր.
Թույլ թռչունի ընտրություն	ժամը 19—40-ից 20—00
Ցեխի հանձնումը գիշերային հերթապահին	ժամը 20-ին:

Գրքույկում բերված փաստական տվյալները համոզիչ կերպով ցույց են տալիս, որ թռչնաբուծության ինտենսիվացման և մասնագիտացման ամենակատարյալ եղանակը ներկա էտապում թռչնաբուծական մթերքների արտադրության կազմ-

մակերպումն է արդյունաբերական եղանակով թռչնաբուծական ֆաբրիկաներում և մասնագիտացված սովխոզներում: Այդ առաջավոր եղանակի առավելությունները և տնտեսական արդյունավետությունը հաստատված է ինչպես արտասահմանյան երկրների փորձով, այնպես էլ Սովետական Միության մի շարք առաջավոր տնտեսությունների արտադրական գործունեությամբ: Թռչնաբուծության ինտենսիվ եղանակների կիրառումը իրեն լիովին կարգարացնի նաև Հայաստանի պայմաններում: Այն, ինչ արված է մեզ մոտ՝ Հայկական ՍՍՌ-ում անցած տասնամյակում, պետք է դիտել, որպես մեծ գործի սկիզբ՝ «նախնական կուտակում»: Այդ ժամանակամիջոցում աճեցին բավական թվով մասնագիտական, արտադրական և գիտական կադրեր: Արդյունաբերական թռչնաբուծության զարգացման և առհասարակ թռչնաբուծության ինտենսիվացման նոր էտապ է թևակոխում մեր ռեսպուբլիկան այժմ: Առաջիկա 5—6 տարիներն այդ տեսակետից կունենան վճռական նշանակություն: Այդ տարիների ընթացքում, պետք է լուծվեն այնպիսի արմատական խնդիրներ, ինչպիսիք են.

1) Համակցված կերային արդյունաբերության զգալի ընդլայնումը

2) Նոր խոշոր մասնագիտացված տնտեսությունների ստեղծումը և եղածների ընդլայնումը

3) Արտադրական պրոցեսների լայն մեքենայացումը, ավտոմատացումը և հետագա կատարելագործումը

4) Մթերատվության խիստ բարձրացումը (ձվատվությունը պետք է գրեթե կրկնապատկվի և հասնի միջինը 200 հատի), մնացու ճտերի քաշաճը պետք է ավելանա 50—60%-ով՝ 75—80 օրական հասակում. հասնելով 1,5—1,7 կգ-ի 2,5—3,0 կերի միավորի ծախսումով

5) Տնտեսությունների շահութաբերության նկատելի բարձրացումը

6) Թռչնաբուծության բնագավառում աշխատող մասնագիտական և մասնագիտական կադրերի արտադրական որակի բարձրացումը

7) Գիտական հետազոտությունների ընդլայնումն ու

խորացումը, գիտության և արտադրության համագործակցության ամեն կերպ ամրապնդումը և այլն:

Համապատասխան գլխում հարկ համարեցինք ընդգծել, որ մեր ռեսպուբլիկայում 1965—1970 թթ. ընթացքում նախատեսված թռչնաբուծության զարգացման ու մթերքների արտադրության աճի տեմպերը շատ բարձր են և կպահանջեն ուժերի բացառիկ լարում, շատ համառ աշխատանք այդ տեմպերը ապահովելու և նախատեսված պլանային առաջադրանքները կատարելու համար: Շատ հնարավոր է, որ այդ առաջադրանքները կճշտվեն՝ ելնելով կոնկրետ իրադրությունից, կուտակված նոր փորձից, գիտության նվաճումներից: Բայց անվիճելի է, որ նախատեսված նոր մասնագիտացված տնտեսությունների զգալի մասի կառուցումն արդեն սկսված է, 1966 թվականին կավարտվի ներկայումս գործող երեք ֆարիկաների ընդլայնումը, որի հետևանքով նրանց արտադրական հզորությունը կավելանա 2,5 անգամ: Աստիճանաբար ընդլայնվում է նաև կոմբիկերային արդյունաբերությունը:

Այսպիսով, գործն արդեն սկսված է և ընդունված ծրագիրը կենսագործման պրոցեսումն է:

Այդ ճանապարհին քիչ դժվարություններ չկան: Ոչ միշտ են ժամանակին կատարում իրենց պարտականությունները շինարարական կազմակերպությունները, տնտեսությունների ղեկավարների մոտ հաճախ պակասում է օպերատիվությունը և հետևողականությունը նախատեսված պլանները կատարելու գործում: Բայց այդ թերությունները հաղթահարելի են և կհաղթահարվեն:

Նորից ենք հարկ համարում նշել, որ, առաջնակարգ նշանակություն տալով արդյունաբերական թռչնաբուծությանը՝ պետական տնտեսություններին, երբեք չպետք է թերազնահատել նաև կոլտնտեսային և տնամերձ թռչնաբուծությունը, որոնց տեսակարար կշիռը թռչնաբուծական մթերքների համախառն արտադրանքի մեջ դեռ բավականին բարձր է:

Մենք ապրում ենք տնտեսության մասնագիտացման դարում: Թռչնաբուծության ինտենսիվացումը և խորը մասնագիտացումը մեր ռեսպուբլիկայի գյուղատնտեսության արտադրության այդ ճյուղի զարգացման մայրուղին է և այդ ուղիով էլ պետք է ընթանա նրա հետագա վերելքը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Գլուխ 1

Թռչնաբուծության ինտենսիվացման ժողովրդատնտեսական նշանակությունը	11
Թռչնաբուծության ինտենսիվացման մի քանի առանձնահատկությունները	15

Գլուխ 2

Արդյունաբերական թռչնաբուծության կազմակերպման և էկոնոմիկայի հարցերը	17
Թռչնաբուծության զարգացման կազմակերպման ձևերը	19

Գլուխ 3

Թռչնաբուծության մասնագիտացման տեղաբաշխման հարցերը Հայկական ՍՍՌ-ում	27
Թռչնաբուծական տնտեսությունների շափի ճիշտ ընտրելու նշանակությունը	37
Թռչունների պահվածքի ինտենսիվ հղանակները տարբեր բնակլիմայական և տնտեսական գոտիներում	39

Գլուխ 4

Թռչունների պահվածքի ինտենսիվ հղանակների արդյունավետությունը Հայաստանի պայմաններում	42
Պահվածքի վանդակային հղանակը թռչնաբուծական ֆաբրիկայում	42
Հավերին խորը, երկար ժամանակ շփոխվող ցամաքի վրա պահելու արդյունավետությունը	47
Զվի քիմիական կազմը, սննդարարությունը հավերի վանդակային և զբոսաբակային պահվածքի պայմաններում	
Արդյունաբերական թռչնաբուծության զարգացման հետադա հեռանկարները Հայաստանում	

Գլուխ 5

Տոհմային աշխատանքի նշանակությունն ինտենսիվ թռչնաբուծության մեջ 66

Գլուխ 6

Թռչունների լիարժեք կերակրումը ինտենսիվ պահվածքի պայմաններում և կերի բաղալի ամրացման ուղիները 77

Կերի բաղալի ամրապնդման աղբյուրները և հեռանկարները կապված արդյունաբերական թռչնաբուծության զարգացման հետ 90

Գլուխ 7

Թռչունի գլխաքանակի և թռչնաբուծական մթերքի արտադրության աճի մոտակա հեռանկարները ռեսպուբլիկայում 94

Կոլտնտեսային և տնամերձ թռչնաբուծության զարգացումն հեռանկարները 97

Թռչունի գլխաքանակի աճի հնարավորությունները 100

Գլուխ 8

Աշխատանքի կազմակերպումը և վարձատրումն արդյունաբերական տիպի թռչնաբուծական տնտեսություններում 102

Թռչնաբուծական տնտեսությունների գործունեությունը դնահատելու էկոնոմիկական ցուցանիշները 114

Խմբագիր՝ Ա. Ա. Տիտանյան, գեղ. խմբագիր՝ Վ. Ք. Մանդակունի, տեխ. խմբագիր՝ Կ. Դ. Սարգսյան, վերստուգող սրբագրիչ՝ Է. Պ. Պողոսյան

ՎՅ 10079 Գատվեր 2896 Տիրաժ 1500

Հանձնված է արտադրության 21/X 1965 թ.:

Ստորագրված է տպագրության 22/XII 1965 թ.:

Թուղթ՝ $84 \times 108 \frac{1}{32}$, տպագր. 7,5 մ. = 0,15 պայմ. մ.,

հրատ. 5,6 մ.:

Գինը՝ 14 կոպ.

Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության № 6 տպարան,

Երևան, Թումանյանի պող. 51:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220037867

A ^{II}
37867

ԳԻՆԸ 14 ԿՈՊ.